

791

1910

845
4-65

7.7.2003

Ժ Ի Ի Լ Կ Է ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
ԳԵՊԻ ԵՐԿՐԻՍԱԿԵԴՐՈՆԸ



845
4-56

1978

ՅԳԱԳՐ. ԶՍԻՆԷ Ն ՊԵՐՊԵՐՍԱՆ
1910

Printed in Turkey

25

ԱՋԱՏ ԻՐԱՏՆԵԱՇԱՐ, ԹԻՒ 30

84 15

Ժ Ի Ի Լ Վ Է Ր Ն

4-46 Այ

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ԴԷՊՒ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒԱԾ)

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԶԱՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վ. ՆԻ Պ. ԶԱՐԳԱՐԵԱՆ ԵՂՐԱՑՐԵՆՐՈՒ

Կ. ՊՈԼԻՍ, Զախախեղաբ, քիւ 24 - 26



1910

ՏՊԱԳՐ. ԶԱՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1910

ԻՐԱՏՆԵԱՇԱՐ
ՓԻՆՔՈՅՑԵԱՆ ԵՂՐԱՑ
ԿԱԼՍՈՍ ԲՈՒԼԷ ՔԱՐՈՒ 693

37488 uchi

88

Printed In Turkey



ՅԻՒԼ ԱԷԲՆ




(909
39) 7

21105-60



ՎԵՐՈՒՄԻ ԱՐԿԻՎԱԶ
ՓԻՇՔՈՅՅՆԱՆ ԵՂՔԻ
ՍԱԼԱՍ ԵՄԷԷ ՏՄԵՒ ԵՍ

ԴԵՊՒ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ



Ա.

1863 Մայիս 24ին կերակի օր մը, ուսուցչապետ Լիտենպրօք
աճապարանքով տուն կը դառնար, որ Համպուրկի հին թաղերէն
մէկուն՝ Քէօնիկղկրասի մէջ 19 թիւը կը կրէր-

Մարթա սպասուհին կարծեց թէ շատ ուշ մնացեր է, սրով-
հետեւ կերակուրը դեռ եփ ելած չէր:

«Աղէ՛կ, ըսի ինքնիբնէս, եթէ հօրեղբայրս անօթի է, աղուօր
փոթորիկ մը պիտի հանէ. այս մարդը համբերութեան ի՞նչ ըլլալը
չգիտեր:

— Պ. Լիտենպրօքն է եկողը, հարցուց Մարթա՝ սպշած,
ճաշասրահին դուռը կէս մը բանալով:

— Այո՛, Մարթա, բայց յանցանքը քուկդ չէ եթէ կերակուրը
եփած չէ, ժամը երկուքը շիկայ:

— Ինչո՞ւ համար ասանկ կանուխ տուն կը դառնայ կոր:

— Ատ իրեն հարցնելու է:

— Ահա՛ եկաւ, ես կը փախչիմ, Պ. Ա.քսէլ, դուք խօսք հաս-
կըցուցէք իրեն:

Եւ Մարթա խահանոց մտաւ: Մինակ մնացի: Ուսուցչապետ-
ներուն ամէնէն ցասկոտին խօսք հասկցնելը դիւրին բան չէ ինծի
պէս վարանոտ բնաւորութիւն ունեցող մէկու մը համար, ուստի
կը պատրաստուէի վերի խցիկի քաշուել՝ երբ փողոցին դուռը
բացուեցաւ, խոշոր ոտքերու տակ սանդուղը ճանչեց եւ վարպետը



8940 1000

ճաշարահէն անցնելով աշխատութեան սենեակը վազեց զնաց: Այս արագ անցքի միջոցին անկիւն մը նետելով կաղնեքեկ գաւազանը: սեղանին վրայ գնելով զլլխարիլը և եղբօրորդիին ուղղելով սա հրամանը:

«Ա.քսէ՛լ, հե՛տս եկուր»:

Դեռ տեղէն շարժելու ժամանակ չունեցած՝ ուսուցչապետը անհամբեր ձայնով մը գոչեց. «Է՛ ուրեմն, տակաւին հո՞տ ես»:

Ահարկու վարպետիս սենեակը վազեցի:

Օթթօ Լիտէնպրօք չար մարդ մը չէր, բայց եթէ փոփոխութիւն մը չի կրէր՝ ինչ որ անհաւանական է, ամենէարտառոց մարդուն մորթին մէջ մեռնելու դատապարտուած էր: Եօհաննէօմի մէջ դասախօս էր և հանքաբանութեան դասընթացք մը կ'ընէր, որու միջոցին կանոնաւորաբար մէկ երկու անգամ կը բարկանար. ո՛չ թէ յարատեւող աշակերտներ ունենալ ջանալով, կամ անոնց ըրած ուշադրութեան հոգ տանելով և կամ յաջողակ սաներ հասցընելու տենչով, ո՛չ. այս կէտերը բնաւ չէին զբաղեցնէր զայն: Ինք կը դասախօսէր «ենթակայօրէն», ինչպէս կ'ըսեն գերման փիլիսոփաները, իրեն համար և ո՛չ թէ ուրիշին: Եսամուլ գիտուն մըն էր, գիտութեան հոր մը որու ճախարակը կը ճռնչէր՝ երբ քիչ մը բան քաշել ուղղէին. մէկ խօսքով ազահ մըն էր:

Ասանկ քանի մը դասախօսներ կան Գերմանիոյ մէջ:

Դժբաղդաբար հօրեղբայրս արտասանութեան մասին մեծ գժուարութիւններ կը կրէր, մանաւանդ դասախօսութեան միջոցին, ինչ որ ցաւալի պակաս մըն է ուսուցչապետի մը համար: Արգարեւ, Եօհաննէօմի մէջ, ապացոյցներ տալու ժամանակ յանկարծ կանկ կ'առնէր, կը կռուէր հետո բառի մը դէմ որ չէր ուզեր շրթունքներէն սահիլ. անանկ բառ մը, որ կ'ընդգիմանայ, կ'ուռճանայ և հայհուռի մը ձեւին տակ դուրս կը թռի: Ահա՛ բարկանալուն պատճառը այս էր:

Եկու տես որ հանքաբանութեան մէջ ալ շատ կայ գժուարահնչելի, կէս-լատիներէն կէս-յունարէն, խորտուբորտ անուանումներ որոնք բանաստեղծի մը շրթունքը պիտի վերաւորէին: Հեռի՛ ինէ այս գիտութեան վրայ գէշ խօսիլ, բայց սա բառերուն հանդիպած ժամանակ՝ տարանկիւնանիստ բիւրեղ, ըէթինասֆալթ

ուետին, կէլէնիթ, ֆանկագիթ, կապարի մօլիպտաթ, մանկանէզիթիւնկղթաթ և զիրքոնի թիթանիաթ, որ դիւրաթեք լեզուն չի սխալիր:

Քաղաքին մէջ ամէն մարդ գիտէր հօրեղբօրս այս ներելի պակասութիւնը և չարաչար կը գործածէր. ամէնէն դժուար կէտերուն մէջ ուշադրութիւն կ'ընէին, դասախօսը կը բարկանար և իրենք կը խնդային. ասիկա աղուոր բան մը չէր, նոյն իսկ գերմանացիի մը համար: Եւ եթէ Լիտէնպրօքի դասընթացքին ամէնէն աւելի ունկնդիր գտնուէր, քանին՛րը արդեօք կուզային դասախօսին աղուորիկ բարկութիւնովը զուարճանալու:

Ինչ որ ալ ըլլայ, հօրեղբայրս ճշմարիտ գիտուն մըն էր. թէեւ քարի նմոյշները զննած ժամանակ շատերը կը կոտորտէր, բայց և այնպէս երկրաբանի հանճարին հետ հանքագէտի աչքն ալ ունէր: Մուրճովը, սրածայր պողպատովը, մագնիսացած ասեղովը, փողակովը և բորակական թթուի շիշովը զինուած՝ ամենազօրաւոր մարդ մըն էր: Հանածոյի մը տեսքին, կոտորուածքին, կարծրութեանը, հալումին, հնչականութեանը, հոտին, համին նայելով՝ անմիջապէս՝ գիտութեան ընդունած վեց հարիւր տեսակներուն սէջ կը դասակարգէր:

Ասով՝ Լիտէնպրօքի անունը նշանաւոր եղած էր բոլոր ժիմնադներուն և գիտական ժողովներուն մէջ: Պ. Պ. Տալի, Հուսպօլտ, և Ֆրանքլին ու Սապին հրամանատարները զանց չէին ըրած իրեն այցելութիւն մը տալու՝ Համպուրկէ անցած ատեն: Պ. Պ. Պէքըրէլ, Էպէլմէն, Պրիէսթէր, Ժ. Տիւմա, Միլն-Էտվարտըս, Սէնթ-Քլէր-Տըվիլ, իր կարծիքը կը հարցնէին բնալուծական ամէնէն խրթին կէտերուն վրայ: Խիստ կարեւոր գիւտերով հարստացուցած էր այս գիտութիւնը, և 1853ին՝ Լայքցիկի մէջ հրատարակած էր «Բարձրագոյն Բիւրեղագիտութիւն» անուն ահագին քառածալ հատոր մը, զատ տպուած տախտակներով հանդերձ, այլ սակայն ծախքը չկրցաւ հանել: Ատոր վրայ աւելցուցէք նաեւ թէ, Ռուսիոյ գեսպան Պ. Սթրիոճ իր հանքաբանական հրօշակաւոր հաւաքածոյին հսկողութիւնը հօրեղբօրս յանձնած էր:

Ահա՛ զիս անհամբերութեամբ կանչող մարդը: Երեւակայեցէք երկայնահասակ. նիհար մէկը, քարի պէս առողջ. խարտեաչ մա-

գերով որոնք զինքը հազիւ քառասուն տարեկան կը ցուցնեն՝ թէեւ յիսունը անցուկ էր. խոշոր աչքեր, որոնք կը դարձաբլապէս անհազին ակնոցներու ետին. նուրբ ու սրածայր քիթ մը՝ դանակի երկաթին նման, որու համար չար լեզուներ կ'ըսէին թէ մագնիսացած է և երկաթի փոշի կը քաշէ, մինչդեռ ճիշդը քթախոտ միայն կը քաշէր, և այն ալ՝ որչա՛փ շատ:

Եթէ աւելցնեմ թէ հորեղբայրս չափազիտաբար կէս-ձողաչափ երկար քայլեր կ'առնէր, և քալած ժամանակը բուռնցքները կը սեղմէր, ինչ որ նշան է անհամբոյր բնաւորութեան, կ'ըմբռնէք թէ իր ընկերութիւնը զուարճալի բան մը չէր:

Քէօնիկզկրասի տան մէջ կը բնակէինք. կէսը փայտ՝ կէսը աղիւսէ բնակարան մը որ Համպուրկի ամէնէն հին թաղին մէջէն անցնող ջրանցներուն վրայ կը նայէր, և որ 42ի հրդեհը խնայած էր:

Հինկեկ տունը քիչ մը ծռած էր և ուռած փորը դուրս կ'երկրնցնէր. տանիքը ականջի վրայ ծռած գլխարկի ձեւն առած էր, գիծերուն ուղղութիւնը շատոնց կորսուած էին, բայց խնդիրն ան է որ դեռ կանգուն կը մնար, ի շնորհս անհազին կնձնի մը, որ ճակատէն կը բռնէր դայն և գարնան մէջ ալ ծաղկազարգ ծիւրերը պատուհաններէն ներս կ'երկարէր:

Հորեղբայրս՝ գերման դասախօսներու բաղդատմամբ՝ հարուստ էր: Նստած տուներնիս իրեն կը պատկանէր. պարունակեալն էր՝ իր սանուհին հրաիւպէն. տասնըեօթը տարեկան Վիրլանտուհի մը, Մարթա սպասուհին և ես, իր եղբորորդին՝ որ որք մնացած ըլլալով, փորձերուն օգնական պատրաստիչն եղայ:

Կը խստատվանիմ որ շատ սիրեցի երկրաբանութեան գիտութիւնը. երակներուս մէջ հանքագէտի արիւն կար, և չէի ձանձրանար թանկագին ժայռի կտորներուս մէջ մինակ մնալով:

Քէօնիկզկրասի տնակին մէջ երջանիկ կեանք մը կը վարէի, հակառակ տանտիրոջ անհամբոյր բնաւորութեան, որովհետեւ իր բիրտ ձեւերուն հետ մէկտեղ զիս ալ քիչ չէր սիրեր: Մինակ այս մարդը սպասել չէր գիտեր և բնութենէն աւելի աճապարող էր:

Երբ աշնան, որահին յախճապակեայ ծաղկամաններուն մէջ յափրուկի կամ ուրիշ ծաղիկի բոյսեր կը տնկէր, ամէն առտու

կ'երթար անրեւներէն կը քաշէր որպէս զի աւելի շուտ մեծնան: Ասանկ բնաւորութիւն ունեցող մէկուն դէմ անմիջապէս հնազանդելու է: Ես ալ իր սենեակը վազեցի:

Ք.

Այս սենակը ճշմարիտ թանգարան մըն էր: Հանքային աշխարհի բոլոր նմոյշները դասակարգուած և թուագրուած՝ ամենամեծ խնամքով պահուած էին երեք խումբերու բաժնուած. բընակող, մետաղական և քարային հանածոներ,

Շատ աղէկ կը ճանչնայի երկրաբանական գիտութեան այս մասը մունր ներկայացուցիչները. քանի՜ քանի՜ անգամներ արդեօք, տարեկից ընկերներու հետ զուարճանալով ժամանակ կորսնցնելու տեղ կուզայի կը մտքըի այս գրաքարերը, ամխաքարերը, հանքածուխները, փայտաքարերը, կիզահողերը: Հապա կուպրը, ռետինները, գործարանաւոր թթուները, որու վրայ փոշիի հատիկ մը նստելու չէր: Հապա մետաղները, երկաթէն սկսեալ մինչեւ սսկին, որու յորարերական արժէքը մեզի համար կարեւորութիւն չունէր: Հապա բոլոր միւս քարերը, որոնցմով կարելի էր փէօնիկզկրասի մեր տունին պէս ուրիշ հատ մըն ալ շինել, նոյն իսկ սենեակ մ'ալ աւելի՝ ինծի համար:

Բայց սենեակ մտած ժամանակս այս հրաշալիքներուն վրայ չէ որ կը խորհէի. հորեղբայրս մինակ բոլոր ուշս գրաւած էր: Մեծ թիկնաթոռին մէջ ընկղմած, սքանչանալով կը գիտէր ձեռքը բռնած մէկ գիրքը:

«Ի՛նչ գիրք, ի՛նչ գիրք», գոչեց:

Այս բացաքանչութիւնը միտքս ձգեց որ լիտէնպոք ուսուցչապետը՝ հին գիրքերու սիրահար մըն էր, պայմանաւ որ գտած գիրքը մէկ հատիկ ըլլայ կամ գէթ անընթեռնլի բան մը:

«Չե՞ս տեսներ ասիկա, ըսաւ ինծի, ամենաթանկագին գանձ մըն է, այս առտու հրեայ Հէվէլիուսի խանութին մէջ գտայ: — Սքանչելի՛ է», գոչեցի կեզձ եռսնդով մը:

Դասախօսը քանի մը վայրկեան դիտեց գիրերու այս շարքը և ակնոցները վեր վերցնելով ըսաւ .

— Ռուներէն է այս նշանները բարորոշին նման են Սնորէ Թիւրքէլընի ձեռագրին , բայց . . . ի՞նչ կը նշանակեն արդեօք :

Ես այնպէս կը կարծէի թէ Ռուներէնը քանի մը գիտուններուն հնարքն է միայն՝ որպէս զի ուրիշները խարին հետեւաբար ընաւ չնեղացայ տեսնելով որ հօրեղբայրս բան մը չի հասկնար :

«Բայց սակայն հին խաւնութեան է» կը մրմար տակասերուն տակէն :

Պ. Լիտէնպրօք ատանկ բաներէն լաւ կը հասկնար , սրովհետեւ քաջ լեզուագէտ ալ էր . ըսել չեմ ուզեր թէ աշխարհիս վրայ խօսուած երկու հազար լեզուները և չորս հազար գաւառաբարբառները կը ճանչնար , բայց անոնցմէ շատերուն տիրացած էր : Հետեւաբար՝ այս գժուարութեան հանգէպ իր բոլոր բարկութիւնը դուրս պիտի թափէր և փոթորիկի մը փրթելուն կ'սպասէր երբ ժամացոյցը ժամը երկուքը զարկաւ :

Մարթա սենեակին դուռը բացաւ ու ըսաւ .

— Ճաշը պատրաստ է :

— Սատանին երթայ , գոչեց հօրեղբայրս , ճաշն ալ . եփո՛ղն ալ . ուտո՛ղն ալ :

Մարթա փախաւ : Ես ալ հտեւէն վագեցի , և չգիտեմ ի՞նչպէս եղաւ , ինքզինքս ճաշատրահին մէջ սովորական տեղս նստած գտայ : Քանի մը վայրկեան սպասեցի . վարպետը չէր գար : Եթէ լաւ կը յիշեմ առաջին անգամն էր որ սեղանէն բացակայ կը գտնուէր : Ճաշն ալ ի՞նչ սքանչելի էր . ազատքեղով ապուր , թրթնջուկով ու մշկընկոյզով համեմեալ ժամպօնի օմլէթ , աղանդերի համար կարիքս՝ Մօզէլի ընտիր գինի :

Ահա՛ ինչ բաներէ կը զրկուէր հօրեղբայրս թուզթի կտորի մը համար : Իմ կողմէ իբր անձնուէր եղբորորդի՝ կարծեցի թէ պարտք է անոր բաժինն ալ իրեն համար ուտել , և խղճմտաբար երկուքնուս համար ալ փորս կշտացուցի :

— Ատանկ բան տեսնուած չունէր , կ'ըսէր Մարթա , Պ. Լիտէնպրօք սեղան չիգար :

— Չհաւատալիք բան :

— Հեռեւանքը գէշ պիտի ըլլայ , կը կրկնէր ծերուկ սպասուհին զլուխը որորելով : Ինծի համար ասոր հետեւանքը աղւոր փոթորիկ մը պիտի ըլլար , եթէ հօրեղբայրս սեղան իջնար եւ տեսնէր որ ճաշը ըմպուցեր եմ :

Վերջին կարիգոսը ուտելու վրայ էի , երբ անազնադղորդ ձայն մը ճաշի զեղիսութենէն ուշաբերեց զիս : Մէկ քայլով ճաշատրահէն աշխատութեան սենեակը նետուեցայ :

Գ .

«Անշուշտ Ռուներէն է , կ'ըսէր ուսուցչապետը , բայց գաղտնիք մը կայ զոր պիտի գտնամ , թէ ոչ . . .»

Ուժգին շարժում մը մտքին ըսածը լրացուց :

«Հող նստէ , ըսաւ ինծի՝ բռունցքովը սեղանը ցոյց տալով , և ֆրէ՛» :

Մէկ վայրկեանի մէջ պատրաստ էի :

«Հիմակ պիտի ըսեմ լատիներէն այբուբենի բոլոր տառերը որոնք կը համապատասխանեն իւրաքանչիւր խաւնտական տառի . տեսնենք ի՞նչ կ'ըլլայ : Բայց Ատտուժոյ սիրոյն նայէ որ չսխալիս» :

Սկսայ գիրերը մէկիկ մէկիկ գրել , կրցածիս չափ ուշադրութիւն ըրի , գիրերը իրարու ետեւ շարելով անա՛ սոյն անհասկնալի բառերը կազմուեցաւ :

։ կրնսյո	մրնգիաա	եռուլխ
սչրուլլ	ւնդդոիւ	ի՛եցե՛ն
նիկարկֆ	գասյֆրօ	ահի , ււե
ՍԱրեւոնի	ն : կ , ւ , ս	րսրիջլ
Աիւրսեէ	։ ց , եիմֆ	իսդերցե
ցարբաից	եհոգքցՍ	րիբիւր
ասմկարի	սիասւֆաջ	ապնիՍցի

Երբ այս աշխատութիւնը ըմպաւ , հօրեղբայրս ձեռքիս թուղթը առաւ և ուշադրութեամբ քննել սկսաւ : «Ի՞նչ կը նշանակէ ատիկա» կը կրկնէր մեքենաբար :

Շիտակը, ես ալ բան մը չէի հասկնար որ իրեն ըսէի, թէ եւ բնաւ կարծիքս չհարցուց և ինքնիրեն խօսիլը շարունակեց :

«Ասիկա ծածկագիր ըսածնիս է, որու մէջ գիրերը օրէնքի մը համեմատ շարուած են, բայց խառնափնթոր կ'երեւին. եթէ կարգի որուին, անշուշտ իմաստ մը կ'ունենան: Երբ կը մտածեմ թէ գուցէ տտոր մէջ նշանաւոր գիւտի մը վրայ ծանօթութիւն տըրուած է...» :

Ես կը մտածէի թէ բան մըն ալ չիկայ ասոր տակը, բայց կարծիքս ինծի պահելու խոհեմութիւնն ունեցայ: Վարպետը գիրքն ու մագաղաթը առաւ ու սկսաւ իրարու հետ բաղդատել:

«Այս երկու գրութիւնները միեւնոյն ձեռքէ ելած չեն, ըսաւ, ծածկագիրը գիրքէն ետքը գրուած է, և ահա առաջին ապացոյցը: Առաջին գիրը զոյգ Մ է, ինչ որ չենք կրնար գտնալ Թիւրքէյընի գրքին մէջ, որովհետեւ Վերդ գարուն միայն այդ գիրը իսլանտական այբուբենին վրայ աւելցաւ: Այսպէսով գրքին ու յիշատակագրին մէջտեղը երկու հարիւր տարի անցած է» :

Ասիկա տրամաբանական էր, ըսելիք չկար: «Ասկէ կը հետեցնեմ թէ, շարունակեց հօրեղբայրս, այս գրքին մէկ տէրը գրած է այս ծածկագիր տառերը. բայց ո՞վ էր այդ տէրը: Արդեօք անունը գրած չէ՞ ձեռագրին մէկ անկիւնը» :

Հօրեղբայրս ակնոցները հանեց, զօրաւոր խոշորացոյց մը առաւ, և սկսաւ քննել գրքին առաջին երեսները: Երկրորդ թերթին կոնակը, այսինքն նախագուռին ետին՝ մեկնի բիծի պէս բան մը կար, ու մօտէն նայուելով կէս աւրուած գիրեր կը ցուցնէր. հօրեղբայրս հասկցաւ որ շահագրգիռ կէտը հոտ էր, ուստի բոլոր ոյժը կեդրոնացուց և խոշորացոյցին օգնութեամբ կարողացաւ կարգալ Ռուսական սոյն բառերը:

ՂԱԿԻ ԿՄԻՒՆԻԿԿԻՃ

«Արն Սաքնիւսէմ, գոչեց յաղթական, ասիկա իսլանտական անուն մըն է, տառնըվեցերորդ գարու գիտունի մը անունը չնշանաւոր ալիսիսգի մը անունը» :

Տեսակ մը սքանչացումով հօրեղբորս կը նայէի: «Այս ալիսիսիսները, ըսաւ, Սիէսէն, Պաքօն, Լիւլ, Բարասէլտ իրենց ժամանակին միակ ու նշանաւոր գիտուններն էին: Անանկ գիւտեր ըրած են որոց վրայ մենք իսկ կը զարմանանք: Ինչո՞ւ չի մտածեմ թէ Սաքնիւսէմ անակնկալ գիւտ մը չէ ծածկած այս անհասկնալի յիշատակագրին մէջ: Աս ասանկ պէտք է ըլլայ, և այնպէս ալ է» :

Ուսուցչապետին երեւակայութիւնը կ'ոգեւորուէր այս ենթադրութեամբ:

— Անշուշտ իրաւ է այդ, համարձակեցայ պատասխանել. բայց ի՞նչ շահ կրնայ ունենալ գիտունը՝ իր ըրած գիւտը ծածկելով:

— Ինչո՞ւ համար, ինչո՞ւ համար: Ես ի՞նչ գիտնամ: Գալիլէոս ալ նոյնը չըրած էրեւակի համար: Հիմա կը տեսնենք, յիշատակագրին գաղտնիքը պիտի հասկնամ, և անկէ առաջ ո՛չ պիտի պառկիմ, ո՛չ կերակուր ուտեմ:

— Օհօ՞, մտածեցի ինքնին:

— Ո՛չ ալ դուն, Աքսէլ, յարեց:

— Սատանայ, մտածեցի, աղէկ որ երկու անգամի համար ճաշ մը ըրի:

— Ամենէն առաջ սոյն պիտակին լեզուն պէտք է գտնանք. ասիկա դժուար չէ:

Այս խօսքերուն վրայ գլուխս վերցուցի. հօրեղբայրս շարունակեց մենախօսութիւնը:

— Ասկէ դիւրին բան չկայ: Յիշատակագիրը 132 գիր կը պարունակէ, որոց 79ը բաղաձայն է, իսկ 53ը ձայնաւոր: Արդ, գրեթէ միեւնոյն համեմատութեամբ է որ հարաւային լեզուները կազմուած են, մինչդեռ հիւսիսային բարբառներու մէջ բաղաձայնները շատ աւելի են: Ուրեմն հարաւային լեզուով գրուածք մըն է սա:

Այս հետեւութիւնները շատ ճիշդ էին: «Բայց ո՞րն է այդ լեզուն»:

Այս կէտին վրայ է որ պիտի փորձուէր գիտնականս, որու քով խորաքննին վերլուծութիւն կարողութիւն մը կար:

«Այս Սաքնիւսէմը, շարունակեց, ուսեալ մէկն էր, արդ քա»

նի որ իր մայրենի լեզուով չէր գրեր, ուրեմն տասնըվեցերորդ դարու գիտուններուն ընթացիկ լեզուն պիտի գործածէր. այդ է լատիներէնը: Եթէ կը սխալիմ, վերջէն կրնանք փորձել սպաներէնը, ֆրանսերէնը, իտալերէնը, յունարէնը, երբայցեցերէնը: Բայց ժՁ. դարու գիտունները ընդհանրապէս լատիներէն կը գրէին. ուրեմն ըստ նախագունի լատիներէն է:

Աթուխ վրայէն վեր ցատքեցի. լատինագէտի յիշատակներս կը մերժէին ընդունիլ թէ ասանկ անկողապակից ու անճանաչելի բառեր վերգիլիոսի քաղցր լեզուին վերաբերին:

— Այո՛, լատիներէն, կրկնեց հօրեղբայրս, բայց խառնակուած: — Սանկ ըսէ, մտածեցի. և եթէ կարենաս քակել, հօրեղբայր, շիտակը վարպետ մարդ մը կ'ըլլաս:

— Աղէկ քննենք, ըսաւ ձեռքէս թուղթն առնելով: Ահա 132 գրերու շարք մը որոնք ակներեւ անկարգութեամբ մը շարուած են, բառեր կան ուր բաղաձայնները շատ են, ուրիշներ ալ՝ ուր ձայնաւորները գրեթէ մեծամասնութիւն կը կազմեն. ուրեմն այս կարգը բաղադրուած չէ, այլ չափագիտաբար գրուած է անճանօթ կանանի մը համաձայն: Ինծի այնպէս կ'երեւայ որ առաջ նախաձ դասութիւնը շիտակ գրուած էր, յետոյ որոշ օրէնքի մը հետեւելով դարձուած է. արդ, խնդիրը այդ օրէնքը գտնելն է: Ո՛վ որ այս պիտակին բանալին ունի, շուտով պիտի կարգայ. բայց ի՞նչ է այդ բանալին: Աքսէլ, գիտե՞ս արդեօք այդ բանալին:

Այս հարցումին չպատասխանեցի, և ոչ առանց պատճառի: Աչքերս պատէն կախուած կրտսեպէնի մէկ սքանչելի կինդանագրին հանդիպեցան: Այն ժամանակ հօրեղբորս սանուհին Ալթօնա կը գտնուէր, ազգականի մը տունը, և իր բացակայութիւնը զիս շատ կը տխրեցնէր, որովհետեւ, հիմակ կրնամ ըսել, երկտասարդ վերլանտուհին և ուսուցչապետին եղբորորդին զիրար կը սիրէին գերմանական ամբողջ համբերութեամբ ու հանդարտութեամբ: Արդէն նշանուած էինք առանց հօրեղբորս գիտութեան, որ իր երկրաբանութիւնէն դուրս՝ ասանկ զգացումներէ չէր հասկնար: Կրտսեպէն սիրուն երկտասարդ խարտեաշուհի մըն էր, կապոյտ աչքերով, ծանրախոհ ու լուրջ կերպարանքով, որ զիս շատ կը սիրէր. ես ալ զոյն կը պաշտէի՝ եթէ ասանկ բառ մը կայ գեր-

2019

91105-60

909 63



Կրտսեպէն սիրուն երկտասարդ խարտեաշուհի մըն էր





մաներէն ըստարանին մէջ: Գողտրիկ Վերլանտուհիս պատկերը
իրական աշխարհէն փոխադրեց զիս երազներու և յիշատակներու
երկնքին մէջ: Աշխատութեանցս ու հանոյքներուս հաւատարիմ
ընկերուհիս նորէն տեսայ:

Նէ ինծի կ'օգնէր ամէն օր կարգի գնելու հօրեղբօրս թանգա-
րանին խճաքարերը: Օրիորդ կրաիւպէն հմուտ հանքաբան մըն էր,
քանի մը գիտուններ գրպանէն կը հանէր: Արդեօք քանի՞ քանի՞
ժամեր միասին ուսումնասիրած ենք այս քարերը, որոնց բաղդին
արժանանալ կը ցանկայի՝ անոր փափուկ ձեռքերուն մէջ խաղա-
լիկ մը դառնալու համար:

Յետոյ զբօսանքի ժամուն միասին դուրս կ'ելլէինք. Ալթէրի
թուփերով ծածկուած ճամբաներէն կ'անցնէինք և լճին ծայրը
գտնուած հին ջաղացքը կ'երթայինք: Ճամբան ձեռք ձեռքի կը
խօսակցէինք. պատմութիւններ կ'ընէի, ան ալ կը խնդար: Ա-
սանկով էլպայի եղբրքը կը հասնէինք, հոն ճերմակ նունուֆար-
ներուն մէջտեղ սպիտակ կարապներ կը լողային. անոնց բարիբի-
կուն կ'ըսէինք և շոգեմակոյկով ետ կը դառնայինք:

Արդ, երազիս այս կէտին հասած էի, երբ հօրեղբայրս սեղա-
նին բռնցի հարուած մը տալով, իրականութեան դարձայ:

«Տեսնենք, ըսաւ, խօսքի մը գիրերը իրար խառնելու հա-
մար մարդուս միտքը եկած առաջին միջոցն է հորիզոնական գրե-
լու տեղ վերէն վար ուղղահայեաց գրել:

— Իրաւ է, մտածեցի:

— Տեսնենք ի՞նչ կ'ըլլայ ասոր արդիւնքը: Աքսէլ, սա թուղ-
թին վրայ բան մը գրէ, բայց գիրերը իրարու քով գրելու տեղ
տակէ տակ հինգական կամ վեցական շարէ»:

Ինչ ըսել ուզելն հասկցայ և գրեցի

Շ	u	f	ի	ո	ի	ս
ա	ի	ե	մ	ր	ւ	:
s	r	q	ա	կ	պ	
կ	ե	ի	ղ	ր	ե	
ը	մ	,	ւ	ա	ց	

«Լա՛ւ, ըսաւ դասապետը առանց կարգալու, հիմայ այս բա-
ռերը հորիզոնական կարգով շարէ»:



Հնազանդեցայ և հետեւեալ նախագասութիւնը ստացայ :

Շաբոթս աիեուր սրգաԿայ կիբդե րմ,ւան

«Շատ աղէկ, ըսաւ հօրեղբայրս՝ թուղթը ձեռքէս կորզելով, ահա հին յիշատակագրի երեւոյթ ունեցող բան մը. ձայնաւոր ու բաղաձայն միեւնոյն անկարգութեան մէջ են, նոյն խոկ բառին մէջ գլխազիր ալ կայ, ինչպէս նաեւ ստորակէտ մը, ձիշդ Սաքնիւսէ մի մտադաթին պէս» :

Այս դիտողութիւնները շատ մտացի երեւեցան ինծի :

«Արդ, ըսաւ հօրեղբայրս, խօսքը ինծի ուղղելով, գրած խօսքդ գոր չեմ գիտեր, կարդալու համար նախ կ'առնեմ առաջին գիրերը՝ բոլոր խօսքերուն մէջ, յետոյ երկրորդ գիրերը, յետոյ երրորդները, և այսպէս շարունակաբար» :

Եւ հօրեղբայրս ի մեծ զարմացում իրեն, և մանաւանդ ինծի կարգաց :

«Շաս կր սիբեմ քեզի, իմ աղւոր Կրաիւպեցս» :

«Հէ՛հ» ըրաւ հօրեղբայրս :

Այո՛, առանց ուշադրութիւն ընելու, անճարպիկ սիրահարի մը պէս, փորձանաւոր խօսքը գրած էի :

«Ա, կրաիւպէնը կը սիրե՞ս, ըսաւ հօրեղբայրս խնամակալի մը անկեղծ ձայնով :

— Այո՛... ոչ... թոթովեցի :

— Ա՛հ, կրաիւպէնը կը սիրե՞ս, կրկնեց մեքենաբար, լուռ ուրեմն, այս միջոցը ի գործ գնեմք յիշատակագրին համար ալ» :

Հօրեղբայրս մտադիւր թաղուեցաւ իր խնդրին մէջ՝ և շուտով մտցաւ անխոհեմ խօսքերս : Անխոհեմ կ'ըսեմ, որովհետեւ գիտունի մը գլուխը՝ սրտի բաներէն չի հասկնար : Բարեբաղ-դաբար յիշատակագրին գործը ամէն բան ծածկեց :

Գլխաւոր փորձը կատարած ժամանակ, Լիտէնպրօքի աչքե-րէն կայծակներ կը ցատքէին, մատները կը դողային՝ երբ նորէն ձեռք առաւ հին յիշատակագիրը. լրջօրէն յուզուած էր. վերջա-պէս, հազաց և ծանր ձայնով մը նախ առաջին գիրերը, յետոյ երկրորդները կարգաց. և ալ գրեցի այս շարքը :

Ահա ինձ գաՍՏը Ա. իցեբասակրոչնի ԲահԱ. սինսահիթի պընորդեկսիբկր

Ե, դորմաննգւողնայ, ւե, րբեքգիկսիսիլոթընոեիսիւրաքափՍյանյի՛կր ւո, քիմնիքնորանոախիլոֆօնիսիւի. ԿեճՍրիջի

Երբ լմնցայ, յուզուած էի. մէկիկ մէկիկ լսուած այս գիրե-րէն բան մը չէի հասկցած, կ'սպասէի որ դասախօսը լատիներէն նախագասութիւն մը պիտի արտասանէր անխմանալի այս տողան-ցումէն :

Բայց որո՛ւ մտքէն կ'անցնէր. բառնցքի անեղ հարուած մը սեղանը դղրդեց. միւսնը թափեցաւ, գրիչը ձեռքէս ցատքեց :

— Ասիկա չէ՞ ուզածս, գոչեց հօրեղբայրս, խեղքի դէմ է աս : Յետոյ ուռմբի մը պէս սենեակէն անցաւ, ձիւնակոյտի մը նը-ման սանդուղներէն վար գլորեցաւ և փողոցին մէջ անհետացաւ :

— Գնա՞ց, հարցուց Մարթա դրան աղմուկին վրայ դուրս վա-զելով՝ որ ուժգին գոցուելով ամբողջ տունը դղրդեցուցեր էր :

— Այո՛, պատասխանեցի, գնա՛ց :

— Բայց ճա՛շը, հարցուց ծերուկ սպասուհին :

— Չպիտի ճաշէ :

— Ընթրե՞քը հապա :

— Չպիտի ընթրէ :

— Ի՞նչպէս, հարցուց Մարթա՝ ձեռքերը միացնելով :

— Ո՛չ, Մարթա, ալ կերակուր չպիտի ուտէ, ոչ ալ սու-նիները : Հօրեղբայրս մեզի ծով պահել պիտի տայ մինչեւ որ ան-հասկնալի կախարդագիր մը չկարգայ :

— Յիսո՛ւս, անօթութենէ պիտի մեռնինք ուրեմն :

Չհամարձակեցայ հաւաստել թէ հօրեղբորս պէս միտքը դրածը ընող մէկուն հետ՝ ըլլալիքը ատ էր :

Երբ մինակ մնացի, միտք ըրի երթալ կրաիւպէնը գտնել եւ ամէն բան անոր պատմել : Բայց ի՞նչպէս տունէն մեկնիլ, հօրեղ-բայրս կլնար մէկ վայրկեանէն միւսը վերադառնալ : Եթէ ինծի կանչէր, եթէ ուզէր նորէն սկսիլ առջի աշխատութիւնը և ես հոն չըլլայի, ի՞նչ պիտի պատահէր այն ատեն : Ամէնէն աղէկը տունը մնալն էր :

Հօրեղբորս մեծ թիկնաթուին մէջ բազմեցայ, ձեռքերս ճօ-ճելով, գլուխս դէպ ի ետ կախած : Վառեցի ծխափողո՞ որու վրայ գիցանայ մը նկարուած էր. մտացիր այդ արձանիկը կը դիտէի,

որ ծխախոտին մուխէն կամաց կամաց կը սեւնար: Երբեմն ա-
կանջ կուտայլի թէ սանդուղէն վեր մէկը կ'ելլա՞ր. բայց բնաւ ոտ-
քի մը աղմուկ չէի լսեր: Ո՞ւր կրնար ըլլալ արգիւթ հօրեղբայրս
այս պահուն: Յաղթակա՞ն թէ յուսահատ ետ պիտի դառնար: Ինք-
նիրենս այս հարցումները կ'ընէի և տհա՛ մեքենարար ձեռքս ա-
ռի քիչ մը առաջուան գրած անհասկնալի տողերս պարունակող
թղթի կտորը:

Փորձեցի գիրերը խուճը խուճը առնելով բառեր կազմել.
անկարելի բան: Երկերկու, երեքերեք, չորսչորս, վեցվեց առի.
անկարելի էր: Կը մտքառէի այս անլուծելի դժուարութեան հան-
դէպ. գլուխս կը տաքնար, տեսակ մը զգայախարութեան մատ-
նուած էի. կը խեղդուի, օդի պէտք ունէի. մեքենարար թուղթի
կտորովս սկսայ փչուել. այն ձեւով որ մէյմը շիտակ կողմը, մէյ
մ'ալ կոնակի կողմը գիմացս կուգար:

Ի՞նչ մեծ եղաւ զարմանքս, երբ այն միջոցին ուր թղթին
կոնակի կողմէն կը նայէի, քանի մը բառեր կըրցայ կարգալ.

«Ստանարան, հասնիս»:

Յանկարծ լոյս մը ծագեցաւ մտքիս մէջ. այս քանի մը նշան-
ներով ճշմարտութիւնը գուշակեցի: Այս յիշատակագիրը կարգա-
լու համար թուղթին ետեւէն նայիլ հարկ չկար. կարելի էր ամ-
բողջապէս հեզել այն վիճակին մէջ ուր ինձ գրել տուաւ վար-
պետս: Դասախօսին բոլոր հաշիւները կ'իրականանային: Գիրերու
չարքի մասին մտածածը, գրութեան լեզուի մասին ըրած դիտու-
ղութիւնները ճիշդ էին: Ոչինչ բան մը միայն կը պակսէր ծած-
կագիրը ծայրէ ի ծայր կարգայու համար, և այդ ոչինչը ես գտեր
էի:

Վրդովս զսպեցի, երկու անգամ սենեակին շրջանը ըրի քիչ
մը հանդարտելու համար և եկայ թիկնաթոռին մէջ ինկայ:

«Կարգանք» գոչեցի ուժով մը շնչելով: Սեղանին վրայ ձու-
ցայ, մատերս յաջորդարար գիրերուն վրայ գրի և բարձր ձայնով
հեզեցի ամբողջ նախադասութիւնը՝ առանց կենալու, առանց
դեղեկելու:

Ի՞նչ վախ, ի՞նչ սոսկում գրաւեց զիս, սարսափեցայ մնացի:
Ի՞նչ, կարգացածս արգէն կատարուած է եղի՞ր, գտնուե՞ր է եղեր
անանկ յանդուզն մէկը որ մինչեւ հոն իջեր էօօօ:

«Ո՛չ, գոչեցի վեր ցատքելով, ո՛չ, հօրեղբայրս պէտք չէ որ
գիտնայ. ասանկ ճամբորդութիւն մը իմացածին պէս ինքն ալ պի-
տի ուղէ հոն երթալ: Հակառակ ամէն դժուարութեան պիտի մեկ-
նի, զիս ալ հետը տանի, և ալ բնաւ ետ չպիտի դառնանք»:

Աննկարագրելի գրգռութեան մը մէջ էի. «Ո՛չ, ո՛չ, այս չպի-
տի կատարուի, գոչեցի ուժգին, կրնայ ըլլալ որ ասդին անդին
դարձնելով վերջապէս գաղտնիքը հասկնայ, ուրեմն ջնջինք
յիշատակագիրը»:

Վառարանին մէջ քիչ մը կրակ կար. վրան գրած թուղթիս
կտորն ու Սաքնիւսէմի մագաղաթը առի և զողողուն ձեռքով բո-
լորն ալ կրակին մէջ ջնջելու վրայ էի, երբ սենեակին գուռը
բացուեցաւ: Հօրեղբայրս էր եկողը:

Ե.

Հաղիւ ժամանակ ունեցայ չարաբաստիկ յիշատակագիրը սե-
ղանին վրայ դնելու:

Պ. Լիւնայրօք խիտ մտազբաղ կ'երեւէր, միտքը գրաւող
գաղափարը վայրկեան մը թոյլ չէր տար իրեն. անշուշտ խնդիրը
քննած, վերլուծած էր. իր երեւակայութեան ծնած բոլոր միջոց-
ները փորձած էր, և հիմակ կուգար նոր կերպ մը փորձելու:

Արդարեւ թիկնաթոռին վրայ նստաւ, գրիչը ձեռք առաւ եւ
սկսաւ գրահաշիւի գործողութեան պէս բաներ գրել:

Երեք երկար ժամեր հօրեղբայրս աշխատեցաւ առանց խօսք
մը ըսելու, աչքերն իսկ չվերցնելով. գրեց, աւրեց, նորէն գրեց,
հալար անգամ ծայրէն սկսաւ, բայց պարապ տեղն էր, ինչու որ
ճիշդ լուծումը ես գտած ըլլալով՝ ուրիշ ամէն աշխատութիւն ա-
նօգուտ էր:

Սակայն ժամանակը կ'անցնէր, մութը կոխել սկսաւ, կամաց
կամաց փողոցին աղմուկները դադրեցան. հօրեղբայրս աշխատուչ
թեանը վրայ հակած ոչ մէկ բանի ուշադրութիւն կ'ընէր: Քիչ քի-
քունս կոխեց, բաւական ատեն դիմադրեցի, բայց ի վերջոյ նըս-

տարանին մէկ ծայրը քնացայ. մինչդեռ հօրեղբայրս կը գրէր ու կ'աւրէր :

Առաւօտուն երբ արթնցայ, անխոնջելի հետազօտիչը դեռ կ'աշխատէր: Կարմրեցած աչքերը, տժգոյն այտերը, դողդոջուն մատները բաւական նշաններ էին հասկնելու թէ մտքի ինչ ճրգ-նութիւններու, ուղեղի ինչ ճիգի մէջ անցուցած էր իր ժամերը:

Մէկ խօսքով, մէկ շարժումով կրնայի քակել երկաթէ այս մամուլը որ իրեն գանկը կը ճգմէր. և եթէ չըրի ատիկա նոյն իսկ հօրեղբորս օգտին համար էր:

— Ո՛չ, ո՛չ, կը կրկնէի ինքնիրենս, չպիտի խօսիմ: Անպատճառ ան երթալ պիտի ուզէ, գինքը աղէկ կը ճանչնամ. ո՛չ մէկ բանէ պիտի համոզուի: Միւս երկրարաններուն չըրածը ինք ըրած ըլլալու համար կեանքը վրայ տալու պատրաստ է: Եթէ յայտնեմ, Լիտէնպրօք ուսուցչապետը սպաննած կ'ըլլամ:

Որոշումս տալով՝ թեւերս ծալլեցի և սպասեցի: Բայց բան մը միայն հաշուի չէի առած, և ան ալ քանի մը ժամէն պատահեցաւ: Երբ Մարթա ուղեց դուրս ելլել և շուկայ երթալ՝ դուռը գոց գտաւ: Մեծ բանալին վերցուած էր կղպանքին վրայէն. անշուշտ հօրեղբորս գործն էր ատիկա՝ երբ առջի օրը՝ պտոյտէն ետ կը դառնար:

Ինծի անանկ եկաւ որ՝ առջի իրիկուսն ընթրիքիս պէս՝ ճաշ չպիտի ընենք, այսու հանդերձ որոշեցի դիւցազնական ընթացք մը բռնել և անօթութեան հարկին տակ տեղի չտալ:

Հօրեղբայրս միշտ կ'աշխատէր:

Կէս օրին՝ անօթութենէ նեղուի սկսայ: Մարթա կամացուկ մը՝ դարակին մէջ գտնուած ուտելիքները բոլոր կերեր էր, անանկ որ ինծի բան չէր մնար: Նորէն չտկարացայ և տեսակ մը անձնասիրութիւն համարեցի դէմ դնել: Ժամը երկուքը եկաւ. ա՛լ չափը կ'անցնէր կոր. աչքերս խոշոր խոշոր բացուեցան: Սկսայ մտածել որ յիշատակագրին պէտք եղածէն աւելի կարեւորութիւն կուտայի, անշուշտ հօրրաղբայրս չպիտի հաւատ ընծայէր անոր, նոյն իսկ եթէ փորձելու ալ ձեռնարկէր՝ կրնայինք բռնի վար դնել գինքը. վերջապէս կրնար ըլլալ որ ինքը գուշակէր պիտակին բանալին և իմ ծոմապահութիւնս պարսպը երթար: Ուստի որոշեցի ամեն բան ըսել:

Իմացնելու միջոց մը կը փնտռէի, երբ վարպետը սոք ելաւ, գլխարկը դրաւ և դուրս ելլելու պատրաստուեցաւ:

Ինչ, նորէն պիտի երթար ու մեզի տանը մէջ փակէր: Բնաւ չպիտի ձգէի:

— Հօրեղբայր, ըսի:

Չլսեց:

— Լիտէնպրօք հօրեղբայր, ըսի աւելի բարձր ձայնով մը:

— Հէ՞, ըրաւ քունէն արթնցող մէկու մը պէս:

— Լա՛ւ ուրեմն, բանալի՛ն:

— Ի՞նչ բանալի, դրա՞նք բանալին:

— Բայց չէ՛, գոչեցի, ծածկագրին բանալին:

Ուսուցչապետը ակնոցներուն վրայէն ինծի դիտեց. դէմքիս վրայ անշուշտ անսովոր բան մը տեսաւ, որովհետեւ ձեռքէս բռնեց ու ժգին և չկարենալով խօսիլ, ակնարկովը հարցաքննեց. ո՛չ մէկ հարցում այսքան բացօթի կը հասկցուէր:

— Այո՛, բանալին... դիպուածաւ:

— Ի՞նչ կ'ըսես, գոչեց անպատում յուզումով մը:

— Նայեցէ՛ք, ըսի գրած թուղթիս կտորն իրեն երկնցնելով, կարդացէ՛ք:

— Բայց ասկէ բան մը չե՛լլար, ըսաւ թուղթը ձեռքին մէջ դարձնելով:

— Այո՛ եթէ սկիզբէն սկսիք, իսկ եթէ վերջէն...:

Խօսքս ընցնելու ատեն չունեցայ, ուսուցչապետը ազադակ մը, մոնչիւն մը արձակեց, մտքին մէջ յեղաշրջում մը յառաջ կուգար, կերպարանափոխուած էր:

— Ա՛խ, սատանորգի Սաքնիւսէմ, գոչեց, ըսել է նախադասութիւնդ առաջուրնէ՛ դարձուցեր էիր:

Եւ թուղթին վրայ ինչալով՝ աչքերը դարձած, ձայնը դողդոջուն, ամբողջ յիշատակագիրը կարդաց վերջին տառէն սկսելով:

Ահա՛ ինչ էր գրուած:

Իջիր Սեֆեկսի Եօբու յառնարանին մեջ, ուր կ'իյնայ Սեարթարիսի շուրթ Յուլիսի սկիզբները, եւ, յանդուզն համբողջ, երկրիս կեդրոնը պիտի հասնիս: Ահա ի՛նչ որ կասարեցի: Արն Սաֆնիւսէմ:

Երբ հօրեղբայրս կարդաց, Լէյտեան շիշի մը դպածի պէս տե-

ղէն վեր ցատքեց. վեհ ու զուարթ կերպարանք մը առեր էր: Սկսաւ սենեակին մէջ վեր վար պտտկիւլ, աթոռները կը շարժակէր, գիրքերը ասդին անդին կը նետէր, բռնցքի հարուած մը հոս կուտար, կից մը անդին: Վերջապէս շիղերը հանդարտեցան, եկաւ թիկնաթուռին մէջ ինկաւ՝ ուժը կտրած:

— Ժամը քանի՞ն է, հարցուց:

— Երեքը կ'անցնի կոր:

— Որչա՛փ ուշ է, անօթութինէ կը մեռնիմ: Սեղան երթանք, յետոյ...:

— Յետոյ:

— Սնտուկս կապէ՛:

— Ի՞նչ, գոչեցի:

— Քուկդ ալ մէկտեղ, աւելցուց անգութ դասախօսը:

Ձ.

Այս խօսքերուն վրայ սարսափեցայ, բայց ինքզինքս բռնեցի: Մինակ գիտական պատճառաբանութիւններով է որ հօրեղբայրս կրնայի արգիլել, և ատանկ առարկութիւններ չէին պակսեր: Երկրիս կեդրոնը երթա՛լ, ի՛նչ յիմարութիւն: Տրամաբանութիւններս ետքի պահեցի և սկսայ ճաշին վրայ խորհիլ: Մարթա շուտ մը աւմէն բան պատրաստեց, անանկ որ մէկ ժամ ետքը փորս կուշտ՝ խելքս գլուխս եկաւ քիչ մը:

Երբ միրգը կերանք, հօրեղբայրս նշան ըրաւ որ իրեն հետ սենեակը երթամ: Գրասեղանին մէկ ծայրը ինք նստաւ, միւսն ալ՝ ես:

— Աքսէլ, ըսաւ անուշ ձայնով մը, խելացի տղայ մըն ես. պարասած՝ կռուէ քաշուելու վրայ էի երբ մեծ ծառայութիւն մը ըրիր ինձի: Ո՛վ գիտէ վերջը ի՛նչ պիտի ըլլար: Զպիտի մտնամ ըրածդ և մեղի վերապահուած փառքէն դու ալ քու բաժինդ պիտի ունենաս:

— Վարպետը կակուղցեր է, ըսի միտքէս, ժամանակն է այդ փառքին վրայ վիճելու:

— Ս,մէնէն առաջ, ըսաւ հօրեղբայրս, բացարձակ լուսթիւն կը պատուիրեմ: Գիտուններուն մէջ քիչ նախանձող չունիմ, անոնց ամէնն ալ պիտի ուզեն այս ճամբորդութիւնը կատարել, մինչդեռ մեր դարձէն ետքը միայն տեղեկանալու են ատոր:

— Կը կտրծէ՞ք որ ատանկ շատ մը յանդուգն մարդեր գըտնուին:

— Հապա՛, ո՞վ կը վարանի ատանկ պատիւի մը ետեւէ չվազելու: Եթէ ծածկագիրը հրապարակուի, աշխարհիս բոլոր գիտունները Սաքնիւսէմի ցցոցած ճամբուն վրայ պիտի խռնուին:

— Ես ատոր վստահ չեմ, հօրեղբայրս, որովհետեւ յիշատակագրին ինքնութիւնը հաստատող բան մը չկայ:

— Ինչէ՞ն: Հապա այս գիրքը ուր պահուած էր:

— Կ'ընդունիմ որ այդ գիրքը Սաքնիւսէմի ձեռքէն ելած են, բայց ատկէ չհետեւիր որ ինք ճամբորդութիւնը կատարած ըլլայ. կարելի է ծածկագիրը սուտ է:

Անմիջապէս զղջացի այս վերջին խօսքը ըսելու: Դասախօսը ունքերը պռստեց. վախցայ որ խօսակցութեան վախճանը պիտի գէշնայ. բայց այդ օրը բազդս բաց էր. խտտաբարոյ վարպետիս շրթունքներուն վրայ խնդուքի ծալք մը երեւցաւ:

— Կը նայինք հիմայ, պատասխանեց:

— Նախ, ըսի քիչ մը նեղացած, ներեցէք որ յիշատակագրին վերաբերեալ առարկութիւններս աւարտեմ:

— Խօսէ՛ տղաս, մի նեղուիր, կտրծիքդ յայտնելու ազատ ես: Ա՛լ եղբորորդիս չես դուն, հապա՛ աշխատակիցս:

— Նախ՝ կ'ուզէի հասկնալ թէ ի՞նչ կը նշանակեն Եօքուլ, Սնէֆէլս և Սքարթարիս:

— Ատկէ դուրին բան չկայ: Դեռ նոր Հայացիկի բարեկամներէս մին աշխարհացոյց մը զրկեց: Գնա՛ մեծ գրագարանին երկրորդ յարկի չորրորդ քարտէսը ա՛ռ:

Շուտ մը սզածը բերի:

— Ատիկա, ըսաւ, Իսլանտայի ամէնէն աղուոր քարտէսն է: Երկուքս ալ սկսանք ուշադրութեամբ քննել:

— Այս կղզին գրեթէ ամբողջովին հրաբուխներէ կազմուած է որոց ամէնուն ալ Եօքուլ կ'ըսեն: Այս բառը իսլանտերէն «Սառ-

նարան» կը նշանակէ: Լայնութեան այս աստիճանին տակ բոլոր հրաբուխները ժայռերու մէջէ գուրս կը ժայթքեն. սակէ է որ կըզգիին բոլոր հրակէզ գագաթներուն ալ նոյն անունը կուտան:

— Շատ աղէկ, ըսի, բայց ի՞նչ է Սնէֆէլը:

Կարծեցի թէ չպիտի կրնայ պատասխանել. կը սխալէի:

— Նայէ՛ իսլանտայի արեւմտեան եզերքը, Ռէյքիավիքը կը տեսնե՞ս, կղզիին մայրաքաղաքն է: Քիչ մը ատկէ վեր ելիր, մինչեւ Լայնութեան Յորդ աստիճանը: Ի՞նչ կը տեսնես:

— Ծնգոսկրի ձեւ ունեցող թերակղզի մը:

— Բաղդատութիւնդ ճիշդ է. այս ոսկորին ծայրը բան մը չկայ:

— Ծովին մէջ բուսածի պէս լեռ մը:

— Լա՛ւ, այդ է Սնէֆէլը:

— Սնէֆէլը:

— Այո՛, հինգ հազար ոտք բարձր լեռ մը, որ աշխարհիս մէջ հռչակաւոր պիտի ըլլայ եթէ խառնարանը մինչեւ երկրին կեդրոնը կը հասնի:

— Անկարելի է ատկիկ, գոչեցի սրտնեղելով ատանկ ենթադրութեան մը դէմ,

— Անկարելի՞, հարցուց դատախօսը խստիւ, ինչո՞ւ համար:

— Որովհետեւ խառնարանը լավայով, հրաշէկ ժայռերով գոցուած է և թէ...

— Հապա եթէ մարած հրաբուխ մըն է:

— Մարած:

— Այո՛: Վառ հրաբուխները երեք հարիւրի չափ են: Բայց մարածները անոնցմէ շատ աւելի են: Սնէֆէլն ալ մարած է: Ամենահին ժամանակներէ ի վեր անգամ մը միայն, 1219ին բորբոքած է. անկէ ետքը կամաց կամաց հանդարտած է, անանկ որ այսօր մեռեալ հրաբուխ մը կը համարուի:

Այս պատասխաններուն ըսելիք չունէի, ուրիշ առարկութիւններ փնտռելու ետեւէ եղայ:

— Ի՞նչ ըսել է Սնէֆէլը, հարցուցի, և Յուլիսի սկիզբները ինչո՞ւ համար յիշուած են:

Հօրեղբայրս պահ մը խորհեցաւ, վայրկեան մը յուսացի որ



Երկուքս ալ սկսանք ուժադուք եամք քննել:

չպիտի կրնայ պատասխանել, բայց յոյս պարապը ելաւ:

— Քու մթութիւն համարածդ ինձի համար լոյս է: Ասկէ կը հասկցուի թէ վարպետորդին Սաքնիւսէմ ի՛նչ խնամով ճշդած է իր գիււար: Մնէֆէլը քանի մը խառնարաններէ կը բաղկանայ, պէտք էր ուրեմն որոշել թէ ատոնցմէ ո՛րն է երկրիս կեդրոնը տանողը: Ասոր համար տես ի՛նչ ըրեր է իսլանտացի գիտունը. դիտեր է որ Յուլիսի սկիզբները Սքարթարիսի շուքը ճիշդ այդ բացուածքին վրայ կ'իյնայ և նշանակեր է իր ծածկագրին մէջ: Ասկէ աւելի բացայայտ ըլլալ կարելի չէ: Երբ Մնէֆէլի գազաթը հասնինք, ա՛լ բռնելիք ճամբանուս վրայ վարանելիք բան մը չունինք:

Տեսայ որ հօրեղբայրս յիշատակագրին վերաբերեալ ասէն բա-
նի պատասխան ունէր, ուստի որոշեցի ա՛լ ատոր վրայ չի խօսիլ:
Անցայ գիտական առարկութիւններուն որոնք ըստ իս աւելի ծան-
րակշիռ էին:

— Ստիպուած եմ ընդունելու, յարեցի, որ Սաքնիւսէմի գրածը բացայայտ ու հանկնալի է և թէ յիշատակագիրը իր ձեւ-
քէն ելած է: Այս գիտունը Մնէֆէլի խորը գացած է, տեսած է որ Յուլիսի առաջին օրերը Սքարթարիսի շուքը խառնարանին ճիշդ եզերքին վրայ կ'իյնայ, նաև իր ժամանակները պատմուած աւանդութիւններէն իմացած է թէ այդ ճամբան երկրիս կեդրոնը կը տանի: Բայց չեմ հաւատար որ ինքը մինչեւ երկրիս կեդրոնը գացեր է այդ խառնարանին մէջէն և անկէ ալ ետ դարձեր է:

— Դնչո՞ւ համար չէ, հարցուց հօրեղբայրս ծաղրական շեշ-
տով մը:

— Որովհետեւ գիտութեան բոլոր տեսութիւնները կը մերժեն
ասանկ ձեռնարկի մը իրականութիւնը:

— Բոլոր տեսութիւններն ալ ասանկ կ'ըսեն, հարցուց դա-
տախօսը միամիտ կերպով մը: Ա՛խ, այդ տեսութիւնները, քեզի
չատ կը նեղե՞ն այդ անպիտան տեսութիւնները:

Կը տեսնէի որ ինձի կը ծաղրէր, սակայն շարունակեցի.

— Այո՛: Եւ ամէն մարդ գիտէ որ երկրիս երեսէն վար ամէն
իննսուն ոտք խորութեան տաքութիւնը մէկ աստիճան կ'աւելնայ.
արդ այս համեմատութիւնը անփոփոխ պահելով՝ երկրիս կեդրոնը



երկու հարիւր հազար աստիճանէն աւելի ջերմութիւն կ'ընէ, քանի որ շառաւիղը հազար հինգ հարիւր փարսախ է: Ոսկին, արծաթը և բոլոր մարմինները ասանկ բարձր տաքութեան մը չգիմանալով հրաշեկ կազի մը ձեւն առած են, հոն: Իրաւունքը չունի՞մ ուրիմն հարցնելու թէ ասանկ միջավայրի մը մէջէ երթալը կարելի՞ բան է:

— Ուրեմն Ա. քաջ' է, քեզ չփոթեցնողը տաքութիւնն է:

— Անշուշտ. մինակ տասը փարսախ խորութեան մէջ ա'լ հաստատուն մարմին չկայ, և այդ չափն է երկրագնտիս կեղեւին թանձրութիւնը:

— Կը վախնաս որ դո՞ւն ալ կը հալիս:

— Չեմ գիտեր, ըսի նեղանալով:

— Իմ գիտցածս սա՛ է, ըսաւ Պ. Լիւէնպրօք ծանր հով մը առնելով. ո՛չ դուն, ո՛չ ես, մարդ չգիտեր վստահ կերպով թէ երկրիս մէջ ի՞նչ կ'անցնի, որովհետեւ շառաւիղին մէկ՝ տասներկու հազար երորդը հազիւ ճանչցած ենք դեռ. գիտութիւնը միշտ կը կատարելագործուի, նոր տեսութիւն մը իրմէ առաջ ընդունուած ուրիշ մէկ տեսութիւնը կը ջրէ: Չե՞ս գիտեր, մինչեւ Ֆուրիէի ժամանակները ասանկ կը կարծէին թէ մուրակներու միջեւ գտնուած տարածութեան ջերմութիւնը երթալով կը քեղնայ. բայց հիմա ապացուցուած է թէ այդ եթերային միջավայրերու ցրտութիւնը՝ զերօյէն վար 40—50 աստիճանը չանցնիր: Ինչո՞ւ համար երկրիս ներքին ջերմութիւնը ասանկ չպիտի ըլլայ. ո՞վ կ'ըսէ որ այդ տաքութիւնը մինչեւ որոշ աստիճան մը հասնելէ ետքը ա'լ անփոփոխ չպիտի մնայ, փոխանակ աւելնալու և քարերն ու մետաղները հալեցնելու:

Հօրեղբայրս խնդիրը ենթադրութիւններու վրայ կը բռնէր, ասանկ որ պատասխան մը չէի կրնար տալ:

— Արդ, ճշմարիտ գիտուններ, ինչպէս Բուառօն, հաստատած են որ եթէ երկրիս կեդրոնը երկու հարիւր հազար աստիճան ջերմութիւն գտնուի, հալած մետաղներուն շոգին ասանկ ճնշում մը պիտի ունենայ որ երկրիս կեղեւը՝ շոգեշարժ մեքենայի կաթսայի մը պէս պիտի պայթի կտոր կտոր ըլլայ:

— Ատիկա, հօրեղբայր, Բուառօնին կարծիքն է, և ո՞չ ուրիշ բան:

— Աղէկ, բայց ուրիշ շատ նշանաւոր երկրաբաններ ալ այդ կարծիքէն են. ասոնք հաշիւ ըրած են որ երկրիս կեդրոնը ո՛չ ջուր կայ, ո՛չ կազ, ո՛չ ալ հալած մարմին, որովհետեւ այն ատեն երկրագունտը երկու անգամ աւելի թեթեւ պիտի կշռէր:

— Թուանշաններով կրնաք ուզածնիդ ապացուցանել:

— Բայց դէպքերուն ի՞նչ կ'ըսես. հրաբուխներուն թիւը երթալով քիչցած է, ըսել է կեդրոնական ջերմութիւնն ալ կամաց կամաց իջած լմնցած է:

— Հօրեղբայր, երբ ենթադրութիւններու սկիք, պատասխան մը չեմ կրնար տալ:

— Ես ալ կ'ըսեմ որ ուրիշ շատ մը հմուտ անձեր իմ կարծիքէն են: Կը լիչե՞ս, երբ Տավի անգլիացի նշանաւոր քիմիագէտը ինծի այցելութեան եկաւ, 1825ին էր:

— Ո՛չ, որովհետեւ այդ օրէն տասնըինը տարի ետքն է որ ծնայ:

— Աղէկ, Տավի Համպուրկէ անցած միջոցին ինծի այցելութեան եկաւ: Գիտական շատ մը խնդիրներու վրայ վիճաբանելէ յետոյ երկրիս կեդրոնը հեղուկ ըլլալուն կամ չըլլալուն վրայ ալ խօսեցոսք: Երկուքս ալ համամիտ էինք թէ հոն հեղուկ վիճակը գոյութիւն չի կրնար ունենալ միակ պատճառով մը՝ որու դեռ գիտութիւնը պատասխան մը տուած չէ:

— Ի՞նչ պատճառով, հարցուցի:

— Որովհետեւ այդ հեղուկ զանգուածը, ովկէանոսին պէս լուսնի ձգողական զօրութեան ազդեցութիւնը պիտի կրէր և օրը երկու անգամ տեղատուութիւններ յառաջ բերելով երկրաշարժի պարբերական ցնցումներու տեղի պիտի տար:

— Բայց ակներեւ է որ երկիրս հրաշեկ վիճակ մը ունեցած է եւ կրնաք ենթադրել թէ կամաց կամաց կեղեւը նոսրելով կրնալը դէպի կեդրոնը քաշուած է:

— Սխալ, պատասխանեց հօրեղբայրս, երկիրս տաքցած էր միակ իր մակերեսային ալրումովը: Այս մակերեսային կազմուած էր բօթասիօմի, սօտիօմի նման մետաղներով՝ որոնք կը բռնկին ջուրի կամ օդի ներկայութեանը, երբ օդին մէջ ջրաշագին խտա-

ցաւ և անձրեւի վիճակին մէջ գետինը ինկաւ, սոյն մետաղները այրիլ սկսան. քանի ջուրերը դրպի խորերը կը թափանցէին այնքան ներքին խաւերը կ'այրէին ու կը բորբոքէին. ասկէ է որ հրաբուխները յառաջ եկած են:

— Այդ ենթադրութիւնը խելքի մօտ է:

— Տափի ապացուց ստիկա հոս իսկ, այս սենեակին մէջ, պարզ փորձով մը: Վերը ըսած մետաղներովս գունտ մը շինեց և վրան քիչ մը ջուր ցրցքնեց. անմիջապէս գունտին մակերևոյթը սկսաւ բորբոքիլ, սքսիտանալ և պզտիկ լեռ մը կազմել, լեռան գագաթը խառնարան մը ձեւացաւ և մանրանկար հրաբուխի մը տեսարանը ընծայեց որու բորբոքած միջոցին գունտը անանկ տաքցեր էր որ ձեռք չէր դիմանար:

Շետակը խօսելով, դատաստին պատճառաբանութիւնները առջի համոզումս խախտել սկսան:

— Կը տեսնե՞ս, Ա.քսէլ, երկրաբանները անհամաձայն են կեդրոնական հուրի տեսութեան վրայ, ես չեմ հաւատար ներքին ջերմութեան, և իրաւ ալ գոյութիւն չկրնար ունենալ: Սակայն ինչ որ է քիչ աստենէն պիտի տեսնենք, և Արն Սաքնիւսէմի պէս պիտի կարենանք այս հարցին վրայ ապահով բան մը գիտնալ:

— Այո՛, գոչեցի եռանդով մը, այո՛, պիտի տեսնենք՝ եթէ հոն բան մը տեսնելու չափ լոյս կ'ընէ:


— Ինչո՞ւ չէ. ելեկտրականութիւնը կրնայ մեզի լուսաւորել, նոյն իսկ մթնոլորտն ալ՝ որու երկրիս կեդրոնին մօտ ունեցած անագին ճնշումը օդը փայլուն կը ցուցնէ:

— Այո՛, ըսի, վերջապէս անկարելի բան մը չէ:

— Ասիկա ապահով է, պատասխանեց հօրեղբայրս յազթական, բայց լուռ կեցիր, մէկը պէտք չէ որ իմանայ և մենէ առաջ երկրիս կեդրոնը երթալու գաղափարը ունենայ:

Բ.

Ահա՛ այսպէս վերջացաւ սոյն յիշատակելի նիստը: Գլուխս ծանրացեր էր. քիչ մը պտտելու համար դուրս ելայ: Փողոցները



Քիչ մը պստելու համար դուրս ելայ

նեղ կուգային, շունչս կը կտրէր, ուստի դէպի Էլպայի եզերք-
ները գացի՝ Համպուրկի երկաթուղիի կայարանին ու քաղաքին
միջև բանող շոգենաւին նաւամատոյցին կողմերը:

Քիչ մը տառջ լսածներէս համոզուած էի. միթէ Լիւտէնպրօք
ուսուցչապետին ազդեցութիւնը չէի՞ կրած. լուրջ բանի մը տեղ
դնելու էի երկրիս կեդրոնը երթալու առաջարկը. խենթի մը մը-
տազննութիւնը՝ թէ ոչ մեծ հանճարի մը գիտական հետեւու-
թիւնները մտիկ քրած էի. Բոլոր ասոնց մէջ ո՞ւր կ'սկսէր ճշմար-
տութիւնը և ո՞ւր կը լրանար սխալը: Հազարաւոր հակասական
ենթադրութիւններու մէջ կը տատամէի առանց մէկուն կառչիլ
կարենալու: Կը յիշէի որ համոզումս տրուած էր. բայց կ'ուզէի
անմիջապէս մեկնիլ և խորհրդածութիւններով ժամանակ չկորսն-
ցնել: Այո՛, այս վայրկեանին սնտուկս պատրաստելու համար բա-
ւական քաջութիւն չպիտի պակսէր ինծի:

Բայց ժամ մը վերջը գրգուռման հանդարտեցաւ, ջիզերս թուլ-
ցան, երկրիս խորերէն՝ Երկրիս երեսը բարձրացայ: «Խելքի դէմ
է ասիկա, գոչեցի, սղջմտութենէ զուրկ է, խելացի մէկու մը ա-
ռաջարկելիք բան չէ. բայց ո՛չ, տեսածս երազ մըն է, գէշ քնա-
ցեր եմ:

Ասանկով Էլպայի եզերքէն վեր կ'ելլէի, մինչև Ալթօնայի
ճամբան, ընտղին էր որ կը մղէր զիս, և չէի խաբուէր. քիչ մը
վերջը կրախպէնը տեսայ որ թեթեւաքայլ Համպուրկ կը վերա-
դառնար:

— Կրախպէն, պօռացի հեռուէն:

Աղջիկը կանգ առաւ, քիչ մը չփոթած, անշուշտ ամայի տեղ
մը իր անունը լսելով: Տասը քայլով քովը հասայ:

— Աքսէ՛լ, ըսաւ չգարմացած: Ա՛հ, ինծի գիմաւորելու եկա՛ր:
Աղէ՛կ, պարոն, աղէ՛կ:

Բայց երեսո նայելով հասկցաւ որ մտատանջութիւն մը, տագ-
նապ մը նկարուած էր դէմքիս վրայ:

— Ի՞նչ ունիս, հարցուց ձեռքը երկնցնելով:

— Կը հարցնե՞ս, գոչեցի:

Եւ չեղեղվայրկեանի մը մէջ երկու բառով գեղանի վերջանաւու-
հիստեղեկացաւ գործին: Վայրկեան մը լուռ կեցաւ. չեմ գիտեր



Թէ սիրտը կը բարախէ՞ր, բայց ձեռքը բնաւ չէր գողար մատնե-
րուս մէջ: Հարիւր քայլի չափ յառաջացանք այսպէս:

— Ա.քսէլ, ըսաւ վերջապէս:

— Սիրելի՛ կրախապէս:

— Ազուոր ճամբորդութիւն մը պիտի ըլլայ:

Կեցած տեղէս վեր ցատկեցի:

— Ա.յո՛, Ա.քսէլ, գիտունի մը եղբորորդիւն արժանի ճամ-
բորդութիւն մը: Աղէկ չէ՞ որ մարդ նշանաւոր ըլլայ սեծ ձեռ-
նարկով մը:

— Ի՞նչ, կրախապէս, չե՞ս համոզեր ինձի որ ասանկ ուղեւո-
րութենէ մը ետ կենամ:

— Ո՛չ, սիրելի Ա.քսէլ, ես ալ հօրեղբօրս ու քեզի ընկերանալ
պիտի ուզէի եթէ ինձի պէս տկար աղջիկ մը աւելորդ նեղութիւն
մը չըլլար:

— Իրամ՛ը կ'ըսես:

— Ա.յո՛:

Ա.խ, կ'ինե՛ր, աղջիկնե՛ր, կանացի սիրտեր որոնք անհասկը-
նալի կը մնան. երբ դուք արարածներուն ամենէն վախիտը չէք՝
է՛ն քաջասիրտը կը գտնաւք: Չեր քով բանականութիւնը գործ
չունի: Ա.յո աղջիկը ինձի սիրտ կուտար ուղեւորութեան ձեռնար-
կելու, ինքն իսկ չպիտի վարանէր մեզի միտնալ: Ինձի յառաջ կը
մղէր, գիտ՛ որ այնքան կը սիրէր:

Շփոթեր մնացեր էի, քիչ մըն ալ, ինչո՞ւ չըսեմ, կ'ամչնայի:

— Կրախապէս, յարեցի, նայինք վաղն ալ ասանկ պիտի
խօսի՞ս:

— Վաղը, սիրելի Ա.քսէլ, հիմակուան ըսածս պիտի ըսեմ:

Կրախապէս ու ես, ձեռք ձեռքի, լուռ ու մունջ ճամբանիս
չարունակեցինք. կրած յուզումներէս ոյժասպառ եղեր էի. «Ի՛նչ
որ ալ ըլլայ, կը մտածէի, Յուլիոսը գեռ շատ հեռուն է, մինչեւ
այն ատեն շատ ու շատ պատահարներ կրնան հօրեղբայրս՝ միտքը
դրածը կատարելէ ետ կեցնել»:

Երբ Քէօնիկզկրասի տունը հասանք, գիշեր եղեր էր: Կը կար-
ծէի թէ ամէն բան հանդարտ պիտի գտնեմ, որովհետեւ այդ ժա-
մուն հօրեղբայրս կը քնանար: Բայց կը սխալէի. դասախօսը կե-

ցեր կը պօռար, կը կանչուըռտէր խումբ մը մարդերու մէջտեղ
որոնք մէյմէկ բան շալկած կը բերէին. ծերուկ սպասուհին շուա-
րեր մնացեր էր:

— Ո՛ւր ես, Ա.քսէլ, պօռաց հեռուն հօրեղբայրս. շուտ ե-
կուր, դեռ մնտուկդ չես կապեր, թուղթերս կարգի չես դրեր,
պայուսակիս բանալին չկայ:

Սարսափեցայ մնացի. ձայնս բռնուեցաւ, հազիւ կրցայ քանի
մը խօսք կ'մ'մալ:

— Ի՛նչ, կը մեկնի՞նք:

— Ա.յո՛, չար տղայ, կ'երթաս պտտելու հոս կենալու տեղ:

— Պիտի մեկնի՞նք, հարցուցի աւելի տկար ձայնով մը:

— Ա.յո՛, վաղը չէ միւս օր, յատուանց կանուխ:

Ա՛լ մտիկ չկրցայ ընել, փախայ պզտիկ սենեակս քաշուեցայ:
Տարակուսելու տեղ չկար: Հօրեղբայրս կէսօրէ վերջի բոլոր ժա-
մանակը անցուցեր էր ճամբորդութեան հարկաւոր առարկաները
գնելու: Տանը բակը լեցուեր էր ջուանէ սանդուղներով, երկա-
թապատ գաւազաններով, բրիչներով, երկաթէ կեռերով, վերջա-
պէս ամէնը միասին տասը մարդու բեռ կ'ըլլար:

Սոսկալի գիշեր մը անցուցի: Յաջորդ առտուն կանուխ ինձի
ձայն տուին. որոշած էի դուռս չբանալ, բայց ի՞նչպէս դիմադրել
անուշիկ ձայնին որ «Սիրելիս Ա.քսիլ» կ'ըսէր:

Սենեակէս ելայ. կը մտածէի որ տակնուվրայ երևոյթս, գու-
նատ դէմքս, անքունութենէ կարմրցած աչքերս Կրախապէսի
գութը պիտի շարժեն:

— Սիրելի Ա.քսէլ, ըսաւ, կը տեսնեմ որ ինքզինքդ գտեր ես,
գիշերուան քունը հանդարտեցուցեր է քեզ:

— Հանդարտե՞ր եմ:

Վազեցի հայելիս նայեցայ. կարծածէս քիչ աւրած էր դէմքս.
չհաւատալս կուգար:

— Ա.քսէլ, ըսաւ Կրախապէս, խնամակալիս հետ երկար բա-
րակ տեսակցեցայ. յանդուզն գիտուն մըն է, անվախ սիրտ մը,
անշուշտ պիտի յիշես թէ դուն ալ անոր սերունդէն ես: Ինձի բա-
ցատրեց ծրագիրները, յոյսերը, ինչո՞ւ և ի՞նչպէս հաւատալը
թէ կրնայ երկրիս կեդրոնը հասնիլ, և պիտի հասնի ալ, ատոր

վտանջ եմ: Ա՛խ, սիրելիս Ա.քսէլ, ի՛նչ աղուոր է ինքզինքը գե-
տութեան համար զոհելը: Ի՛նչ մեծ պիտի ըլլայ Պր. Լիտէնպրօքի
և իր ուղեկցին փառքը: Քու դարձիդ, Ա.քսէլ, մարդ մը պիտի
ըլլաս, իրեն հաւասարը, ազատ պիտի ըլլաս խօսելու, գործելու,
վերջապէս...:

Գեղանի օրիորդը կարմրեցաւ ու ալ չի շարունակեց: Իր
խօսքերը ինծի ոյժ տուին, սակայն նորէն չէի ուզեր մեկնելուս
հաւատալ: Կրաիւպէնի հետ դասախօսին սենեակը գացինք:

— Հօրեղբայր, ըսի, իրա՞ն է որ պիտի մեկնինք:

— Կը հարցնե՞ս:

— Ո՛չ, ըսի դէժ խօսած չըլլալու համար, բայց ինչո՞ւ այս-
չափ կ'աճապարենք:

— Բայց ժամանակը ի՛նչ շուտ կ'անցնի, գիտե՞ս:

— Այսօր Մայիսի 20ն է, մինչեւ Յունիսի վերջերը...:

— Է՛հ, տգէտ պարոնս, կը կործնու որ այդչափ դիւրաւ Իս-
լանտա կ'երթան: Եթէ երէկ խենթի պէս փախած չըլլայիր քովէս
քեզի Քորէնհակի Երթեւեկութեան գրասենեակը կը տանէի, հոն
պիտի տեսնէիր որ Քորէնհակէն ՌէյքեաՎիք ամէն ամսի 22ին
միայն շոգեհաւ մը կը բանի: Եթէ Յունիսի 22ին սպասենք շատ
ուշ կը մնանք և Սքարթարիսի շուքին ս'ըր ինչալը չենք կրնար
տեսնել: Ուստի կարելի եղածին չափ շուտով Քորէնհակ երթալու
է: Գնա՛ սնտուկդ կապէ:

Ի՞նչ պատասխանէի: Սենեակս ելայ, Կրաիւպէն ետեւէս եկաւ
և առաջարկեց որ պայուսակս ինք կարգի դնէ: Ինք բնաւ չէր
յուզուած, առանց աճապարանքի կը տեղաւորէր պէտք եղած ա-
ռարկաները ճամբորդութեան պղտիկ սնտուկի մը մէջ, միւս կողմէ
ալ կը ջանար զիս համոզել: Ետա բարկացայ իրեն դէժ, քանի մը
անշամ քիչ մնաց որ կռիւ փրցնէի, բայց նէ ականջ չէր կախեր
և գործը կը շարունակէր. վերջապէս ամէն բան լնցաւ և վար ի-
ջանք: Առտուընէ մինչեւ իրիկուն բնագիտական գործիքներու,
զէնքերու, էլիքտրական սարքուածներու հայթայթիչներ կ'երթա-
լին կուգային անդադար:

Գիշերը հառաւ. ժամանակը չեմ գիտեր ինչպէս կ'անցնէր:

— Վաղ առտու կանուխ, ըսաւ հօրեղբայրս, ժամը 12ին կը
մեկնինք:

Ժամը գիշերուան չորսն էր երբ անկողին նետուեցայ: Ամբողջ
գիշերը խորխորատներ երազելով անցուցի. այնպէս կ'զգայի որ
հօրեղբորս ձեռքը կը քշէ զիս, անդունդներու մէջ կը գլորիմ, և
ողջ սղ հողին տակ կը թաղուիմ: Անյատակ գահավէժներու մէջ
կ'իմայի՝ միջոցին մէջ ինող մարմիններու յարածուն արագու-
թեամբ:

Ժամը տանըմէկին արթնցայ, յոգնութենէ ու յուզումէս նը-
կուն: Սեղանատուն իջայ: հօրեղբայրս նստէր նախաճաշը կը լա-
փէր. սոսկուժով իրեն նայեցայ, բայց Կրաիւպէն հոն էր, ուստի
ձայն չհանեցի, բայց բերանս բան մը չգրի: Տասնըմէկուկէսին փո-
ղոցին մէջ անիւի ձայն առի. խոշոր կառք մը դրան առջեւ կ'ըս-
պատէր մեզի Ալթօնայի երկաթուղիի կայարանը տանելու համար:
Եուս մը հօրեղբորս բալոր ծրարները վրան կապեցին:

— Քու սնտուկդ ս'ըր է:

— Պատրաստ է, ըսի վրաս մարելիք գալով:

— Ե՛րևա վար բեր, կառախուժը պիտի փախցնենք:

Ճակատապրիս դէժ կուռիլ անկարելի երեւցաւ ինծի, սեն-
եակս ելայ և սնտուկս սանդուղին աստիճաններէն վար սահեցուցի:
Այս միջոցին հօրեղբայրս հանդիսաւոր կերպով Կրաիւպէնի ձեռ-
քին մէջ կը դնէր տանը կառավարութեան «սանձերը»: Գեղանի
վերընտուհիս իր սովորական հանգարտութիւնը կը պահէր. գրկեց
իր պաշտպանը, բայց երբ կարգը ինծի եկաւ, չկրցաւ արցունքի
հատիկ մը զսպել՝ անուշ շրթները այտիս դպցուցած ժամանակ:

— Կրաիւպէ՛նս, գոչեցի:

— Գնա՛, Ա.քսէլ, գնա՛, ըսաւ, նշանածդ կը ձգես հիմայ,
դարձիդ ամուսինդ պիտի գտնես:

Կրաիւպէնը թեւերուս մէջ սեղմեցի և կառք նստայ: Մարթա
և գեղանի օրիորդը դրան սեմէն վերջին երթաք բարով մը ըսին
և ձիերը քառատրոփ մեկնեցան Ալթօնայի ճամբուն վրայ:

Բ.

Ալթօնա՝ Բիլի երկաթուղիի գծին ծայրը կը գտնուի: Քսան վայրկեանէն կայարան հասանք. հօրեղբայրս կարասիները կըռել արձանագրել տուաւ, և գացինք դէմ առ դէմ նստանք վակոնին մէջ: Ժամը մէկն էր, վայրաշարժը սուլեց, մխոցները շարժիլ սկըսան, ճամբայ կըսած էինք:

Երկուքս մինակ էինք: Առտուան ցուրտը, շոգեկառքին շուտ շուտ երթալով տեսարաններուն արագաբար փոխուելը ուշս ուրիշ կողմ դարձուցած էին և ա՛լ չէի մտածեր մեծ խնդրոյն վրայ: Գասախօսը մտքովը աւելի հեռուները կ'երթար, գուցէ երկրիս կեդրոնը հասած կը կարծէր ինքզինքը:

Երեք ժամէն Բիլ հասանք. կարասիները Քօքէնհակի համար արձանագրուած ըլլալով՝ անոնցմով զբաղելու հոգ մը չունէինք: Հօրեղբայրս, աճապարանօք, անանկ լաւ հաշուած էր շոգեկառքի ու նաւերուն ժամերը՝ որ մինչեւ իրիկուն սպասել պարտաւորեցանք: Ելլէնօրա շոգենաւը գիշերը ճամբայ կ'ելլէր: Այս ինը ժամու կորուստը՝ անհամբեր ճամբորդին զայրոյթը գրգռեց, շոգենաւ, կառախուժը, ընկերութիւն, ամէնն ալ կրողին զրկեց՝ եւ գնաց նաւապետը ստիպելու որ անմիջապէս ճամբայ ելլէ, ուրկէ վոնտուեցաւ:

Վերջապէս մութը կոխեց. ժամը չորսին շոգենաւը ճամբայ ելաւ. խաւար գիշեր մըն էր, ծովը ալեկոծ ու ցուրտ հով մը կար, փարօսի պլպլացող քանի մը լոյսէ զատ ուրիշ բան չկրցայ տեսնել:

Առտուան դէմ Քօրէր հասանք, Շէթլանտի արեւմտեան եզերքին վրայ պզտիկ քաղաք մը: Հոս նորէն կառախուժը նստանք և երեք ժամէն Տանըմարքայի մայրաքաղաքը կը հասնէինք: Հօրեղբայրս բոլոր գիշերը աչք չէր գոցեր, կարծեմ աւելի շուտ երթալու համար ստքովը վակոնը կը հրէր:

Դեռ չհասած, ճամբան՝ ձախ կողմերնիս խոշոր շէնք մը տեսանք որ քիչ մը հիւանդանոցի կը նմանէր:

— Յիմարանոց մըն է, ըսաւ մէկը:
— Հոն երթանք աւելի աղէկ է, ըսի մտովի. որչափ ալ մեծ ըլլայ այդ տունը՝ նորէն Լիտէնպրօք ուսուցչապետին յիմարութիւնը պատասպարելու չպիտի բաւէ:

Վերջապէս ժամը չորսն էր՝ երբ Քօքէնհակ ոտք դրինք: Կարասիները Ֆէնիքս պանդոկը փոխադրեցինք, և պարզ զարդարանքէ մը յետոյ Հիւսիսի Հնութեանց թանգարանը գացինք: Տնօնէնը՝ Մր. Թօմսըն, շատ սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ հօրեղբօրս, թէ և ընդունուած է թէ՛ գիտուն մը ուրիշ գիտունի մը պաղ ընդունելութիւն կ'ընէ: Ինքզինքը բոլորովին մեր տրամադրութեան տակ դրաւ. անանկ հաւտացուցինք իրեն որ Իսլանդոսայի մէջ պզտիկ ճամբորդութիւն մը կատարելու միտք ունինք իբր պարզ զբօսաշրջիկներ: Շուտ մը քարափ իջանք տեսնելու թէ մեկնող նաւ մը կա՞յ: Սրտիս մէջ յոյս մը ծլեցաւ թէ փոխադրութեան միջոցը պիտի պակսի. բայց չէ՛: Վալֆիբի պզտիկ դանիական առագաստանաւ մը Յունիս Չին ճամբայ պիտի ելլէր Ռէյքեալիք երթալու համար: Գացինք գտանք նաւապետը՝ Պրն. Պիարն. հօրեղբայրս ուրախութենէն չէր գիտեր ինչպէս ձեռքը սեղմէ, ինչ խօսքով շնորհակալ ըլլայ: Մարդուկը ապշեր մնացեր էր. իրեն համար պարզ բան մըն էր Իսլանտա երթալը՝ քանի որ արհեստն այդ էր. իսկ հօրեղբօրս համար գերագոյն իմաստ մը ունէր: Ստատանորդի նաւապետը օգտուելով այս խանդէն՝ կրկին գին վճարել տուաւ, բայց մենք այդչափ բարակը չէինք նայեր:

— Երկուշարթի առտու, ժամը մէկին նաւը գտնուեցէք, ըսաւ Պ. Պիարն, գրպանը լեցնելով առած դրամը:

Պր. Թօմսընի շնորհակալ եղանք, և Ֆէնիքսի պանդոկը վերադարձանք հազուստնիս փոխելու և ճաշելու համար:

— Հիմա երթանք քիչ մը քաղաքը պտըտինք, ըսաւ հօրեղբայրս, ինչ աղէկ եղաւ աս նաւուն հանդիպելնիս:

Դուրս ելանք: Պր. Լիտէնպրօք կը թողուր որ ուզած տեղս երթամ, ինք ալ հետս կը քալէր, միշտ մտադրազ, առանց ուշադրութիւն ընելու քաղաքին գլխաւոր շէնքերուն որոնց առջեւէն կ'անցնէինք: Լուռ ու մունջ կը քալէինք. ինչպէս չփնտռէի գողորդի վերլանտուհիս. ի՞նչ հաճոյք չպիտի ունենայի հիմա եթէ

կրախալէն հետս ըլլար: Բայց ս'վ գիտէ անգամ մըն ալ պիտի տեսնեմ զինքը:

Սակայն բարձր աշտարակ մը հօրեղբօրս ուշը գրաւեց, ըսաւ որ հոն երթանք: Քանի մը նեղ ու ցեխոտ փողոցներէ անցնելէ ետքը Վօր Ֆրէյլէրս-Քիրք եկեղեցիին առջեւ հասանք: Թէև ասիկա նշանաւոր բան մը չէր երեւար, բայց կարծեմ բարձր գանգակատունը, հոն ելլող բացօդեայ սանդուղը իր աչքին զարկած էին:

- Վեր ելլենք, ըսաւ:
- Բայց խելքերնիս պիտի դառնայ:
- Ուզածս ալ ագ է. վարժուինք:
- Բայց...
- Հետս եկուր, ժամանակ չկորսնցնենք:


Հնագանդեցայ: Դուռը բանալ տուինք և սկսանք վեր ելլել: Հօրեղբայրս առջեւէն կը քալէր, իսկ ես գողգողով իրեն կը հետեւէի: Մինչեւ գանգակին տեղը սանդուղը ներսէն էր, որով շատ դժուարութիւն չքաշեցի, բայց երբ բացը ելանք, գլուխս դառնալ սկսաւ. ինձի անանկ կուգար որ ամբողջ շէնքը կ'օրօրուի. չիյնալու համար երկաթէ պարզ բազրիք մը միայն կար, իսկ սանդուղին աստիճանները քանի երթային կը նեղնային:

- Ա՛լ չեմ կրնար յառաջանալ, գոչեցի:
- Վախկո՛տ, ըսաւ անգութ դասախօսը, ելի՛ր, վեր՛ ելիր:

Ոտքերս կը գողային, սկանջներս բզզալ սկսան, ծունդերուս վրայ քալել սկսայ, քիչ մը ետքը սողալով վեր կ'ելլէի. աչքերս գոցեր էի, վերջապէս հօրեղբայրս օձիքէս քաշեց, աշտարակին ծայրը հասեր էինք:

— Նայէ՛, ըսաւ, աղէկ մը չորս կողմդ նայէ՛, ինքզինքդ անդունդին մէջ նայելու վարժեցուր:

Աչքերս բացի, տուները պզտիկ, տափակցած բան մը կ'երեւէին. գլխուս վրայ խոշոր ամպեր կը թաւալէին. տեսողական պատրանքի մը հետեւանօք ամպերը անշարժ կեցած կ'երեւային իսկ գանգատունը կարծես թէ ահագին արագութեամբ մը կը մըղ ուէր, կը յառաջանար: Հեռուն՝ մէկ կողմը կանաչօրակ դաշտերը, իսկ անդին ճերմակ բլիճերով առաքաստանաւերով ծածկուած էր:



Վօր-Ֆրէյլէրս-Քիրք եկեղեցիին զանգակատունը

ծովը: Առաջին դասս ժամ մը տեւեց: Երբ վար իջանք և ինքը-
զինքս ամուր գետնի մը վրայ զգացի՝ տեսայ որ ոտքերս բռնը-
ուած էին:

— Վազը նորէն պիտի գանք, ըսաւ հօրեղբայրս:

Արդարեւ հինգ օր, իրարու վրայ եկանք այդ աշտարակին
ծայրը բարձրացանք. իրաւ ալ քիչ քիչ վարժուիլ սկսայ:

Պ.

Մեկնելու օրերնիս հասաւ Պրն. Թօմսըն մեզի յանձնարա-
րական նամակներ տուաւ, մին Թրամբ կոմսին՝ Իսլանտայի կա-
ռավարիչին համար, միւսը Պրն. Բօքթիւրսընի՝ եպիսկոպոսին
տեղապահին համար, և երրորդ մը Պրն. Ֆինսէնի՝ Ռէյքեավիքի
քաղաքապետին հասցէին, ի փոխարէն հօրեղբայրս ջերմագին շը-
նորհակալութիւնները նուիրեց:

Յունիսի երկուքն էր, կարասինիս արդէն նաւ փոխադրած
էինք, մենք ալ ժամանակին գացինք սենեակնիս մտանք: Շատ
չսպասեցինք: Վալքիրի բոլոր առագաստները հովին տուած ճամ-
բայ ինկաւ: Ժամ մը ետքը Քորէնհակը կորսուած էր աչքերնուս:
Նաւը սրընթաց էր թէև, բայց առագաստանաւի մէջ կարելի չէ
վտահօրէն հաշուի դնել ճամբորդութեան տեւողութիւնը: Վալ-
քիրի՝ Ռէյքեավիք կը տանէր ածուխ, տան կարասի, խեցեղէն,
բրդեայ հագուստներ ու ցորեն. նաւաղներու խումբը ընդ ամէնը
հինգ դանիացիներէ կը բաղկանար:

— Ճամբորդութիւնը սրբան պիտի տեւէ, հարցուց հօրեղ-
բայրս նաւապետին:

— Տասը օրի չափ, պատասխանեց, եթէ հակառակ հովերու
չհանդպինք:

— Այն ատեն չա՛տ ուշ կը մնանք:

— Ո՛չ, Պրն. Լիտէնպրօք, անհոգ եղիք, ի՛նչ որ ալ ըլլայ,
ժամանակին կը հասցնեմ ձեզի:

Իրիկուան դէմ նաւը անցաւ Սքակէրաքի նեղուցէն. նորվե-



կիոյ ծայրը Լինտնէսի հրուանդանին մօտէն գնաց և Հիւսիսային ծով մտաւ: Երկու օր ետքը Սկովտոյ լեռները հեռուէն նշմարուել սկսան. ու ա՛լ Ստրանտեանը մտանք: Վալքիրի ստիպուեցաւ զիկզակել հիւսիսային բուռն քամիի մը դէմ: Ամսուան ութն էր Սկովտիական վերջին կզկին աչքէ կորոնցուցինք և ուղղուեցանք դէպի Բորգլանտ, Իսլանտայի հարաւային կողմը հրուանդան մը:

Ճամբորդութեան միջոցին ես բնաւ անհանգստութիւն մը չը զգացի. հօրեղբայրս մինչև վերջը հիւանդ էր, այս պատճառաւ շատ կ'ամչնար, սենեակը քաշուած՝ դուրս չէր ելլեր բնաւ, փակուած՝ չորս նեղ որմերու մէջ՝ որոնք կը ճարճատէին ամէն մէկ ալիքի հարուածի. հազարումէկ հարցումներ կ'որոճար մտքին մէջ, առանց մէկուն հետ խօսիլ կարենալու: շիտակը արժանի էի այս վիճակին:

Տասնըմէկին Բորգլանտի գլուխէն անցանք. ծովը այնկոճ էր, վալքիրի երկայն պտոյտ մը ըրաւ Ռէյքեանիսի հրուանդանէն դառնալու համար. այս միջոցին փոթորիկ մը բռնեց մեզի և հազիւ կրցանք քառասունեութը ժամէն, բոլոր առաքաստները գոցած Սքակէնի մէկ խորշը ապաւինիլ. տեղացի նաւուղիդ մը օգնութեան հասաւ և երեք ժամ վերջը Ռէյքեավիքի առջեւ խարխիս նետած էինք:

Դասախօսը սենեակէն դուրս ելաւ, դէմքը աւրուած, գոյնը նետած. դուրսը քարափին վրայ ամբոխը խոնուած՝ հասած ապրանքներուն դուրս հանուելուն կ'սպասէր: Հօրեղբայրս թեւէս բռնելով նաւակամուրջին ծայրը տարաւ և ճոցին հիւսիսային կողմը երկու գագաթով բարձր լեռ մը ցուցուց:

— Մնէֆէլան է, Մնէֆէլը:

Յետոյ շուտ մը հեռանալով նաւակ ցատքեց, բաժնուելու այդ նաւէն որ իր բանար, չըսեմ հիւանդանոցը եղած էր:

Քարափին վրայ զօրավարի հագուստով մէկը կար, պարոն թրամբն էր, կզկին կառավարիչը. հօրեղբայրս ինքզինքը ներկայացուց՝ և տասը վայրկեան Դանիերէն խօսակցութենէ մը ետքը ետ դարձաւ. ես այդ լեզուէն ջրան մը չէի հասկնար. բայց տեսայ որ խօսակցութեան արդիւնքը գոհացուցիչ եղաւ. Պարոն թրամբ

ինքզինքը բոլորովին մեր տրամադրութեան տակ կը դնէր:

Պրն. Ֆինսէն, քաղաքապետը, սիրալիր կերպով ընդունեց մեզի: Մինակ տեղապահը Պ. Քիքթըրսոն հոն չէր գտնուեր, թեմական այցելութեան ելած ըլլալով, բայց անոր տեղը գտանք սքանչելի մարդ մը, Պ. Ֆրիտրիքսըն, Ռէյքեավիքի դպրոցին մէջ բնական պատմութեան դասախօսը. համեստ գիտունը իսլանտերէն ու լատիներէն կը խօսէր, անանկ որ Իսլանտա անցուցած բոլոր ժամանակս մինակ այս մարդուն հետ կրցայ տեսնուիլ. իր տունը երեք սենեակ ունէր, երկուքը մեզի տուաւ ուր աղւոր մը տեղաւորուեցանք:

— Աքսէլ, ըսաւ հօրեղբայրս, գործին ամենէն դժուար մասը կատարուած է.

— Ինչո՞ւ համար էն դժուարը լմնացած է.

— Հապա անանկ չէ՞. ասկէ ետքը մինակ վար պիտի իջնանք:

— Այդ մասին իրաւունք ունիք. բայց իջնալէն վերջը ելլելն ալ կայ:

— Ատիկա բնաւ հօգս չեմ ընէր: Հիմակուհիմա, ես գրատուն պիտի երթամ, նայիմ թէ Սաքնիւսէմի ձեռագիրներէն բան մը կայ մնացած:

— Ես ալ կ'երթամ քաղաքը կը պտըտիմ, դուք չէ՞ք ուզեր անգամ մը տեսնել,

— Ո՛չ, Իսլանտայի մէջ զիս շահագրգռող բանը հողին տակը կը գտնուի և ո՛չ թէ վրան:

Դուրս ելայ ու սկսայ անդին ասդին պտըտիլ: Ռէյքեավիքի փողոցներուն մէջ մարդ գլուրաւ չկորսուիր, որովհետեւ քաղաքը շատ պղտիկ բան մըն էր: Քիչ մը ծովեզերք իջայ, հին ոճով հըրաբուխէ ելած քարերով շինուած եկեղեցին գիտեցի, քառասուն աշակերտ պարունակող Համալսարանին առջեւէն անցայ և երեք ժամ ետքը ա՛լ տեսնելու բան չէր մնացեր:

Քաղաքը շինուած էր երկու բլուրներու մէջտեղ, որոնց մին դէպի ծով կ'երկտրէր՝ իրեն գագաթ ունենալով Մնէֆէլը, իսկ միւսը կազմուած էր լավայի տհազին քանակութեամբ մը, որ ցամաքի կողմէն տհազին պատնէշ մը կը ձեւացնէր: Երջակայները ա-

մէն կողմ հրաբխային ժայռեր դուրս ցցուած էին, բուսաբերութիւնը շատ խեղճ էր, և հազիւ թէ բուսած խոտը կենդանիներուն կը բաւէր:

Անցորդները շատ ցանցաւ էին, ամէն մարդ շուկան գացեր էր մօրիւ ձուկերը չորցնելու, որոնք կղզիին մեծագոյն հարստութիւնը կը կազմեն: Բնակիչները չարքաշ մարդէր էին, քիչ մը գերման ցեղին նման կապոյտ աչքերով: Ատոնք բնաւ չէին ժպտեր, ծանր կերպով խնդուածք մը ունէին, բայց բնաւ ժպտելին չտեսայ: Հագուստին կը բաղկանար սեւ բուրդէ վերարկուէ մը եւ կարմիր եգերքներով անդրավարտիքէ մը, կօշիկներն կաշիի կտորէ մը ձեւացած էր զոր չուանով սրունքներնուն կը փաթթէին:

Ամէն բան աղէկ մը աչքէ անցնելէ ետքը Պ. Ֆրիտրիքսընի տունը դարձայ: Հօրեղբայրս ալ եկեր էր:

Փ.

Երբ ճաշի իջանք Լիտէնպրօք դասախօսը ութը օր ծոմ բռնողի մը պէս սկսաւ անյագութեամբ ուտել: Խօսակցութիւնը, ինչպէս յայտնի է գիտական նեւթերու վրայ կը դառնար: Ամէն մէկ խօսելուս, հօրեղբայրս աչք կ'ընէր որ մեր ապագայ ծրագրերն երու վերաբերեալ խօսք մը բերնէս չի փախցնեմ:

Պ. Ֆրիտրիքսըն՝ դասախօսին հարցուց թէ գրատան մէջ փնտռածը գտա՞ւ արդեօք:

— Ձեր գրատանը մէջ պարտապ դարակներէ զատ բան չկայ:

— Ինչո՞ւ, ութը հազար կտոր գիրքէն աւելի կայ հոն. թէ՛ հին սկանտինուեան լեզուին վերաբերեալ թանկագին մագաղաթներ և թէ՛ Բօքէնհակէն զրկուած միշտ թարմ գրական արտգրութիւններով լեցուն է:

— Ո՞ւր տեղը ութը հազար գիրք կար:

— Պարոն Լիտէնպրօք, ամէնն ալ ժողովուրդին կուտանք որ կարդան: Իսլանտայի մէջ չկայ խեղճուկ գիւղացի մը որ կարգալ չգիտնայ. ընթերցանութեան ճաշակը հոս տարածուած է: Ի՞նչ

կրնանք ընել, գիրքերը դարակներուն ետին փոշտելուն տեղ, աւելի լաւ է որ ժողովուրդին ձեռքը պատըտին: Արդէն 1816ին գրական ընկերութիւն մը հաստատեցինք. որու նպատակն է ժողովուրդին ընթերցանութեան յարմար գիրքեր հրատարակել: Եւրոպացի շատ մը գիտուններ մեզի պատուեցին անդամակցելով այս ընկերութեան, եթէ դուք ալ կը բարեհաճիք մեր թղթակից անդամներէն մին ըլլալու շնորհն ընել, երախտապարտ կ'ըլլանք ձեզ:

Հօրեղբայրս, որ արդէն քանի մը հարիւր կաճառներու անդամ էր, սիրով ընդունեց այս պատիւը:

— Ի՞նչ գիրք կը փնտռէիք և չգտաք, հարցուց Պ. Ֆրիտրիքսըն:

Հօրեղբայրս պահ մը վարանեցաւ, որովհետեւ ճիշդ խնդիրին դպելիք կէտին հասեր էր:

— Պ. Ֆրիտրիքսըն, ըսաւ, կ'ուզէի գիտնալ թէ հին ձեռագիրներուն մէջ Առն Սաքնիւսէմինները կա՞ն:

— Առն Սաքնիւսէմ, պատասխանեց Ռէյքեավիքի դասախօսը: Տասնըվեցերորդ դարուն ապրող այն մեծ գիտունը ըսել կ'ուզէք որ մեծ այշխիսդ մը և մեծ ճամբորդ մըն էր միանգաման:

— Ճիշդ այդ է:

— Իսլանտայի գրական ու գիտական փառքերէն մին:

— Այո՛, այդ է:

— Որու յանդգնութիւնը իր հանճարին կը հաւասարէր:

— Կը նայիմ որ աղէկ կը ճանչնաք:

Հօրեղբայրս ուրախութեան մէջ կը լողար՝ իր դիւցազնին վըրայ ասանկ խօսուելը իմանալով. խնդումէն Պ. Ֆրիտրիքսընը ուտելը կուգար:

— Ի՞ր գրուածքներէն բան մը չունինք:

— Ի՞նչ, Իսլանտայի մէջ...:

— Ո՛չ Իսլանտայի մէջ կրնաք գտնել, ո՛չ ալ ուրիշ տեղ, որովհետեւ Սաքնիւսէմ 1573ին հալածուեցաւ իբր անհաւատ, իր գրուածները այրեցին հրապարակաւ Բօքենհակի մէջ:

— Աղէ՛կ, հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ համար Սաքնիւսէմ իր գործերուն դատապարտուելը տեսնելով՝ ծածկագրութեան դիմեր է պահելու համար գաղտնիք մը:

- Ի՞նչ գաղտնիք, հարցուց Պ. Ֆրիտրիքսըն ուժգին:
- Գաղտնիք մը... որ կակաղեց հօրեղբայրս:
- Արդեօք պահուած մագաղաթ մը ունի՞ք:
- Ո՛չ, պարզ ենթադրութիւն մը կ'ընէի:
- Աղէկ, ըսաւ Պ. Ֆրիտրիքսըն, որ ա՛լ չպնդելու ազնուութիւնը ունեցաւ: Կարծեմ թէ մեր կղզիին հանքային հարստութիւնները տեսնելու պիտի ելլէք:
- Անշո՛ւշտ, պատասխանեց հօրեղբայրս, բայց՝ քիչ մը ուշ կուգամ. ինչ առաջ շատ գիտուններ անցան հոսկէ:
- Այո՛, Պ. Լիտէնպրօք, շատեր աշխատեցան Իսլանտան քննելու, ինչպէս Պարոնայք Օլաֆսէն և Բօվէլսըն, Թրօիլ, Մօպէր արշաւախումբը, և վերջերս Ռէն-Հօրթանս մարտանաւով կղզին եկող գիտունները. բայց նորէն տեսնելիք շատ տեղ կայ:՞
- Այդպէ՞ս կը կարծէք, ըրաւ հօրեղբայրս միամիտ դէմքով մը:
- Այո՛, քանի՛ քանի՛ լեռներ, հրաբուխներ, խառնարաններ կան ուսումնասիրուելիք. նոյն իսկ շատ հեռուները չերթալով՝ տեսէք սա գաղաթը, Մնէֆէլսն է:
- Ա՛հ, ըրաւ հօրեղբայրս, Մնէֆէլսը:
- Այ՛ն, ամէնէն հետաքրքրաշարժ հրաբուխներէն մին է, որու խառնարանը այցելող մը չէ եղած:
- Մարա՞ծ է:
- Հինգ հարիւր տարիէ ի վեր:
- Միտքս նոր բան մը ձգեցիք, ըսաւ հօրեղբայրս ոտքը ոտքին վրայ ա՛նուր բռնելով որպէսզի ուրախութենէն վեր չցատքէ: Գէշ չըլար երթանք տեսնել այդ Մէֆէլ... Ֆէսէլ... Ի՞նչպէս ըսի՞ք:
- Մնէֆէլս, պատասխանեց Պ. Ֆրիտրիքսըն:
- Այս խօսակցութիւնը լատիներէն տեղի ունեցեր էր. ամէն բան կը հասկնայի և հաշիւ կ'ընայի ծիծաղս՝ բռնել, տեսնելով որ հօրեղբայրս պարապ տեղը կ'աշխատի ամէն կողմէ դուրս պուրկացող ուրախութիւնը զսպելու: Անուղ երեւոյթ մը առնել կ'ուզէր և ծեր սագանի մը դէմքը առեր էր:
- Այո՛, կրկնեց, ձեր գիտողութիւնը իրաւացի է, պիտի

- ջանամ Մնէֆէլսէն վեր ելլել և եթէ կարելի է խառնարանը գննել:
- Շտա կը ցաւիմ որ, յարեց Պ. Ֆրիտրիքսըն, զբաղումներս չեն ներեր որ բացակայ գտնուիմ, թէ ոչ սիրով պիտի ընկերանայի ձեզ:
- Ո՛հ, ո՛չ, ո՛չ, պատասխանեց փութով հօրեղբայրս, մէկուն անհանգստութիւն տալ չեմ ուզեր, Պ. Ֆրիտրիքսըն, բոլոր սըրտովս շնորհակալ եմ: Ձեզ նման գիտունի մը ներկայութիւնը թէև թանկագին է. բայց ձեր պաշտօնին պահանջումները...
- Կը սիրեմ կարծել թէ, հիւրընկալիս, իր խլանտացիի պարեմա մի հոգիովը չի կրցաւ հօրեղբորս չարամտութիւնը գուշակել:
- Շտա աղէկ կ'ընէք. այդ հրաբուխէն սկսելով, Պ. Լիտէնպրօք, Բայց ի՞նչպէս Մնէֆէլսի դերակղզին պիտի երթաք:
- Մովի ճամբով, ծոցէն կ'անցնինք, ամէնէն կարճն սա է:
- Այո՛. բայց անկարելի է:
- Ինչո՞ւ:
- Որովհետեւ և ո՛չ իսկ նուազ մը ունինք Բէյքեափիքի մէջ:
- Չար սասանայ:
- Աւելի լաւ է ցամաքէն ելթալ, ծովեղերքին հետեւելով. թէեւ քիչ մը երկար կը տեւէ՝ բայց հետաքրքրական է:
- Իրաւունք ունիք, երթամ առաջնորդ մը ճարեմ:
- Հատ մը ունիմ ես, պատրաստ:
- Վտտահելլօ, խելացի՞ մէկն է:
- Այո՛, էյտէրի սրարդ է, ճարպիկ սէկն է, շատ աղուր դանիերէն կը խօսի:
- Ե՞րբ կ'ընամ տեսնել:
- Վաղը, եթէ կը հաճիք:
- Ինչո՞ւ այսօր չէ:
- Որովհետեւ վաղը միայն կ'ընայ գալ:
- Ուրեմն վաղը, ըսաւ հօրեղբայրս հառաչելով:
- Այս կարեւոր խօսակցութիւնը վերջացաւ գերման գիտունին խլանտացի գիտունին ուղղած ջերմագին շնորհակալիքներով, ճաշի միջոցին հօրեղբայրս շատ բան սորվեր էր: Սաքնիւսէմի պատմութիւնը, ծածկագիր գրուելուն պատճառը, թէ՛ հիւրընկա-

նիս մեզի հետ չպիտի մնայ և վերջապէս՝ լաշորդ օրը վստահելի առաջնորդ մը պիտի ունենանք:

Իրիկուան նորէն պզտիկ պտոյտ մը ըրի և կանուխկեկ դարձայ պառկեցայ: Երբ առտուն արթնցայ, քովի սենեակին մէջ հօրեղբօրս ձայնն առի, շուտ մը ելայ հագուեցայ և քովը գացի: Հօրեղբայրս ոտքը ձեռքը շարժակելով կը խօսէր բարձրահասակ և ուժեղ երեւոյթով մէկու մը հետ: Այս խօսակիցը՝ ձեռքը ձեռքին վրայ հանդարտ ու լուրջ դիրքով մը մտիկ կ'ընէր առանց ամենափոքր շարժում մը ընելու, մինակ, այս' կամ ո՛չ ըսելու համար գլուխը առաջ կամ ետ կը շարժէր, այս ալ անչափ թեթեւ կերպով որ, ուսերէն վար կախուած դեղին մագերը հազիւ թէ կերերային:

Այս մարդը տեսնողը չէր կրնար գուշակել թէ որսորդ մըն է ան, բայց վերջէն Պ. Ֆրիտրիքսըն բացատրեց ինծի թէ «էյտէրի որսորդ» էր, արգարեւ այս թռչուններու փետուրները, որոնք կղզիին մեծ աղբիւրներէն մին են, հաւաքելու համար շատ շարժում ընելու պէտք չկայ: Ամբան առաջին օրերուն, էյտէրի էգը՝ տեսակ մը սիրուն բազ, կ'երթայ ծովեզերքի ժայռերուն մէջ լսյն մը կը շինէ, գոր կը ծածկէ կուրծքէն բրցուցած խիստ նուրբ փետուրներով: Որսորդը կուգայ բոյնը կ'առնէ, իսկ թռչունը ուրիշ մը կը շինէ. որսորդը նորէն կուգայ բոյնը առնելու, շարունակաբար, մինչեւ որ այլ եւս էզին վրայ փետուր չմնայ: Կարգը կուգայ արուին՝ իր փետուրները փեթթելու. որսորդը այդ բոյնին չգպիր, որովհետեւ առուտուրի մէջ շատ արժէք չունենար արու թռչունին փետուրը. ուստի բոյնը կը լմնայ, թռչունը հաւկիթը կ'ածէ ու կը թխտէ: Էյտէրիները՝ կարծես թէ որսորդներուն դիւզիւրութիւն մը տալու համար, իրենց բոյները փոխանակ ցից ժայռերու վրայ հաստատելու, դիւրամտաչելի տեղեր կը շինեն:

Հօրեղբօրս խօսակիցը՝ Հանս, մեր ապագայ առաջնորդն էր, որ Պրն. Ֆրիտրիքսընի յանձնարարութեամբ եկած էր հօրեղբօրս հետ պայմաններուն վրայ խօսելու: Ասանկ շուտ լմնող սակարկութիւն չէի տեսած, որովհետեւ ո՛չ հօրեղբայրս վճարելիք վարձքին վրայ դիտողութիւն կ'ընէր, ոչ ալ Հանս ստանձնելիք գործին ծանրութեան վրայ առարկութիւններ կը յարուցանէր: Որոշուե-



Հանս



ցաւ որ առաջնորդը դասախօսին ծառայութեան մէջ մնայ որքան
առեւն որ մեր գիտական խաղաղութիւնները տեսնեն. ասոր փո-
խարէն հօրեղբայրս ամէն շաբաթ իրիկուն առաջնորդին պիտի
վճարէր 80 դահեկանի մօտ գումար մը: Հանս մերժեց կանխա-
վճար մը ընդունիլ և քաջուհեցաւ, Յունիս ԱՅին մեկնելու պատ-
րաստ ըլլալու խոստումով:

Դեռ այդ օրուան հասնելու համար 18 ժամ ունէինք. ժամա-
նակ անցընելու համար սկսանք մէկիկ մէկիկ գործիքնիս ու ճամ-
բորդութեան կարասինիս ձեռքէ անցընելով լաւ մը տեղաւորել:

Գործիքներն էին. —

1. — Հարիւրամասնեայ ջերմաչափ մը որ մինչեւ 150 աստի-
ճան կը ցուցնէր: Այս չափը ինծի աւելորդ կամ անբաւական ե-
րեւցաւ: Աւելորդ՝ եթէ մեր իջնելիք միջավայրին բարեխառնու-
թիւնը չափելու գործածուէր, քանի որ հոն հասնելէ առաջ պիտի
խորովէինք: Անբաւական, եթէ հալած մետաղներու կամ ջերմուե-
կներու տաքութիւնը հասկնալ ուզէինք:

2. — Ճնշեալ օդով անգայտաչափ մը, որ մէկ մթնոլորտէ վեր
ճնշումները ցոյց կուտար:

3. — Հակման և շեղումի երկու կողմնացոյց:

4. — Գրոնոմէթր մը Համպուրկի միջօրէականին վրայ լար-
ուած:

5. — Գիշերուան դիտակ մը:

6. — Ռումքորֆի երկու գործիք, որոնք ելեքտրական հո-
սանքի մը միջոցաւ, յատուկ լապտերներ կը լուսաւորեն: Այս
լապտերները ոչ ջուրի մէջ կը մարին և ոչ ալ օդի պակասութենէ:

Ձէնքերն էին երկու հրացան և երկու ըէվօլվէր: Չեմ գիտեր
թէ զէնքերը ի՞նչ պիտի ընէինք, քանի որ երթալիք տեղերնիս
ո՛չ վայրենի կենդանի կար ոչ ալ որսի:

Գործիքները կը բազկանային երկու բահէ, երկու բրիչէ, մե-
տաքսէ եղնարանէ մը, երեք երկաթապատ գաւազանէ, կացինէ
մը, մուրճէ մը, 12ի չափ երկաթէ գամերէ ու ցիցերէ և երկայն
հանգուցաւոր շուտններու քանի մը տրցակէ:

Իբր ճամբու պաշար, վեց ամուսն բաւելու չափ սղած միս
և պաքսիմատ ունէինք. հօրեղբայրս կը յուսար որ ճամբան գետ-

նախոր աղբիւրներ կը գտնենք, ուստի շուրի համար հոգ չըրաւ :
 Հօրեղբայրս չմոռցաւ նաև հետը առնել նաև դիւրատար դե-
 դարան մը և շատ մը ծխախոտ, նոյնպէս մէջքը կապեց կաշիէ
 գօտի մը որու կարուածքներուն մէջ շատ մը ոսկի եւ արծաթ
 դրամներ կային :

Վերջապէս մեկնելու օրը հասաւ : Առտուն կանուխ չորս ձի-
 երու խխնջիւնը արթնցուց զիս . շտապով հագուեցայ ու փողոց
 իջայ : Հանս բեռները ձիերուն վրայ կը կապէր անագլուտ ճարպի-
 կութեամբ մը, իսկ հօրեղբայրս քովն ի վեր, ըրած գործէն աւելի
 ազմուկ կը հանէր : Ժամը 12ին ամէն բան պատրաստ էր . հրա-
 ժեշտ առինք մեր ագնիւ հիւրընկալէն և ճամբայ ինկանք :

Օգը ամպամած էր, ո՛չ նեղացուցիչ տաք կար ո՛չ ալ անձրեւ
 կուգար, ճշմարիտ զբօսաշրջիկի օգ մը կ'ընէր : Հանս առջեւէն կը
 քալէր, ետեւէն կուգային երկու ձիերը՝ որոնք բեռները կը տա-
 նէին, վերջապահը կը կազմէինք հօրեղբայրս ու ես՝ միւս երկու
 ձիերուն վրայ : Գանգատելու տեղ մը չունէինք մեր հեծանելիներ-
 քէն, որոնք թէեւ փոքր բայց արագընթաց էին և խիստ տոկուն
 կ'երեւէին : Հօրեղբայրս սկսաւ անոնց գովեստը կարգալ ինծի,
 իսկ ես մտքէս կը խնդայի իրեն վրայ որ միշտ կը ջանար երկար
 սրունքները վեր բռնել գետինը չքուռելու համար : Ճամբան քանի
 մը գիւղեր կանգ առինք քիչ մը հանգստանալու՝ համար : Գիշեր
 եղեր էր երբ կարտէր գիւղը հասանք :

Պ.Պ.

Թէեւ գիշերը վրայ հասեր էր, բայց բնաւ մութ չէր : Իսլան-
 տայի գտնուած լայնութեան աստիճանին տակ արեւը մարը չի
 մտնէր Յունիս և Յուլիս ամիսներուն մէջ, բայց ցուրտը սաստիկ
 էր . մտիլ սկսայ :

Գիշերը անցնելու համար պզտիկ խորձիթ մը մտանք : Տանտէրը
 ձեռքը մեզի երկնցուց և առանց արարողութեան ներս հրաւիրեց :

Ընդամէնը չորս սենեակ ունէր այս տունը . խոհանոցը, գործատե-
 ղին, ընտանիքին ննջարանը և հիւրերու յատուկ սենեակը : Յե-
 ղունը շինողները բնաւ հօրեղբօրս վրայ չէին մտածած, անանկ որ
 խեղճը քանի մը անգամ գլուխը դուրս ցցուած գերաններուն
 զարկաւ :

Մեզի յատկացուած սենեակը բաւական ընդարձակ սրահ մըն
 էր . յատակը ծեծուած հողով ծածկուած և միակ պատուհանով մը
 լուսավորուած, որու ապակիին տեղ կը բռնէր ոչխարի ձգտած
 մորթ մը : Անկողինները կը բաղկանային կարմիր ներկուած փայտէ
 տեղերու մէջ ձգուած չոր խոտէ : Ասկէ աւելին չէի փնտուեր . մի-
 նակ նեղացուցիչ բանը չոր ձուկի հոտ մըն էր, որ բոլոր տունը
 կը բռնէր :

Ճաչէն առաջ տան տէրն ու տիրուհին «երջանիկ եղիր» բա-
 նաձեւով բարի գալուստ մաղթեցին մեզի, այտերնուս վրայ մէյ-
 մէկ համբոյր դնելով : Չմոռնամ ըսել թէ Իսլանտուհին տասնըինը
 զաւակ ունէր, որոնց ամէնն ալ տամետիրոջ օրինակին հետեւեցան :
 Այս արարողութենէն վերջը սեղան նստանք . ամէնը քսանըջորս
 հոգի էինք, մին միւսին վրայ սեղմուած : Ճաշը կը բաղկանար
 ապուրէ մը, չորցած ձուկէ, տեսակ մը մածուցի պէս բանէ եւ
 ջրախառն կաթէ : Այնչափ անօթի էի որ առջիս գրուածը լափեցի
 անյագօրէն . վերջապէս պառկելու ժամանակը եկաւ ու ես անկո-
 ղին ինկայ . չեմ գիտեր ինչպէս շուտ մը առտու եղաւ, երբ ար-
 թնցայ բաւական ուշ էր :

Վերջին մնաք բարով մը ըսինք հիւրասէր Իսլանտացիին եւ
 շատ զժուարաւ պզտիկ գումար մը ընդունել տալէ ետքը ճամբայ
 ելանք : Հետեւեալ երեք չորս օրերը նշանակելի դէպք մը չպա-
 տահեցաւ :

Պ.Պ.

Յունիս ՉԱի իրիկունը Սթարի հասանք : Այս գիւղը պազալթէ
 պատերով բռնուած ժայռ մըն է :

Գիտենք թէ պազալթը հրային ծագում ունեցող ժայռ մըն է :
 Այս ժայռերը խիստ կանոնաւոր կերպով մը շարուած են իրարու

վրայ, կարծես թէ բնութիւնը զաննք կառուցանելու համար կարկին, քանակ ու կապարաւար գործածած է, և յիրաւի ստեղծած է սնանկ գործ մը, որու չին կրնար հաւասարիլ հին Բաբելոնի և Հելլենաստանի շքեղ պերճութիւնները:


Իմացած էի որ Իսլանտայի մէջ «Հսկաներու ճամբայ» մը կար և Հերրիգեաններու մէջ ալ Ֆինկալի քարայրը, բայց պազալդի կառուցուածք մը բնաւ չէի տեսած: Արդ, այդ տեսարանը Սթաբիի մէջ աչքիս առջեւ կը պարզուէր:

Մոցին ամբողջ եղերքը, ինչպէս ամբողջ դերակղզիներ, կազմուած էր կարգ կարգ ուղղահայեաց սիւներէ՝ երեսուն սոք բարձրութեամբ: Ասոնք իրենց վրայ կը բռնէին հորիզոնական գիրքով դրուած սիւներէ սեղուն մը, որու ամբողջութիւնը կէս կամար մը կը ձեւացնէր ծովուն վրայ: Տեղ տեղ բնական ազդեցութեան տակ ճեղքեր բացուած էին որոց մէջէն ծովուն փրփրոտ ալիքները ներս կը խուժէին: Քանի մը պազալդի կտորներ, սւրոնք ալիքներու սաստկութենէն փրթած էին՝ հողին վրայ կ'երկընային, նման հին տաճարի մը մնացորդներուն: Ահա՛ այս էր վերջին դիտած կէտս երկրի երեսը: Հանս գիտմամբ մեզի հոս բերած էր:

Գիշերը գիւղերէցին տունը անցուցինք, որ աւելի ձկնորս ու պայտառ էր արհեստով ու բնաւորութեամբ, քան թէ Աստուծոյ բանին քարոզիչը: Երեւակայեցէք որ իր վերջին երթաք բարովը չափազանց գիներով ցուցակ մը եղաւ. իբր թէ իր տունը պանդոկ մը եղած ըլլար: Հօրեղբայրս առանց դիտողութեան վճարեց ու մեկնեցանք:

Հանս երեք բեռնակիր վարձեր էր մեր կարասիները փոխադրելու համար: Հօրեղբայրս իմացուցած էր իրեն թէ կարելի եղածին չափ խառնարանին մէջը պիտի իջնենք. հաւատարիմ առաջնորդը մինակ գլուխը դէպ ի առաջ ծռած էր ի նշան հաւանութեան. ուր որ ալ երթայինք իրեն համար միեւնոյն բանն էր:

Այս դիտողութեան վրայ ուշաբերեցայ: Մինչեւ հիմա ճամբորդութեան այլազանութիւնները, տեսած նոր երկիրներս՝ մշտքէս վաճած էին զիս տազնապող գաղափարները, բայց հիմայ նորէն խորհիլ սկսայ թէ բ՛ուն ճամբորդութեան նպատակը ի՞նչ էր:



Ֆինկալայի քարայրը

Այլ բան մը չէի կրնար ընել հիմա, ետ կենայլու ժամանակը անցեր էր. հօրեղբօրս հետ երթալը՝ Համպուրկ եղած ժամանակնիս կրնայի մերժել, բայց հիմա որ Մնէֆէլսի ստորոտը հասանք, այդ բանը անկարելի էր: Միւս կողմէ միտքս գէշ բաներ կ'իյնային:

— Տեսնենք, կ'ըսէի ինքնիրենս, Մնէֆէլսի գազաթը պիտի ելլենք, լա՛ւ. խառնարանը պիտի իջնենք, աղէ՛կ. ուրիշ շատ մարդիկ մինչեւ այգքանը ըրած և բան մըն ալ չեն եղած: Բայց մենք հոգ կանգ չպիտի առնենք, մինչեւ երկրիս փորոտիքը պիտի թափանցենք, ներքին լաքիւրինդոսներու մէջ պիտի կորուզուինք՝ եթէ Սաքնիւսէմ իրաւ ըսած էր: Արդ, ո՞վ կրնայ սպացուցանել թէ Մնէֆէլս յաւիտեան մարած մնալու դատապարտուած է. ո՞վ կ'ըսէ թէ նոր բորբոքում մը չպատրաստուիր: 129էն ի վեր ճիւղը կը քնանայ, չկրնա՞ր ըլլալ որ մէկէն ի մէկ արթննայ: Եթէ արթննայ, մենք ի՞նչ պիտի ըլլանք:

Անչափ կը խորհէի այս հարցումին վրայ որ ամէն քնանալուս բորբոքում մը կ'երագէի: Շիտակը՝ հրարուխներէ դուրս նետուած ժայռերու դէր կատարելը հաճելի բան չէր: Վերջապէս չգիմացայ. գացի հօրեղբօրս յայտնելու զիս տանջող գաղափարը: Բոլոր վախու կէտերս պարզեցի իրեն, և սպասեցի որ ուզածին պէս բախանայ:

— Ես ալ խորհեցայ, ըսաւ հօրեղբայրս պարզապէս:

Ի՞նչ ըսել կ'ուզէր: Բանակութեան ձա՞յնն էր որ կը խօսէր իր մէջ: Ծրագիրները յետաձգելու մի՞տք ունէր: Ի՞նչ ազուր բան կ'ըլլար: Պահ մը լուսութենէ վերջը մինչ չէի համարձակեր հարցում մը ընել, յարեց:

— Ես ալ մտածեցի այդ կարեւոր կէտին վրայ, որովհետեւ չեմ ուզեր անխորհմարտ վարուիլ,

— Անշուշտ, պատասխանեցի ուժգին:

— Վեց հալիւր տարիէ ի վեր Մնէֆէլս համբ է, բայց կրնայ ըլլալ որ մէկէն ի մէկ խօսի: Արդ, ամէն բորբոքումէ առաջ լաւ ճշդուած կարգ մը երեւոյթներ տեղի կ'առնենան: Արդ, բնակիչները հարցաքննեցի, գետինը զննեցի և կրնամ ըսել թէ, Աքսէլ, բորբոքում տեղի չպիտի ունենայ:

Քար կտրեցայ:



— Խօսքիս վրայ կը կասկածի՞ս, ըսաւ հօրեղբայրս, լա՛ւ, հետո եկուր:

Մեքենաբար հնազանդեցայ: Հօրեղբայրս սկսաւ յառաջանալ տեսակ մը դաշտի մէջ, եթէ կարելի է դաշտ անուռը տալ այս քարերու և պապալթի կտորներու կոյտին:

Անդին ասդին ջերմուկներու արծակած շոգին կը նշմարուէր, որոնք ուժգին օդին մէջ կը տարածուէին: Ասոնք տեսնելով վախս աւելի շատցաւ:

— Կը տեսնե՞ս այս շոգիները, Ա.քսէլ, հասկցիր հիմա թէ ալ վախնալու բան չունինք:

— Ինչո՞ւ համար, գոչեցի:

— Ասիկա աղէ՛կ միտքդ պահէ. բորբոքումէ քիչ առաջ այս ջերմուկները աւելի կատաղի երեւոյթ մը կ'առնեն ու բոլորովին կը ջնջուին, որովհետեւ ամէնը միասին խառնարանին սէջ կը հաւաքուին դուրս ելլելու համար: Եթէ այս շոգիները միշտ իրենց սովորական զօրութիւնը պահեն, եթէ գիտես որ հովին ու անձրեւին տեղ՝ ծանր ու հանդարտ օդ մը չընեն, կ'ընան հետեւցնել թէ բորբոքում տեղի չպիտի ունենայ:

— Բաւական է: Երբ գիտութիւնը կը խօսի, մեզի լռել կը մնայ:

Գլուխս կախ ետ դարձայ: Գիտական առարկութիւններով հօրեղբայրս յաղթած էր ինձի: Բայց տակաւին յոյս մը կը մնար: Եթէ խառնարանին յատակը իջնելով ստորերկրեայ ճամբայ մը չը չգտնէինք, աւելի խորը իջնել անկարելի կը դառնար:

Ամբողջ գիշերը մղձաւանջով անցուցի. հրարուիներ կ'երազէի, ինքզինքս միջոցին մէջ նետուած կ'զգայի՝ հրային ժայռի մը պէս: Յաջորդ օրը մեկնեցանք հիւրամերժ քարոզիչին տունէն. բեռնակիրները շարկած էին մեր կարասիները, գողձիքները և ուտելիքները: Հօրեղբայրս ու ես մէյմէկ երկաթապատ գաւազան ու հրացան առած էինք: Հանս՝ շրջահայեացութեամբ տիկ մը ջուր աւելի առած էր:

Ք. Ե.

Մնէֆէլը հինգ հազար ոտք բարձրութիւն ունի և իր կըրկնակ կոնքով կը վերջանայ խտաքարային գօտիէ մը, որ կղզիին լեռնազրական դրութիւնէն բոլորովին ազատ է: Մեր մեկնած կէտէն անկարելի էր տեսնել իր երկու գագաթները, այլ կը նշմարէի ձիւնէ անագին գտակ մը՝ հսկային ճակտին վրայ իջած:

Իրարու ետեւէ կը քալէինք, գլուխնիս ունենալով որորդը որ նեղ ճամբաներու մէջէ կ'անցընէր մեզի, անանկ որ իրարու հետ խօսիլ հնար չէր:

Սթարիի ծոցին պապալթէ պատէն անդին կ'սկսէր բուսական ու նեարգային կիզահողէ կազմուած գետին մը՝ մնացորդ թերակղզիին ծանծաղուտներու նախնի բուսականութեան: Ջեռուցիչ նիւթի այս քանակը կը բաւէր ամբողջ դար մը բոլոր Իսլանտայի բնակիչները տաքցնելու: Սոյն կիզահողի ծածքը մինչեւ եօթանասուն ոտք բարձրութիւն ունէր և կազմուած էր ծակոտ կիզաքարի թերթիկներով բաժնուած՝ կրացած բուսային մնացորդներէ:

Իբր ճշմարիտ եղբորորդի Լիտէնպրօք ուսուցչապետին և հակառակ զիս պաշարող գաղափարներուս հետաքրքրութեամբ կը գիտէի այս բնապատմական անագին աշխատանոցին հանքային շահագրգռութիւնները: Միեւնոյն ժամանակ մտքիս առջեւէն կ'անցընէի Իսլանտայի ամբողջ երկրաբանական պատմութիւնը:

Այս հետաքրքրաշարժ կղզին յարաբերաբար նոր շրջանի մը մէջ ջուրերէն դուրս ելած է: Կարելի է նոյն իսկ անգագլի շարժումով մը ջուրերէն վեր կը բարձրանայ: Եթէ տա իրաւ է, իր ծագումը ներքին հուրի մը ազդեցութեամբ եղած է: Որով Տավիի տեսութիւնը, Սաքնիւսէմի ծածկագիրը, հօրեղբորս մտադրութիւնները, բոլորն ալ ջուրը կ'իյնային: Սոյն ենթագրութեամբ սկսայ ուշադիր հողին բնութիւնը քննել և շուտով հասկցայ թէ ի՞նչ երեւոյթներ իրարու յաջորդելով այս կղզին ձեւացած էր:

Իսլանտա, մորային հողերէ բոլորովին զուրկ, կազմուած է

ամբողջովին հրաբխային կիզաքարէ, այսինքն ծակոտկէն կազմութիւն ունեցող քարերու և ժայռերու կոյտէ մը: Հրաբուխներու գոյութենէն առաջ դրաբեան ժայռերու կոյտ մըն էր՝ որ կեդրոնական ճնշումներու տակ կամաց կամաց ջուրերէն դուրս ելած էր. ներքին հուրերը տակաւին դուրս պոսթկացած չէին:

Բայց ժամանակ յետոյ, կղզիին հարաւ արեւմուտքէն դէպ ի հիւսիս արեւելք լայն ձեղք մը բացուեցաւ, ուրկէ քիչ առ քիչ դուրս վազեց խստաքարի ամբողջ զանգուածը: Դեռ երեւոյթը հանդարտօրէն տեղի կ'ունենար: Ձեղքը ահագին բացութիւն մը ունէր և հալած նիւթերը երկրիս խորերէն դուրս նետուած, տարածուեցան ընդարձակ տարածութիւններու վրայ, տեղ տեղ ուռեցքներ ձեւացնելով: Այս միջոցին է որ երեւցան ֆելտսպաթը, ծիրանաքարը և հատաքարը:

Բայց ի շնորհս այս հոսուածին, կղզիին թանձրութիւնը մեծցաւ՝ որով իր դիմագրերու այժմ ալ շատցաւ: Երբ խստաքարի կեղեւը պողեցով ամէն ձեղք գոցուեցաւ, կրնաք երեւակայել թէ ինչ ահագին քանակութեամբ կազ հաւաքուեցաւ իր կողերուն մէջ: Արդ հասաւ ատեն մը, որ փակուած կազին մեքենական այժը այնքան աճեցաւ որ ծանր կեղեւը սկսաւ բարձրանալ և մէջտեղերը բարձր հնոցներ բացուեցան: Կեղեւի այս բարձրացումէն կազմուեցաւ հրաբուխը և անոր գագաթը ծակուեցաւ խառնարանի մը գոնը:

Ասկէ վերջը բորբոքման երեւոյթներուն յաջորդեցին հրաբխային երեւոյթները: Նոր բացուած ծակերէն պապալդի արտաքսուումներ տեղի ունեցան՝ որու սքանչելի նմոյշները տեսայ անցած դաշտերնուս մէջ, երբ կը քալէի այս ծանր՝ գոց մոխրադոյն ժայռերուն վրայէն որոնք պողեցով իրար փակած՝ վեցանկիւնի խարխառով բլրերդներու ձեւով կազապարուած էին:

Յետոյ, երբ պապալդի ժայթքումը լմնցած էր, հրաբուխը, որու այժը աւելցած էր ուրիշ խառնարաններու փակուելովը, անցք տուաւ լաւաներու, հրաբխային կիզաքարերու, և հրաժէտ հանքային նիւթերու:

Ինչպէս կը տեսնէք, այս երեւոյթները որոնք իրարու յաջորդելով կղզին ձեւացուցած են, բոլորն ալ ներքին կրակի մը ազ-

դեցութեան տակ կատարուած են, ուրեմն յիմարութիւն էր պընդելը թէ մշտնջենաբար հրաշէկ վիճակի մէջ չէ երկրիս կեդրոնը, և ամենամեծ յիմարութիւն էր՝ հոն երթալու համար ճամբայ ելլելը:

Ճամբան երթալով կը դժուարանար, ժայռի կտորներ աջ ու ձախ կը ցցուէին. ամենէն մեծ վախս վար գլտորիւն էր:

Երեք երկար ժամեր տաժանագին քալուածքէ մը յետոյ, լեռան ստորտը հասանք: Հանս դադարի նշանը տուաւ պղտիկ նախաճաշ մը ընելու համար: Հօրեղբայրս շուտ լմննալու համար երկու պատուար մէկ կ'ընէր:

Ժամ մը հանգիստէ հտքը ճամբայ ելանք: Հիմա սկսեր էինք բուն լեռան կողին վրայ մագլցիլ: Տեսողական պատրանքով մը Սնէֆէլտի գագաթը շատ մօտիկ կ'երեւնար ինձի, բայց քանի քանի ժամերէ ու ինչ յոգնութիւններէ հտքն է որ հոս հասանք: Ճամբուն վրայի քարերը գետակներու պէս կը գլորէին սաքերնուս տակ և կ'երթային մինչեւ դաշտին մէջ կ'իջնային:

Հոս պարտաւոր եմ ըսելու թէ մինչև վերջը հօրեղբայրս քովէս չհեռացաւ՝ պէտք եղած ժամանակ օգնութեան հասնելու համար. յիրաւի ալ, մէկէ աւելի անգամներ իր բազուկը սպահով յենակէտ մը կ'ըլլար ինձի:

Ժամ մը մագլցելէ հտքը, լեռան ձիւնապատ հողին վրայ տեսակ մը սանդուղի առջեւ հասանք, որ կազմուած էր հրաբուխէ դուրս նետուած քարի հեղեղներէ: Եթէ այս հեղեղներուն անկումը լեռան կողերուն բերմամբ տարբեր ուղղութիւն մը առած չըլլար, շիտակ պիտի երթային ծովին մէջ նոր կղզիներ ձեւացնել:

Իրիկուան ժամը մէկին, սանդուղին երկու հազար աստիճաններէն անցանք և հասանք սարահարթի մը մէջ, որու վրայ կը յենուր բուն իսկ խառնարանը:

Մովը կը տարածուէր մենէ երեք հազար երկու հարիւր սաք վար. մշտնջենական ձիւնի սահմանէն անցած էինք: Տաժանելի ցուժտ մը կ'ընէր և հովը կը փչէր սոսկալի կերպով: Բոլորովին պարտասած էի. հօրեղբայրս տեսաւ այս վիճակս և հակառակ անհամբեր ընաւորութեանը նշան ըրաւ առաջնորդին որ կանգ առնէ:

— Օֆվանֆէօր, պատասխանեց վերջինը գլուխը օրօրելով:

— Կարծեմ քիչ մը աւելի վեր ելլելու է, ըսաւ հօրեղբայրս :
Յետոյ Հաննի հարցոց պատճառը :

— Միսթուր, ըսաւ առաջնորդը :

— Ես՝, միսթուր, կրկնեց խաւնտացիներէն մին ահարեկ երեւոյթով մը :

— Ի՞նչ կը նշանակէ այս բառը, հարցուցի մտատանջ :

— Տե՛ս, ըսաւ հօրեղբայրս :

— Դէպի դաշտը նայեցայ, չեղաքարի, աւազի և փոշիի ահագին սիւն մը կ'սլորտկէր թաթառի մը պէս : Հովը գայն կը բերէր Սնէֆէլտի կղզիին վրայ ուր մենք կառչած էինք : Եթէ մեր վրայ հասնէր, իր գալարներուն մէջ պիտի յափշտակէր մեզի :

— Հտոթի՛կ, հասթի՛կ, գոչեց առաջնորդը :

Առանց գտնիներէն գիտնալու, հասկցայ որ իրեն հետեւելու կոչ մըն էր ասիկա : Եւտ ընդ փոյթ խառնարանին խարխիսին միւս կողմը անցանք : Թաթառը լեռան վրայ ինկաւ . քարերը ու ժայռի կտորները հովի ոլորքներուն մէջ բարձրացան և հրաբուխէ ինկածի նման անձրիւի պէս թափեցան : Այս երեւոյթը, որու տեղացիները միսթուր կ'ըսեն, շատ յաճախադէպ է երբ հովը սառնարաններուն վրայէն փչէ : Բարեբաղդաբար մենք հակառակ գառիվերին վրայ ապահով տեղ մըն էինք : Առանց մեր առաջնորդին արթնամտութեան, մարմիննիս կտոր կտոր եղած՝ անձանօթ օդերեւոյթի մը պէս հեռուները պիտի իյնար :

Առաջնորդը՝ անխահեմութիւն սեպեց գիշերը լեռան կողմն վրայ անցնելը, ուստի ելքերնիս շարունակեցինք : Դեռ հազար հինգ հարիւր ոտք տեղ քալեցինք՝ հինգ ժամուան մէջ, Ա՛լ վրաս կարողութիւն չէր մնացեր . ցուրտէն սարսուռն, անօթի, թոքերս իսկ չէին կրնար բաւական օդ գտնել այդ քիչ մը անսուր մթնոլորտին մէջ :

Վերջապիս կէս գիշերին Սնէֆէլտի գագաթը հասանք : Խառնարանին մէջը ապաստան մը գտնելէ առաջ ակնարկ մը նետեցի «կէս գիշերուան արեգակին» վրայ, որ՝ իր ընթացքին էն վարի կէտը հասած, տարտամ լոյսով մը կը պլպլացնէր ոտքերուս տակ քնացող կղզին :

Ճաշը շուտով մը լմնցուցինք և կրցածնուս չափ կծկտեցանք մէյմէկ աննկիւնները առտուն արթնցայ, կէս մը սառած էի : Դուրս ելայ և գացի դիտել սքանչելի տեսարանը որ կը պարզուէր աչքիս առջեւ : Այս անսովոր գաշտանկարին երեւոյթը տեսակ մը երազի մէջ յափշտակեց ինձի : Ի՛նչ ասեմէն հօրեղբայրս ու Հաննի կան միացան ինձի :

Հօրեղբայրս դէպի արեւմուտք դառնալով թեթեւ մշուշ մը, ցամաքի երեւոյթ ունեցող բան մը, ալիքներուն վրայ մութ գիծ մը ցցուց :

— Կրօէնլանտան է, ըսաւ :

— Ի՞նչ, Կրօէնլանտան, գոչեցի :

— Այո՛, հազիւ թէ ՅՅ փարսախ հեռու ենք անկէ : Կը պատահի որ, սառերը հալած ժամանակը, ձերմակ արջեր սառնակոյտին վրայ մնալով մինչեւ հոս կը քուլին : Ի՛նչ և իցէ, հիմա Սնէֆէլտի վրայ կը գտնուինք . ահա՛ երկու գագաթները, մին հիւսիս, միւսը դէպի հարաւ : Հանն պիտի ըսէ հիմա թէ՛ մեզի կրող գագաթին անունը ի՞նչ է : Եւ որսորդին դառնալով գտնիներէն հարցում մը ուղղեց :

— Սքարթարիս, պատասխանեց :

Հօրեղբայրս յաղթական ակնարկ մը նետեց վրաս :

— Խառնարանին մէջը՛, ըսաւ :

Սնէֆէլտի խառնարանը գլուխը վար դարձած կոն մը կը ներկայացնէր . որու բերնին տրամագիծը կէս փարսախ չափ կար : Խորութիւնը երկու հազար ոտք հաշուեցի : Սակայն ձագարին յատակը առ առաւելն ՅՍՍ ոտք չըջտպատ ունէր, անանկ որ իր կողերը շատ ցից չէին :

Հանն, անտարբեր, խուճին գլուխը անցաւ : Աւելի դիւրաւ իջնելու համար որսորդը կրցածին չափ երկար պտոյտներ կ'ընէր : Ճամբան լեցումը էր հրային ժայռի կտորներով, որոնք մէկ քա-

նին տեղերնուն խախտելով՝ անգնադորդ մինչև անդունդին խորը կը գահավիժէին :

Խառնարանին մէկ քանի մասերուն մէջ մէյմէկ պզտիկ սառնարաններ կազմուած էին : Երբ ասոնցմէ մէկուն վրայ կը հասնէինք, Հանս ուշադրութիւնը կը կրկնապատկէր, երկաթապատ գաւազանովը միշտ գետինը զննելով : Տեղ տեղ ալ չուանով իրար կը կապուէինք, որպէս զի եթէ մէկերնիս իյնար, միւսները կահնային զայն դիւրաւ ազատել :

Հակառակ ճամբուն դժուարութեան, առանց պատահարի խառնարանին յատակը հասանք : Կէս օրի մօտ էր : Հոս կը բացուէին երեք հրաբուխի հնոցի բիրաններ, քորոնցմէ լավաներն ու շոգիները դուրս կը նետուէին Սնէֆէլսի բորբոքած ժամանակները : Իւրաքանչիւրը հարիւր ոտք տրամագիծ ունէր : Սիրտ չըրի անոնց մէջը նայելու : Հօրեղբայրս սկսաւ խենդի պէս մէկէն միւսը վազվզել, նայելով, զննելով, անհասկնալի խօսքեր կ'մկնալով : Հանս ու բեռնակիրները ժայռի մը վրայ նստած՝ զարմացած անոր կը նայէին :

Յանկարծ հօրեղբայրս աղաղակ մը արձակեց. կարծեցի թէ անդունդներէն մէկուն մէջ կը գլտօրի կոր : Բայց ո՛չ, թեւերը բացած, ոտքերը տնկած, կրանիթէ ժայռի մը տուջեւ ապշած կը նայէր :

— Աքսէ՛լ, Աքսէ՛լ, պօռաց, եկո՛ւր :

Քովը վազեցի :


— Նայէ՛, ըսաւ գոսախօսը :

Եւ սոսկմամբ խառն զարմացումով մը ժայռին արեւմտեան կողմին վրայ կարգացի Ռունական տառերով գրուած հազար տնիծեալ անունը :

ՂԱԿԻ ԿՈՐԻՈԿԿԻՑ

— Արն Սաքնիւսէ՛մ. գոչեց հօրեղբայրս : Հիմա ա՛լ պիտի կասկածի՞ս :

Չպատասխանեցի, գլուխս կախ լավայէ նստարանս վերա-



Տեղ տեղ չուանով իրար կը կապուէինք

գարձայ: Իրականութեան առջեւ համակիրպելու էր: Չեմ գիտեր թէ ո՞րչափ առեն այս վիճակիս մէջ մնացի. երբ գլուխս վեր առի հօրեղբօրս ու Հանսի հետ մինակ էի: Որտորքը, լավայի ճեղքը- ուածքի մը մէջ անկողին մը յարգարելով, հանդարտ քուն մը կը քաշէր: Հօրեղբայրս գառագեղի մը մէջ փակուած վայրի գազանի մը պէս խառնարանին յատակը կը դառնար ու կը դառնար: Ես ալ Հանսի օրինակին հետեւելով քնանալ փորձեցի:

Այսպէս անցաւ խառնարանին մէջ առաջին գիշերը: Յաջորդ օրը ամպոտ երկինք մը ծածկեց խառնարանին բերանը. առաջ բան մը չզգացի՝ երբ տեսայ որ հօրեղբօրս բարկութիւնը գէշ տեսակէն սկսեր է: Պատճառը շուտով հասկցայ, և վերջին յոյս մը ծլաւ սրտիս մէջ: Ահա՛ թէ ինչո՞ւ:

Մեր ստաբերուն տակ բաց երեք ճամբաներէն մէկուն մէջ միայն Սաքնիւսէմ մտած էր, և ատիկա ալ որոշելու համար Իսլանտացի գիտունը ծածկագրին մէջ ըսած էր թէ Յունիսի վերջերը Սքարթարիսի շուքը անոր եղերքին վրայ պիտի ինչայ:

Եթէ արեւ չըլլար, շուք ալ չէր կազմուեր, սրով սրտիչ նշան մը չէր գտնուեր: Յունիսի 25ն էինք, եթէ երկինքը վեց եօթը օր ալ ծածկուած մնար, ճամբորդութիւնը յաջորդ տարուան ձգելու պիտի ստիպուէինք:

Չեմ կրնար նկարագրել հօրեղբօրս բարկութիւնը: Ամբողջ օրը անցաւ առանց շուք մը կազմուելու: Հանս տեղէն չշարժեցաւ. գուցէ մտքէն կը հարցնէր թէ ինչո՞ւ հող կ'սպասէինք: Հօրբայրս բերնէն խօսք մը չհանեց. աչքերը վեր յառած միշտ ամպամած երկինքը կը գիտէր ու կը գիտէր: 26ին կարկտախառն անձրեւ մը սկսաւ. Հանս՝ լավայի կտորներէ մեզի պատասպարան մը շինեց: Հօրեղբօրս կատաղութիւնը չափէ դուրս էր. իրմէ աւելի համբերող մէկն անգամ չպիտի դիմանար, որովհետեւ գործի մը վախճանին մօտ, ամէն բան կորսնցնել ըսել էր:

Բայց ամէն մեծ վիշտի Աստուած մխիթարանք մը կը գրկէ: Յաջորդ օրը երկինք նորէն ծածկուած էր, բայց 28ին, Կիրակի օրը, լուսնի փոփոխումի հետ օդն ալ փոխուեցաւ: Արեւու ճառագայթները խառնարանին բերնէն ներս խուժեցին. է՛ն պզտիկ քարն իսկ յատակ լոյս մը կը թողուր: Սքարթարիս ալ իր մասը



ունեցաւ այս ընդհանուր ցնծութեան մէջ և իր շուքին զանդադ շարժումին հետ կը պտըտցնէր դասախօսն ալ. կէսօրին, երբ շուքը իր ամէնէն կարճ դիրքը կ'առնէ, եկաւ թեթեւ մը դպաւ կեդրոնի ծակի եզերքին:

— Հո՛ս է, գոչեց հօրեղբայրս, հո՛ս է: Դէպի երկրիս կեդրոնը, աւելցուց դանիերէն:

Հանսն նայեցայ:

— Ֆօրիւթ, ըսաւ առաջնորդը հանդարտ:

— Յառա՛ջ, կրկնեց հօրեղբայրս:

Ժամը 7ը 13 վայրկեան կ'անցնէր:

ԺԲ.

Բուն ճամբորդութիւնը կ'սկսէր. մինչեւ հիմա դժուարութիւն քաշելէ աւելի յագնութիւն կրած էինք. ասկէ ետքը դժուարութիւններ պիտի ծնէին ոտքերնուս տակ: Դեռ ակնարկ մը նետած չէի հորին մէջ ուր պիտի ընկլուզէի. ժամանակը հասած էր ալ, հիմա իսկ կրնայի դասախօսին ընկերակցելու մերժել կամ հետը երթալ, բայց ամչցայ որսորդին առջեւ: Հանս ուղեւորութիւնը կ'ընդունէր անանկ անտարբերութեամբ մը, անանկ վտանգէ չը վախնալու կերպով մը որ իրեն չափ քաջ չըլլալս ցուցնելու խըպ-նեցայ: Եթէ մինակ ըլլայի, գուցէ անհատնում պատճառաբանու-թիւններու շարք մը նորէն սկսէի, բայց առաջնորդին ներկայու-թեանը լռեցի: Միտքս թուաւ դէպի գեղանի վերլանտուհիս եւ մէջտեղի բացուածքին մօտեցայ:

Ըսի արդէն թէ 300 ոտք շրջապատ ունէր. ցից քարի մը վրայ ելլելով վար նայեցայ. մազերս տնկուեցան, պարապութեան զգա-ցումը ամբողջ էութիւնս գրաւեց. տեսակ մը գինովութիւն խեղքս դարձնել սկսաւ, կ'իյնայի կոր ձեռք մը զիս բռնեց. Հանսն էր:

Թէեւ հազիւ ակնարկ մը նետած էի այս հորին մէջ, կրցայ սակայն գաղափար մը առնել անոր կազմութեան վրայ: Կողերը շատ ցից, բազում խորտ ու բորտ տեղեր ունէին, որոնք կրնա-

յին իբր սանդուղ ծառայել մեզի վար իջնելու համար. մինակ բազրիքն էր որ կը պակսէր, և այդ պատիկ պակաս մը չէր. կըր-նայինք հորին բերանը չուան մը կապել և ատիկա բռնելով վար սահել, բայց վարի ծայրը հասնելնուս ետքը ի՞նչպէս կրնայինք չուանը քակել: Հօրեղբայրս պարզ հնարքով մը այս դժուարու-թեան առաջքը առաւ: Բթաչափ հաստ ու 400 ոտք երկար չուան մը քակելով մէջտեղէն դուրս ցցուած լավայի կտորի մը անցուց և երկու ծայրերը հորին մէջ ձգեց: Այդ երկու ծայրերը միասին ձեռքերնուս մէջ բռնելով կրնայինք վար սահել մինչեւ որ լմըն-նար, յետոյ մէկ ծայրէն ձգելով միւս ծայրէն կը քաշէինք և չու-անը ինքնիրեն մեզի կուգար: Այս կերպով կրնայինք ուզածնուս չափ վար իջնել:

— Հիմա, ըսաւ հօրեղբայրս ասոր համար պէտք կըածը կարգի դնելով, հիմա՛ ճամբու առարկաները կարգի դնենք. բոլոր անոնք որ դիւրաբեկ են երեք ծրար պիտի ընենք, ամէնքնիս ալ մէյմէկ հաստ տանելու համար: Հանս՝ գործիքներն և ուտելիքներուն մէկ մասը պիտի առնէ. դո՛ւն Աքսէլ՝ մաս մը ուտելիք և զէնքերը, ես ալ մնացած պտշարն ու բնագիտական գործիքը:

— Բայց հագուստները, հարցուցի, այս չուանները, սանդուղ-ները ո՞վ պիտի տանի ասոնք:

— Ինքնիրեննին պիտի իջնեն:

— Ի՞նչպէս կ'ըլլայ:

— Պիտի տեսնես:

Հօրեղբորս հրահանգին վրայ, Հանս բոլոր ոչ-դիւրաբեկ ա-ռարկաները իրար կապելով անագին ծրար մը շինեց ու անդուն-դին մէջ գլորեց: Հօրեղբայրս հտեւէն կը նայէր, մինչեւ որ աչ-քէն կորսնցուց. յետոյ գո՛հ երեւոյթով մը ոտք ելաւ:

— Հիմա, ըսաւ, կարգը մերն է:

Կը հարցնեմ՝ ձեզի, կարելի՞ է առանց սարսուլու ասանկ խօսք մը լսել:

Ամէնքնիս ալ ծրարնիս առինք ու ճամբայ ելանք: Առաջ Հանս կը քալէր, ետքը հօրեղբայրս, վերջէն ալ ես: Էջքը խոր լու-թեան մէջ տեղի ունեցաւ՝ երբեմն երբեմն պարապինք մէջ գլորող քարի մը արձագանքովը խռոված: Ինքզինքս ձգեր գրեթէ կը

սահէի մէկ ձեռքով զոյգ չուանը սեղմած, միւսովն ալ երկաթապատ գաւազանիս կառչած: Միակ գաղտփար մը պաշարած էր զիս. կը վախճնայի որ յինակէտս տեղի կուտայ. չուանը երեք հոգի վերցնելու չափ ամուր չէր երեւէր աչքիս, կրցածիս չափ քիչ կը կախուէի անկէ ու չի սահելու համար հաւասարակչութեան հըրաքշներ կը գործէի:

Երբ լարծուն սատիճաններէն մին Հանսի ստքին տակ տեղէն կ'երերար, առաջնորդը հանդարտ ձայնով մը կ'ըսէր:

— ԺիՖ ա.քթ:

— Ուշադրութի՛ն, կը կրկնէր դասապետը:

Կէս ժամի չափ անցնելէ ետքը, հորին կողին վրայ բաւական դուրս ցցուած ժայռի մը վրայ հասանք: Հանս՝ չուանին մէկ ծայրէն բռնելով քաշել սկսաւ. միւսը՝ վերի ժայռին վրայէն անցնելով ուր ուր վար ինկաւ, քարի ու լավայի պղտիկ կտորներու կարկուտ մը տեղացնելով գլխնուս վրայ:

Վրան կեցած նեղուկ սարահանթին եզերքէն վար նայեցայ. հորին յատակը դեռ չէր տեսնուեր: Չուանին խաղը նորէն սկսաւ, և կէս ժամ ետքը երկու հարիւր ոտք աւելի վար իջանք:

Չեմ գիտեր թէ գիտութեան այնքան խնդ երկրաբան մը կա՞յ որ այս էջքի միջոցին շրջակայ ժայռերուն բնութիւնը քննելու ելլէ. ես՝ ասանկ բանով մը չէի զբաղեր, այդ հողերը ի՞նչ կուզէին թող ըլլային: Բայց կարծեմ հօրեղբայրս բաւական դիտողութիւններ ըրած ու ծանօթագրած էր, ինչու որ կանգ առած մէկ միջոցնուս ըսաւ.

— Բանի կ'երթամ, այնքան վստահութիւնս կ'աւելնայ. այս հրաբխային հողերուն գիրքը Տավիի տեսութիւնը կը հասաատէ. նախնական հողի մը ներկայութեան մէջ կը գտնուինք, հող մը, ուր տեղի ունեցած է ջուրի և օդի հպումով բռնկող մետաղներու հակազդեցութիւնները. բացարձակապէս կը մերժեմ կեղրոնական հուրի տեսութիւնը. քիչ ատենէն պիտի տեսնենք:

Միշտ նոյն հետեւութիւնը կը հանէր. կը հասկնաք որ պատասխանելու վիճակի մէջ չէի, ուստի ձայն չէի հաներ. լուսթիւնս իբր հաւանութիւն կը նկատուէր ու ճամբանիս կը շարունակէի:



Ա. Բ. Կ. Լ.

Երեք ժամ ետքը դեռ յատակը չէր տեսնուեր, երբ գլուխս վեր գարձնէի, կը տեսնէի որ հորին բերանը երթալով կը պզտիկնար. կողերը, իրենց թևթև հակումին պատճառաւ, քիչ քիչ իրար կը մօտենային: Այլ չորսդին մթնել կ'սկսէր: Սակայն միշտ կ'իջնէինք: Վար գլորած քարերու արձագանգէն կրնայի գուշակել թէ յատակին մօտեցած ենք:

Մինչեւ հիմա տասնըչորս անգամ չուսնը քակած ու նորէն անցուցած էինք, և ամէն անգամուն կէս ժամ միջոց անցեր էր. ըսել է եօթը ժամ և 14 հատ մէկ քառորդ ժամ դադարի համար, ընդ ամէնը տասնուկէս ժամ, որով հիմա ժամը հինգը կ'ըլլար: Գալով իջած խորութեան, 2800 ոտքի չափ ըլլալու էր: Այս միջոցին շանսի ձայնը առի.

— Դագա՛ր, ըսաւ:

Կանգ առի, երբ հօրեղբօրս գլուխին պիտի զարնէի ոտքերս:

— Հասանք, ըսաւ:

— Ո՞ւր, հարցուցի:

— Ուղղահայեաց հնոցին յատակը:

— Ուրիշ ճամբայ չկա՞յ:

Այո՛, նեղ գետնուղի մը կը նշմարեմ դէպի աջը. ի՛նչ և է, վաղը կը նայինք, հիմա ճաշենք ու պառկինք:

ԾԸ.

Առտուան տասներկուքին արեւի ճառագայթ մը վրանիս ինկաւ ու մեզի արթնցուց: Պատերուն լափայէ հազարամէկ երեսիկները ցոլացուցին զայն ու փայլակներու անձրեւի մը պէս չորս դին սիւնեցին: Շրջակայ առարկաները տեսնելու չափ լոյս կ'ընէր:

— Նայի՛նք, Աքսէ՛լ, ըսաւ հօրեղբայրս ձեռքերը մէկգմէկ շփելով, Մեր Բեօնիկզկրասի տան մէջ ասանկ աղուոր գիշեր մը անցուցած ունէի՞ր: Ո՛չ կառքի աղմուկ, ո՛չ խանութպանի պուշտուք կայ:

— Անշո՛ւշտ, քայս հորին յատակը հանգիստ ենք, բայց այս



հանդարտութիւնը սարսափեցուցիչ բան մը ունի:

— Դ՞ու՛ն ալ, գոչեց հորեղբայրս, եթէ հիմակուընէ ստակաս, վերջը ի՞նչ պիտի ընես: Դեռ մատնաչափ երկրիս կեղեւին մէջը չենք յառաջացած:

— Ի՞նչպէս:

— Այսինքն գրեթէ կղզիին մակերեւոյթին վրայ կը գտնուինք այս ուղղաձիգ երկար. խողովակը գրեթէ ծովուն մակերեւոյթին բարձրութեանը կանգ կ'առնէ:

— Վստա՞հ էք ստոր:

— Հապո՛ւ, տես ծանրաչափը:

Արդարեւ, սնդիկը, որ իջած ժամանակնիս կամաց կամաց բարձրացեր էր, հիմա 70 միլիմէդրի մօտերը կը հասնէր:

— Կը տեսնե՞ս, յարեց հորեղբայրս, քիչ ատենէն ա՛լ ծանրաչափը անօգուտ կը դառնայ, և տեղը անգայտաչափը կ'սնցնի:

— Բայց, ըսի, մթնոլորտին յարաճուն ճնշումը մեզի չնեղե՞ր:

— Ո՛չ, կամաց կամաց իջնելով պիտի վարժուինք: Բայց հիմա ժամանակ չկորսնցնենք. ո՞ւր է վար գլորած ծրարնիս:

Հանս իր սրտորդի սուր աչքերով անգամ մը չորսդին նայեցաւ

— Պէր հըբ, ըսաւ:

— Վերն է:

Ծրարը գետնէն հարիւր ոտքի չափ բարձր ժայռի մը ծայրին կառչած էր: Ծապուկ իսլանտացին կատուի մը պէս հոն մագլցեցաւ.

քանի մը վայրկեան ետքը ծրարնուս տէր եղած էինք:

— Հիմա՛, ըսաւ հորեղբայրս, ճաչենք, բայց երկար ճամբայ քալողի մը պէս ուտենք:

Նախաճաչէն ետքը դասախօսը գրպանէն տետրակ մը հանեց, յատուկ ծանօթագրութիւններու համար, և զանազան գործիքները նայելով նշանակեց:

Երկուսաբքի, 1 Յուլիս

Քրօնօմէդր. — Առտուան ժամ 12, Վայրկեան 17:

Ծանրաչափ. — 29 մատ 7 գիծ:

Ձերմաչափ. — 6⁰:

Ուղղութիւն. — Արեւելք-Հիւսիս-Արեւելք:



Չօրաւոր լոյս մը գետնուղիին մթութիւնը ցրուեց

Այս վերջին ծանօթագրութիւնը՝ առջի իրիկուան հօրեղբօրս նշմարած մութ ճամբուն ուղղութիւնը կը ցուցնէր:

— Հիմա՛, Ա.քսէլ, ըսաւ հօրեղբայրս, զուարթ ձայնով մը, հիմա պիտի երթանք երկրիս խորերը թաղուելու: Բուն ճամբորդութիւնը հիմա է որ կ'սկսի:

Յետոյ վիզէն կախուած Ռամբօրֆի գործիքը, ձեռքը բռնած ելեքտրական լապտերին հետ հազարդակցութեան դնելով, զօրաւոր լոյս մը՝ գետնուղիին մթութիւնը ցրուեց: Հանա լապտերը առաւ:

— Ճամբայ ելէ՛ք, ըսաւ հօրեղբայրս:

Ամէն մէկերնիս՝ իրեն ծրարը առաւ: Հանա առջեւէն պիտի գլորէր հագուստներու և չուաններու մեծ ծրարը: Այս խաւարտչին ճամբուն մէջ մտնելէ առաջ վերջին ակնարկ մը նետեցի, դէպի վեր իսլանտայի երկինքին վրայ, զոր այլ եւս պիտի չը տեսնէի:

Վերջին, 1229ին բորբոքման միջոցին, լավան ճամբայ մը բացած էր այս գետնուղիին մէջ, և ամբողջ ներսիդին պատած էր հաստ ու փայլուն խաւով մը, որ ելեքտրական լոյսը ցոլացնելով, անոր զօրութիւնը կ'աւելցնէր:

Ճամբուն ամէնէն մեծ դժուարութիւնը, գրեթէ 45 աստիճանի զառիթափի մը վրայ շուտ շուտ չտահելու ջանքն էր: Բարեբաղդաբար տեղ տեղ քանի մը ցցուածքներ, իբր աստիճան կը ծառայէին մեզ, ծրարնիս՝ չուանով մը կապած ետեւնուս կը քաշէինք:

Ի՛նչ որ ոտքերնուս տակ աստիճան կ'ընէինք, ճամբուն միւս պատերուն վրայ շթաքարեր էին: Լավային մէջէն մերթ ընդ մերթ պզտիկ ուռեցքներ դուրս կը ցցուէին քուարձի բիւրեղների, ապակիի վճիտ բիւթիլներով զարդարուած ձեղունք կը պճնէին ջահերու պէս և մեր անցած միջոցին կարծես թէ կը բռնկէին: Պիտի ըսէիր թէ, քարայրի ոգին երկրիս վրայէն եկող հիւրերը ընդունելու համար կը լուսազարդէ իր ապարանքը:

— Ի՛նչ սքանչելի է, գոչեցի ակամայ, տեսէ՛ք, հօրեղբայր, տեսէ՛ք, ի՛նչ տեսարան: Սա լավային առած մութ կարսիւր ու փայլուն դեղին գոյներուն նայեցէք, հապա այս բիւրեղները որոնք լուսաւոր գունդերու երեւոյթը ունին:



— Հա՛, հիմա հասկցա՞ր, Աքսէլ, սքանչելի են ասոնք, անանկ չէ՞, տղաս, կեցիր դեռ անոնկ բաներ պիտի տեսնես որ... քալե՛նք, քալե՛նք:

Աւելի ճիշդը «սասինք» ըսելու էր, որովհետեւ ինքզինքն/ս ձգած՝ դիւրաւ մը վար կը ստնէինք: Երբեմն երբեմն կողմնացոյցին կը նայէի, բռնած ուղղութիւնն/ս միշտ հարաւ արեւելք էր. այս լաւայի անցքը ուղիղ գիծի մը թեքութիւնը ունէր՝ ո՛չ մէկ կողմ, ոչ ալ միւսը կը ծռէր:

Չարմանալին սա էր թէ տաքութիւնը զգալի աստիճանով չէր բարձրանար: Երկու ժամ յառաջ անայէ ետքը ջերմաչափը 10 աստիճան կը ցուցնէր, այսինքն 4 աստիճանի յաւելում մը: Ասկէ կը հետեւցնէի թէ կտրած ճամբան/ս աւելի հորիզոնական դիրքի մէջ եղած էր քան թէ ուղղահայեաց: Իշած խորութիւնն/ս հաշուելը դիւրին էր, որովհետեւ հօրեղբայրս հարկ եղած չափերը կ'առնէր, բայց արդիւնքը միայն իրեն պահելով կը բաւակա- նանար:

Իրիկուան ժամը երկուքին ատենները դադարի նշան տուաւ. տեսակ մը քարայրի մէջ հասած էինք ուր օդը, զարմանալի բան, խիստ մաքուր էր, նայն խկ տեսակ մը զով օդի շարժում մը կը հասնէր մեզի. ի՞նչ էր ատոր պատճառը, մթնոլորտական ո՞ր երեւոյթէն յառաջ կուգար. չկրցի հասկնալ, ո՛չ ալ փնտռեցի. անօթութիւնն ու յոգնութիւնը խորհելու անկարող կ'ընէին զիս. եօթը ժամ շարունակաբար վար իջնելը դիւրին բան չէ: Բոլորովին ու- ժասպառ եղած էի. երբ «դադար» բառը իմացայ, ճշմարիտ ու- րախութիւն մը զգացի:

Հանս լավայէ սեղանի մը վրայ քիչ մը ուտելիք շարեց ու ակորժակով կերանք: Զուրի պակասութեան վրայ շատ մոտտանջ էի. ունեցածն/ս կէս մը սպառած էր. հօրեղբայրս ստորերկրեայ աղբիւրներ գտնել կը յուսար, սակայն դեռ հատ մը խկ չէր հանդիպած. ուստի ուշադրութիւնը ասոր վրայ հրաւիրեցի:

- Զուր չգտնելն/ս կը զարմացնէ՞ քեզ, հարցուց:
- Անշուշտ, նոյն խկ մեծ հողի մէջ կը ձգէ ինձի. հինգ օր- ւան համար հազիւ կը բաւէ ունեցած ջուրերն/ս:
- Մի՛ վախճար Աքսէլ, պիտի գտնանք, վստահ եղիր:

Ե՞րբ պիտի գտնանք:
— Երբ որ այս լավաներէն անցնինք, ի՞նչպէս կ'ուզես որ ասանկ տեղէ աղբիւր մը ցայտէ:

— Բայց եթէ այս լավաները մինչեւ շատ խորերը իջնեն, կարծեմ թէ շատ ճամբայ մը չկտրեցինք ուղղահայեաց դիրքով:

— Ինչէ՞ն գիտես:
— Որովհետեւ, եթէ շատ յառաջացած ըլլայինք դէպի խորե- րը, տաքութիւնը պիտի շատնար:

— Բու դրութեանդ համեմատ, պատասխանեց հօրեղբայրս: Զերմաչափը ի՞նչ կը ցուցնէ:

— Հազիւ 15 աստիճան, մեր մեկնելէն ի վեր ինը աստիճանի տարբերութիւն մը միայն:

— Լաւ ուրեմն, ի՞նչ կը հետեւցնես ասկէ:

— Ահա՛ թէ ի՞նչ կ'ըսեմ. գիտուած է որ քանի երկրիս մա- կերեւոյթէն վար երթանք, ամէն 100 սոք խորութեան ջերմա- չափը մէկ աստիճան կը բարձրանայ: Բայց այս թիւը կը փոխուի մէկ քանի տեղական ազդեցութիւններու տակ: Ինչպէս Սիպե- րիոյ մէջ ջերմաչափին վրայ մէկ աստիճանը բարձրացում կ'ըլլայ ամէն 35 սոքի. այս տարբերութիւնը բնական է կախում ունի ժայռերուն ջերմութեան հաղորդելիութենէն: Նայնպէս մարած հրաբուխներուն մօտ, կնէյս կոչուած ժայռերուն մէջ, տաքու- թեան բարձրացումն է մէկ աստիճան 125 սոքի համար: Արդ այս վերջին պարագան ի նկատի առնելով, կ'ուեննանք հազար հարիւր քսանեւհինգ սոքի խորութիւն մը:

- Շատ շիտակ է:
- Իսկ իմ հաշիւներուս նայելով, ծովուն մակերեւոյթէն 10,000 սոք խորը հասած ենք:
- Ուրե՛մն:
- Կարելի՞ քան է:
- Այո՛:

Հօրեղբորս հաշիւները շիտակ էին: Մինչեւ հիմա մարդոց հասած ամէնէն խոր կէտէն 6000 սոք աւելի խորը հասած էինք: Ըսել է իմ հաշուովս տաքութիւնը 81 աստիճան ըլլալու էր, մինչ- իւ հազիւ 15ի կը հասնէր:

Յաջորդ օրը, Յունիս 30ին, նորէն սկսանք իջնել:

Միշտ շափալի ճամբուն կը հետեւէինք որ տեսակ մը բնական սանդուղ կը ձեւացնէր: Այսպէս շարունակեցինք՝ մինչեւ կէս օրը 17 վայրկեան անցած, ճիշդ, երբ Հանս կանգ առաւ:

— Ա՛հ, գոչեց հօրեղբայրս, ճամբուն ծայրը հասեր ենք:

Չորս կողմս նայեցայ: Առջեւնիս երկու նոր ճամբայ կը բացուէին, երկուքն ալ մուտք ու խաւարաչտինս: Ո՞րը ընտրելու էր. ահա՛ դժուարութիւն մը, սակայն հօրեղբայրս չուզեց վարանիլ ոչ իմ և ոչ Հանսի առջեւ, դէպ ի արեւելք բացուող ճամբան ցուցայ և երեքս ալ մէջը մտանք: Արդէն այս կրկին ուղիներուն առջեւ վարանիլը՝ յաւիտեան հոն մնալ էր, քանի որ չկար նշան ցուցնելու թէ անոնցմէ ո՞րն է շիտակ ճամբան:

Այս նոր գեանուղին շատ ծուռ չէր, լայնութիւնն ալ անհաւասար. երբեմն կամարներու շարք մը իրարու կը յաջորդէին նման գոթական մայր եկեղեցիներու դասը բռնող աղեղներուն, միջին դարու արուեստագէտները շատ բան կրնային սորվել անկէ կրօնական ճարտարագետութեան բոլոր ձեւերուն վրայ՝ որոց հիմն է հաւկթածիւր: Փարսախ մը անդին, կրանիթէ ձեղունը կը ցածնար ու հազիւ թէ ծունգի վրայ քալելով կրնայինք անցնիլ:

Տաքութիւնը բնաւ անտանելի չէր, սկամայ կը խորհէի այն սոսկալի տաքին վրայ՝ երբ Մնէֆէլի դուրս տուած լավաները կ'անցնէին այսօրուան հանդարտիկ անցքէն:

— Չեղլայ ձերուկ հրաբուխին մէկ քմահաճոյքը բունէ կը մտածէի ինքնիրենս. ու թէեւ հօրեղբորս բան մը չէի ըսեր, որովհետեւ չպիտի հասկնար. իր միակ մտածումն էր, յառաջ երթալ: Կը քալէր, փորի վրայ կը քշուէր, երբեմն ալ վար կ'իյնար, միշտ հաստատամտութեամբ մը, հաւատքով մը, որու վրայ սքանչաւալու էի:

Իրիկուան 12ին, հօրեղբայրս դադարի նշան տուաւ, շուտով ճաշերնիս ըրինք պառկեցանք. անկողիննիս շատ պարզ էր, ճամբորդութեան վերմակ մը որու մէջ կը փաթտուէինք. ահա՛ ամէնը:

Յաջորդ առաւօտուն արթնցանք թարմ ու պատրաստ, ու նորէն ձեռք տաինք առջի օրուանին նման լավայէ ճամբանիս:

գեանուղին փոխանակ դէպ ի երկրիս խորերը իջնելու, աւելի հորիզոնական դիրք մը կը բռնէր, նոյն իսկ ժամանակ մը սկսաւ վեր ելլել, անանկ որ շուտով յոգնեցայ:

— Ի՛նչ կ'ընես Ա.քսէլ, ըսաւ հօրեղբայրս անհամբեր:

— Յոգնեցայ, պատասխանեցի:

— Ի՛նչ, ասանկ դիւրին ճամբու մը վրայ երեք ժամ քալելէ ետքը՝:

— Չեմ ըսեր թէ դիւրին ճամբայ չէ, բայց կը յոգնեցնէ:

— Վար իջած ժամանակ մարդ կը յոգնի՞:

— Վեր ելած ժամանակ ըսէք:

— Վի՞ր ելած, կրկնեց հօրեղբայրս ուսերը շարժելով:

— Անշուշտ, կէս ժամէ ի վեր դառիվեր փոխուած է, և եթէ ասանկ շարունակէ Իսլանտայի ցամաքը պիտի ելլենք:

Հօրեղբայրս հաւատալ չուզող մարդու մը պէս գլուխը շարժեց: Ուզեցի նորէն խօսակցութիւնը սկսիլ, բայց անխիղճ չպատասխանեց ու ճամբան շարունակեց: Հասկցայ որ լուռութիւնը սրանեղութենէն յառաջ կուգար:

Այսու հանդերձ, բեռս կռնակս՝ քալչերս արագ արագ կ'առնէի. ետի չմնալու համար: Մեծ վախս՝ ճամբու ընկերներս աչքէ չհեռացնելն էր. սոսկալի կերպով կը վախնայի այս լաբիւրինդոսին մէջ ճամբաս կորսնցնելէ: Մանաւանդ եթէ վեր բարձրացող ճամբան կը դժուարանար, միւս կողմէ ալ երկրիս մակերեւոյթին աւելի կը մօտիկնար. հաճոյք կ'զգայս մտածելով թէ նորէն պիտի տեսնեմ պզտիկ կրախւայէնս:

Կէս օրին, գեանուղիին հողերուն երեւոյթը փոխուեցաւ, ելեքտրական լոյսին՝ պատերուն վրայ ցոլացումը քիչցաւ. կրանիթին յաջորդեց ժայռը: Ամբողջ լեռնակոյտը կը բաղկանար շեղ կամ ուղղահայեաց դիրքով խաւերէ: Սիւււրեան շրջանի մէջ կազմուած հողերու առջեւ կը գտնուէինք:

«Անշուշտ, գոչեցի ինքնիրենս, շուրի մրուրները, երկրիս երկրորդ շրջանին մէջ կազմած են այս թերթաքարերը, կրաքարերը, կապիճները, կրանիթէ կոյտին ետեւէն կը դառնանք կոր»:

Տեսածներս՝ աղէկ կ'ընէի եթէ ինձի պահէի, բայց չկրցայ ինքզինքը զսպել: Հօրեղբայրս դարմացական աղաղակներս իմանալով՝ հարցուց:

— Ի՞նչ կ'ըլլաս կոր :

— Տեսէ՛ք, ըսի, և կոպիճի ու կրաքարի յաջորդական խաւարն ու հերձաքարի հողերու հետքերը ցուցուցի :

— Ատկէ ի՞նչ կ'ելլայ :

— Ահա՛ այն շրջանին մէջ կը գտնուինք ուր առաջին բոյսերն ու կենդանիներն ծնունդ առած են :

— Այդպէ՞ս կը կարծես :

— Բայց նայեցէ՛ք, քննեցէ՛ք, տեսէ՛ք :

Եւ դասասխօսը ստիպեցի որ լապտերը՝ գետնուղիին պատերուն վրայ պտտցնէ. կ'սպասէի որ զարմացման բացազանչութիւն մը արձակէ, բայց բառ մը իսկ չըսաւ ու ճամբան շարունակեց :

Միտքս հասկցած էր թէ չէ : Արդեօք հօրեղբոր ու գիտունի անձնասիրութեամբը չէ՞ր ուզեր խոստովանիլ թէ արեւելեան գետնուղին ընտրելովը սխալած էր՝ քանի որ հիմակուան բռնած ճամբանիս Սնէֆէլսի վառարանին մէջ չէր կրնար առաջնորդել մեզի :

Սակայն ինքնիրենս կ'ըսէի թէ պէտք եղածէն աւելի կարելուորութիւն տուած չէի՞ ըլլար այս հողի փոփոխութիւններուն. և միթէ չէի՞ խարուեր թէ կրանիթին վրայ դրուած ժայռի խաւերուն մէջէ կ'անցնինք :

Եթէ չեմ սխալիր, կը մտածէի ինքնիրենս, անպատճառ նախնական բոյսի մը մնացորդը պիտի գտնեմ, այն ատեն ալ ըսելիք չմնար, ուրեմն փնտռենք :

Դեռ հարիւր քայլ չառած, խնդրած ապացոյցներս աչքիս առջև պարզուեցան, եւ այսպէս ալ ըլլալու էր : Քանի որ սիլուրեան շրջանին՝ ծովուն մէջ 1500 տեսակէ աւելի բոյս ու կենդանի կար : Ծամբան մինչև հիմա կարծր կրանիթէ կազմուած, յանկարծ կակուղցաւ. բոյսերու և խեցիներու մնացորդներէ ձեւացած փոշիի մը մէջէն կը քալէինք. պատերուն վրայ որոշակի կը տեսնուէր լօսերու և գետնամամուռի հետքեր : Լիտէնպրօք ուսուցչապետը անշուշտ չէր կրնար սխալիլ ասոնք տեսնելով, բայց կամաց մը աչքերը կը գոցէր ու անյողողդ ճամբան կը շարունակէր :

Յամառութիւնը ծայր աստիճանի տանիլ էր այս, ա՛լ չգիմա-

ցայ. նեպուլի նմանող կենդանիի մը խեցին վերցուցի գետնէն և հօրեղբորս ետեւէն հասնելով լսի իրեն .

— Տեսէ՛ք :

— Ի՞նչ է որ, պատասխանեց հանդարտօրէն, հիմա տեսակը անհետացած եռախորշի մը կարգին պատկանող խեցեպատեանի մը խեցին է :

— Բայց ասկէ չէ՞ք հետեւցնել թէ . . . :

— Կը հասկնամ ըսել ուզածդ, այո՛, իրաւունք ունիս, կրանիթէ խաւն ու լավայէ ճամբան ձգեցինք : Կարելի է որ սխալած եմ, բայց սխալիլուս այն ատեն միայն վստահ պիտի ըլլամ, երբ որ այս ճամբուն ծայրը հասնիմ :

— Հօրեղբայրս, իրաւունք ունիք այսպէս ընելու, ես ալ պիտի հաւանէի ատոր՝ եթէ բանէ մը չվստահայի :

— Ինչէ՞ն :

— Զուրի պակսելէն :

— Այն ատեն չափով կը գործածենք :

Թ.

Ունեցած ջուրերնիս խնայողութեամբ գործածելով իսկ հազիւ երեք օրուան կը բաւէր, և գէշը սա էր որ գտնուած հողերնուս մէջ ո՛ր եւ է աղբիւրի հանդիպելիք չունէինք :

Ամբողջ յաջորդ օրը միօրինակ ճամբայ մը կտրեցինք գետնուղիին անվերջանալի կամարներուն տակ : Որքան որ գառիթափը զգալի ըլլալու չափ վար կը հակէր, սակայն դարձեալ յայտնի էր որ լաւ ճամբու մէջ չէինք : Միշտ նոյն փոխանցական շրջանի հողերն էին որ գէմերնիս կ'ելլէին. ելեքարական լոյսը կը շողջղար՝ հերձաքարերուն, կրաքարերուն ու հին կոպճաքարերուն վրայ : Կարծես թէ լեռան մը կտրուածքին կը հանդիպէինք Տէվօնչայր գաւառին մէջ՝ որ իր անունը տուած է այն հողերուն : Մարմարիտի սքանչելի կտորներ պատերը կը ծածկէին. սմանք մոխրագոյն էին ճերմակ երակներով, ուրիշներ կեռասագոյն կամ կարմիր շրճաւորուած դեղին գոյնով :

Սոյն մարմարիոններէն շատերը նախակենդանիներու հետքեր կը կրէին: Առաջին օրէն սկսեալ ստեղծագործութիւնը ակնյայտնի յառաջդիմութիւն մը գործած էր: Կոչտ եռախորշերու տեղ՝ աւելի կատարեալ դասակարգի մը մնացորդները կը տեսնէի. ինչպէս թանձրաթիւ ձուկերն ու թեւամողէսները՝ որոնց մէջ հնէաբանին աչքը դիւրաւ կ'ընդնշմարէ ապագայ սողունին նախնական գիծերը: Տեսնեսան ծովերու մէջ այս կարգի կենդանիները կը վխտային և որոնք իրենց ժամանակին կազմուած ժայռերուն մէջ մնացին:

Լիտէնպրօք ուսուցչապետը բնաւ ասոնց ուշագրութիւն չէր ընեւ. ան երկու քանի կ'սպասէր. կամ ուղղահայեաց հոր մը բացուելու էր ոտքերուն տակ՝ որպէս զի վար իջնէ, կամ ո՛ր եւ է արգելք մը ճամբան կտրելու էր: Բայց իրիկունը վրայ հասաւ և այս երկու բաղձանքներէն ոչ մէկը կատարուած էր:

Ուրբաթ իրիկուն սկսեւ էինք քիչ մը նեղուիլ ծարուէն: (աջօրգ օրն տասը ժամ քալելէ ետքը, գիտեցի որ լապտերին լոյսին ցոլացումը պատերուն վրայ շատ տկարացեր էր, անփայլ սեւ նիւթ մը ամբողջ ճամբան ծածկեր էր: Անգամ մը ձախ ձեռքս պատին կռթնցուցի. երբ ետ քաշեցի՝ տեսայ որ սեփ սեւ էր:

— Ահա՛ ամխահանք մը, գոչեցի:

— Հանք մը առանց հանքագործի, պատասխանեց հօրեղբայրս:

— Ո՞վ գիտէ:

— Ե՛ս գիտեմ, ըսաւ հօրեղբայրս խստիւ. վստահ եմ որ այս ճամբան փորողը մարդու մը ձեռքը չէ եղած: Բայց ինչ և է, ընթրիքի ժամը հասաւ. ընթրինք:

Հանս քիչ մը ուտելիք պատրաստեց. առանց ախորժի կերայ և քանի մը կտթիլ ջուր խմեցի: Երեք մարդու ծարուը յագեցընելու համար, հագիւ թէ առաջնորդին կէս պարապ տիկը ունէինք: Երկու ճամբու ընկերներս ծածկոցներու մէջ փաթթուէնով շուտ մը քնացան, իսկ ես աչքս գոցեցի. մինչև առտու ժամերը կը համրէի:

Շաբաթ օր, առտուան ժամը 12ին մեկնեցանք. քսան վայրկեան չանցած ահագին խոռոչի մը մէջ հասած էինք. հոս վստահ եղայ թէ այս ամխահանքը փորողը մարդը չէր եղած, որսվհետև

կամարները պատով բռնուած պիտի ըլլային, միչդեռ հիմա գրեթէ հրաշքով էր որ հաւասարակշռութեան մէջ կը մնային անոնք:

Սոյն տեսակ մը քարայրը հարիւր ոտք լայնք ու 150 ոտք բարձրութիւն ունէր. գետինը ներքին սոսկալի ցնցուժի մը հետեւանքով բացուած և այս ահագին պարապը կազմուած էր, ուր մարդիկ առաջին անգամ կը թափանցէին:

Ածխաբեր շրջանին ամբողջ պատմութիւնը գրաւած էր այս խաւարտչին պատերուն վրայ, և երկրաբանը դիւրաւ կ'ընար հետեւիլ անոր ամէն մէկ ձեւափոխութեան: Ածուխներու խաւերը խճաքարի կամ կաւի երակներով զատուած էին իրարմէ:

Երկրորդական շրջանէն առաջ անցած այս ժամանակին մէջ երկրագունդը ծածկուեցաւ հսկայ բուսաբերութեամբ մը՝ որ կիզիչ ջերմութեան մը և մնայուն խոնաւութեան ազդեցութեան տակ յառաջ եկած էր: Շոգիէ թանձր մթնոլորտ մը երկիրս կը ծածկէր և արեւուն ճառագայթները կ'արգիլէր: Ըսել է հողագնդին վրայ տիրող բարձր բարեխառնութիւնը՝ արեգակէն ՚չէր գար. գուցէ այս երկնային մարմինը դեռ այսօրուան ունեցած դերը չէր կատարէր տակաւին. կլիմաները գոյութիւն չունէին և ամենաբարձր ջերմութիւն մը երկիրս կը տոջորէր բեռներէն մինչև հասարակած հաւասարապէս. ուրկէ՞ յառաջ կուգար ան. անշուշտ երկրիս ներսերէն: Հակառակ Լիտէնպրօք ուսուցչապետին տեսութիւններուն, սոսկալի կրակ մը կը հրդեհէր մեր մոլորակին բոլորտիքը և իր ազդեցութիւնը զգալի կ'ըլլար մինչև երկրիս կեղեւին ամենէն արտաքին խաւերը: Տունկերը՝ արեւուն գոլորշիներէն զրկուելով ոչ ծաղիկ ունէին ոչ պտուղ, բայց արմատներնին զօրաւոր կեանք մը կը ծծէին այդ տաք հողերուն մէջէն: Այս ժամանակները ծառեր չկային, հապա խոտազգի տունկեր, ընդարձակ մարգեր, պտերներ, հոտիսոյներ, կընգաւորներ, ձիագիք՝ սահմանափակ ընտանիքներ, որոնց տեսակները հազարներով կը բազմանային:

Արգ՝ բոյսերու այս լիառատութեան մէջ է որ հանքածուխը ծնունդ առած է: Երկրիս դեռ առածիք կեղեւը՝ իրեն ծածկած հեղուկ զանգուածին բոլոր շարժումներուն կը հնազանդէր. ասկէ յառաջ եկան ահագին ձեղքուածներ, և շատ հողերու մակերեսային ջրերը ցածցան վար իջան. ջուրերը ցած տեղերը կոխեցին և հոն

հաւաքուած բոյսերը ծածկեցին՝ ահագին զանգուածի մը պէս։ Ա՛լ այսուհետեւ բնութեան քիմիարանութիւնը գործել սկսաւ․ ծովերու խորերը՝ տունկերը առաջ կիզահողը ձեւացուցին, յետոյ իրենց հետ փակուած կազերուն և ներքին ջերմութեան ազդեցութեան տակ խմորուելով՝ կատարեալ հանքաւորում մը կրեցին։

Ահա այսպէս կազմուեցան ածուխի ահագին մթերքները՝ որոնք երեք դարեր կը բաւեն ամբողջ աշխարհի պէտքերուն։

Առանց կանգ առնելու ճամբանիս կը շարունակենք. և այս գիտական նկատումներու մէջ թաղուած՝ մինակ ես էի որ ճամբուն երկարութիւնը չէի գգար։ Տաքութիւնը շատ փոխուած չէր, բայց քիթս ջրածինի բնածխատի հոտ մը կ'առնէր. շուտով նշմարեցի հանքագործներուն կրիզու կոչած կազին ներկայութիւնը ահագին քանակութեամբ այս գեանուղիին մէջ. բարերդաբար Ռեմքորֆի լապտերներով կը լուսաւորուէինք. եթէ անխոհմութեամբ ջահ ի ձեռին ներս մտնէինք այս քարայրէն, ճամբորդութեան վերջին հանգրուանը հասած պիտի ըլլայինք՝ հոն գրտնելով գերեզմաննիս։

Մինչև իրիկուն քաղցինք տուանց մէկ նշանի. հօրեղեայրս հագիւ կրնար որանեղութիւնը պարտկել. քսան քայլ հեռուն տեսնել կարելի չըլլալով՝ չէինք կրնար հաշուել թէ բռնած ճամբանիս դեռ որքան հեռուն կ'երթար։ Իրիկուան տասներկուքին տտեհները յանկարծ պատ մը ելաւ դիմացնիս. աջ կողմը, ձախ կողմը, գէպի առաջ՝ ամբողջ փոցած էր. անել ճամբու մը ծայրը հասած էինք։

— Աղէկ եղաւ, ըսաւ հօրեղեայրս, գէթ ընելիքս կրնամ որոշել։ Հոս՝ Սաքնիւսէմի ցուցած ճամբան չէ. այս գիշեր կը հանգչինք ու վաղը ետ կը դառնանք. երեք օրէն կրնանք հասնիլ այն տեղը՝ ուր ճամբան երկուքի կը բաժնուէր։

- Այո՛, պատասխանեցի, եթէ վրանիս այժ մնայ։
- Ինչո՞ւ համար չէ։
- Որովհետեւ վաղը ա՛լ ջուրերնիս պիտի հատնի։
- Քաջութի՛ւնդ ալ պիտի պակսի, ըսաւ դատախօսը։
- Չհամարձակեցայ պատասխանել։



Զգայազիրի գեթն ինկայ

ԹԱ.

Յաջորդ օրը առտուն կանուխ ճամբայ երանք: Աճապարելու էինք. այս գեանուղիին մէջ հինգ օր կորսնցուցինք:

Չպիտի ծանրանամ ետ դարձած ժամանակնիս քաշած տառապանքներնուս վրայ: Հօրեղբայրս կը կրէր այդ տառապանքները, անոնց յաղթելու ինքզինք անկարող զգացող մէկու մը անհամբերութեամբ: Հանս՝ իր համբերատար բնաւորութեան համակերպութեամբ. իսկ ես, միշտ կը գանգատէի ու կը յուսահատէի:

Գուշակածիս պէս՝ երկրորդ օրը ա՛լ ջուր չունէինք. խմելիք՝ մինակ գիօղին կը մնար, բայց այդ դժոխային ըմպելին կոկորզս կ'այրէր ու վրան անգամ նայիլ չէի ուզեր: Շատ անգամ յոգնութենէս՝ անդամներս կը բռնուէին, ու եղաւ որ զգայազիրկ գետին ինկայ. այն ատեն խումբը կանգ կ'առնէր, հօրեղբայրս կամ իսլանտացին կրցածնուն չափ կը զօրացնէին զիս. բայց կը տեսնէի որ ուսուցչապետն ալ հագիւ կրնար դիմանալ յոգնութեան ու ծարաւին: Վերջապէս յուլիս Տին, սողալով քաշքշուելով՝ կիսամեռ վիճակի մէջ երկու գեանուղիներու միացած տեղը հասանք: Դիակի մը պէս անշարժ, ինկայ փուռեցայ լավայէ ցամաք գետնին վրայ: Առտուն ժամը չորսն էր:

Հանս ու հօրեղբայրս քարի մը կռթնած պաքսիմատի մէյմէկ կտոր կրծել կը ջանային: Երկար հեծեծանքներ դուրս կը թռէին ուռած շրթներէս. խոր թմրութեան մը մէջ ինկայ:

Քիչ մը վերջը հօրեղբայրս քովս գալով ձեռքերուն մէջ վեր առաւ ինձի. «Խեղճ տղայ» մրմուաց արգահատանքի շեշտով մը: Դաժան ուսուցչապետին խանդաղատանքներուն վարժուած չըլլալով՝ այս խօսքերէն շատ զգածուեցայ. ձգեց որ դողդոջուն ձեռքերը բռնեմ իմիններուս մէջ. աչքերը թրջեր էին: Բովէն կախուած ջուրի տմանը առաւ և բերնիս մօտեցնելով «Խմէ՛» ըսաւ:

Չէի՞ սխալեր. հօրեղբայրս խենդեցե՞ր էր. ապուշ ապուշ իրեն կը նայէի. հասկնալ չէի ուզեր:

— Խմէ՛, կրկնեց:



Եւ ջուրին ամանը վերցնելով՝ ամբողջ մէջինը բերանս պարպեց:

Ո՛հ, ի՛նչ երանութիւն: Ումպ մը ջուր՝ շրթունքներս թըրջեց. մէկ ումպ մը միայն, բայց բաւական եղաւ ինձի վերակենդանացնելու: Ձեռքերս միացնելով շնորհակալ կ'ըլլայի հօրեղբօրս:

— Այս պուտ մը ջուրը միայն կար, կը հասկնաս, այս վերջին մնացորդն էր. ա՛լ բոլորովին լինցաւ: Խնամով պահեր էի ատիկա ջրագուծիս տակը, քսան անգամ, հարիւր անգամ մտքէս անցաւ խմել. բայց քեզի համար պահեր էի, Ա.քսէլ, քեզի համար:

— Հօրեղբայրս, թաթովեցի, մինչդեռ արցունքի խոշոր կաթիլներ աչքերէս վար կը գլորէին:

Քչիկ մը ծարաւս յագենալով՝ կոկորդս թուցաւ, կրցայ ձայն հանել, խօսիլ:

— Ա՛լ հիմա, մէկ բան մը միայն կրնանք ընել ըսի, ջուրերնիս հատած է, ետ դառնանք:

Խօսած ժամանակս, հօրեղբայրս երեսո նայելու կ'զգուշանար. գլուխը կախած, աչքերը գետինը յառած էր:

— Ե՛տ դառնանք, գոչեցի, Սնէֆէլսի բերանը ելլենք: Աստուած ողորմի և մինչեւ հոն հասնելու յոյժ պարզեւէ միզի:

— Ե՛տ դառնանք, ըսաւ հօրեղբայրս ինքնիրեն խօսելու պէս:

— Այո՛, առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու:

Պահ մը լուռ թիւն տիրեց:

— Ըսե՛կ է, Ա.քսէլ, շարունակեց հօրեղբայրս յարօրինակ ձայնով մը, այն քանի մը կաթիլ ջուրը՝ քեզի յոյժ ու քաջութիւն չի տուի՞ն:

— Քաջութի՞ւն:

— Առաջուան պէս վհատած կը տեսնեմ քեզի:

Ի՛նչ տեսակ մարդու հետ էր գործս: Տակաւին ի՞նչ ձրագրեր կային մտքին մէջ:

— Ի՞նչ, չէ՞ք ուզեր...:

— Ետ կինա՛լ այս ճամբորդութենէն, երբ ամէն նշան ցոյց կուտայ թէ յաջողելու վրայ ենք... հրբե՛ք:

— Ուրեմն կորուսելու ի դատապարտուած ենք:

— Չէ՛, Ա.քսէլ, չէ, դուն գնա՛. մեռնելդ չեմ ուզեր: Հանսն ալ միասին առ. ինձի մինակ ձգէ՛:

— Ձեզի մինակ թող՛ւլ:

— Գնա՛ կ'ըսեմ: Այս ճամբորդութեան ձեռնարկեցի. կամ մինչեւ վերջը յառաջ պիտի երթամ կամ ա՛լ չպիտի վերադառնամ: Իսկ դո՛ւն մէկնէ՛, Ա.քսէլ, գնա՛:

Հօրեղբայրս վերջին ծայր գրգռուած էր. ձայնը՝ պահ մը մեղմ, նորէն խստացած սպառնական դարձած էր: Խաւար զօրութեան մը՝ անկարելիին դէմ կը մաքառէր: Չէի ուզեր զայն մինակ թողուլ, միւս կողմէ ալ ինքնապահպանութեան բնածին ձգտումը կը թելադրէր զիս փախչելու:

Առաջնորդը՝ սովորական անտարբերութեամբ այս տեսարանը կը դիտէր. կը հասնկար մէջերնիս անցած դարձածը: Ըրած շարժումնիս բացայայտ կը ցուցնէր թէ իւրաքանչիւրը ի՛նչ ուզողութիւն բունել կ'ուզէր: Քովը գացի ու ձեռքը բռնելով՝ ետ դառնալու ճամբան ցցուցի: Իսլանտացին թնթեւ մը գլուխը օրօրեց և հօրեղբայրս ցուցնելով.

— Մասթէր, ըսաւ:

— Տէ՛րը, տէ՛րը, գոչեցի, անզգայ, անիկա քու կեանքիդ տէրը չէ. եկո՛ւր փախչինք:

Հանս անդրդուելի կը մնար:

— Հանգարտէ՛, Ա.քսէլ, ըսաւ հօրեղբայրս, անկէ բան մը մի՛ սպասեր, ինձի մտիկ ըրէ: Երբ դուն գետինը ինկած պուկեր էիր, ես՝ զննեցի այս գետնուզիին կազմութիւնը: Շիտակ կրանիթի գանգուածին մէջ կը տանի: Եթէ քիչ մըն ալ յառաջ երթանք, վտան հմ որ ջուրի տղբիւր մը գտնանք: Տե՛ս թէ ի՛նչ կ'ըսեմ: Երբ Բոլոմպոս իր նաւագնեղէն երեք օր ուզեց նոր հողեր գտնելու համար, նաւաստիները՝ իրենց սարսափահար և հիւժած վրձակին մէջ իսկ նաւապետին իրաւունքը ճանչցան, և նոր երկիրը գտնուեցաւ: Ես մէկ օր մը միայն կ'ուզեմ, եթէ քսանեւորս ժամէն ջուր չի գտնանք, կ'երգնում որ ետ կը դառնանք:

Հակառակ ներքին բարկութեանս չկրցայ դասախօսին վրայ չի խղճալ, երբ մտածեցի թէ ասանկ բան մը ըսելու համար, արդեօք ինչե՞ր չըլլար ներսէն:

— Թող ձեր ուզածին պէս ըլլայ, գոչեցի. Աստուած վարձա-
սրէ ձեր կորովի կամքը: Ճամբայ ելլենք:

ԹԹ.

Նոր գեանուղիին մէջ մտանք: Հազիւ քիչ մը յառաջացած էինք, հորեղբայրս լապտերը պատերուն վրայ պտտցնելով գոչեց.

— Ահա՛ նախնական հողերը, լաւ ճամբու մէջ ենք, քալենք, քալենք:

Երբ հրաշէկ երկիրը պաղլի սկսաւ, իրեն կեղեւին վրայ պատուումքներ յառաջ եկան՝ ծաւալին պղտիկնալովը. հողը խըզ-տեցաւ, ձեղքուեցաւ. մէջը մտած ճամբանիս ալ այդ պատուումք-ներէն մէկն էր:

Քանի վար կ'իջնէինք, նախնական հողերու շարքին յաջոր-գումը յատակ մը կը տեսնուէր: Երկրաբանական գիտութիւնը՝ այս նախնական հողը կ'ընդունի իբր երկրի կեղեւին խարխալը, և զայն երեք խաւերու կը բաժնէ. հերձաքար, կնայ և միքա-թերթաքար՝ որոնք միշտ կրանիթի վրայ բռնուած են:

Կանաչ երանգներով գունազարդուած հերձաքարի խաւին մէջ կը տեսնէինք պղնձի, մանկանէզի, քլաթինի ու ոսկիի մետա-ղական փոռեկուածներ: Յետոյ կուգար կնայը խաւանխտ կազ-մուածքով մը որու կը յաջորդէր միքաթերթաքարը՝ մեծ թերթիկ-ներու ձեւով որոց մէջ շատ դիւրին էր զանազանել միքան:

Ժամը տասերկուքին մօտերը, դիտեցի որ պատերը աւելի բլրերեղական գոյն մը առած էին. միքան՝ միանալով քուարձի ու ֆէլտրաթի հետ կազմած էր ամէնէն կարծր ժայռը որ երկրի կե-ղեւին չորս յարկերը կը վերցունէ. կրանիթէ բանտի մը մէջ փակ-ուած էինք:

Ժամը Չին գետ ջուր չէինք գտած. կրցած ջանքս կ'ընէի հորեղբորս յառաջ երթալուն արգելք մը չըլլալու համար: Վեր-ջապէս ա՛լ չդիմացայ, յոգնութենէս հիսամեռ գետին ինկայ «կը մեանիմ կո՛ր» պոռակով:

Հորեղբայրս ետ դարձաւ: Չեռքերը խաշածուած վրաս նայե-

ցաւ ու խուլ ձայնով մը «Ամէն բան լմնցաւ»:

Վերջին անգամ ըլլալով բարկութեան անեղ շարժում մը նշմարեցի ու աչքերս գոցեցի:

Երբ ինքզինքիս եկայ՝ երկու ընկերներս վերմակներու մէջ ծածկուած գետինը պառկած էին անշարժ: Կը քնանայի՞ն արգեօք: Յոյսս բոլորովին կտրած էի. երբ հորեղբայրս «Ա՛լ ամէն բան լմնցաւ» կ'ըսէր. ըսել է իրաւ ու է ազատումի ճար չէր մնար: Մէկուկէս մղոն թանձր հողի խաւ մը մեզի կ'անջատէր լոյս աշխար-հէն և կարծես այդ ահագին զանգուածը սրտիս վրայ կը ճնշէր:

Պահ մը շշուկ մը լսեցի կարծես. քիչ մը ինքզինքս անփո-փելով, տեսայ որ Հանս լապտերը ձեռքը կը մեկնէր: Ինչո՞ւ որ-սորդը կ'երթար: Հորեղբայրս կը քնանար, ուզեցի իրեն պոռալ. «Հանս կը փախչի կոր» բայց ձայն մը չկրցայ արտաբերել: Սա-կայն երբ սոսկումի պահը անցաւ, տեսայ որ Հանս փոխանակ Սնէֆէլտի ճամբան բռնելու, աւելի գեանուղիին խորերը կը թափանցէր:

ԹԳ.

Արդեօք Հանս ջուրի կարկաչո՞ւմը լսեր էր. աղբի՞ւր մը գտեր էր արդեօք:

Ժամ մը ամբողջ ուղեղս կը շարժուէի այս գաղափարներով, կ'զգայի որ խելքս փախցնելը բան մը չէր: Վերջապէս ոտքի ձայներ առի: Հանս ետ կը դառնար. գնաց հորեղբորս քով ու կամաց մը արթնցուց:

— Ի՞նչ կայ ըսաւ դասախօսը:

— Վաթէն, պատասխանեց որսորդը:

Դանիերէնէ բառ մը խի չէի հասկնար, բայց պէտք է խոս-տովանիլ որ ցաւին աղբեցութեան տակ լեզուագէտ մը եղեր էի:

— Ձո՞ւր, ջո՞ւր, գոչեցի յիմարի մը պէս շարժակելով:

— Ձո՞ւր, կրկնեց հորեղբայրս, հվա՞ր, հարցուց Իսլան-տացիին:

— Նէտաթ, պատասխանեց Հանն:

Շուտ մը ճամբայ ելանք, դեռ ժամ մը չքալած՝ անսովոր շէնկոց մը լսեցի:

— Գետնին մէջ փորուած հեղեղ մըն է, ըսաւ հօրեղբայրս:

Կէս ժամ դեռ քալեցինք առանց կաթիլ մը ջուր տեսնելու: Հեղեղը միշտ պատին մէջ ծածկուած կը մնար: Ատին մը եղաւ, երբ տեսանք որ եթէ քիչ մըն ալ վար իջնէինք՝ հեղեղը պիտի հեռանար մեզմէ: Ուստի ետ դարձանք մինչև այն կէտը ուր աղմուկը ամենէն աւելի զգալի էր: Հանն սուր բրիչ մը առաւ և զարնելիք տեղը լաւ մը սրոշելէ ետքը սկսաւ կամաց կամաց ծակ մը պեղել:

— Ազատեցանք, գոչեցի:

— Այո՛, ըսաւ հօրեղբայրս: Հանն իրաւունք ունէր: Ի՞նչ ընտիր մարդ է. եթէ մինակ ըլլայինք չպիտի կրնայինք գտնել:

Դեռ ժամ մը չտեսած ջուրի ցայտ մը սուլելով անցաւ և դիմացի պատին զարնուեցաւ: Հանն աղաղակ մը հանեց ու գետին ինկաւ: Ցաւին պատճառը չուտով հասկցայ երբ ձեռքս ջուրին մէջ խոթեցի: Ջուրը կ'եռար կոր:

— Հարիւր աստիճան տաքցած ջուր, գոչեցի:

— Թո՛ղ ըլլայ, կը պաղի, պատասխանեց հօրեղբայրս:

Նրբանցքը շոգիով լեցուեցաւ. ջուրը պզտի գետակ մը կը կազմէր ու խոխոջելով կ'երթար կը կորսուէր ճամբուն դարձուածքներուն մէջ:

— Ահա՛ սքանչելի աղբիւր մը, գոչեցի, կ'առաջարկեմ որ զայն գտնողին անունը տանք անոր:

Առաջարկը ընդունուեցաւ և գետը մկրտելով անունը դրինք Հանն Պազ:

Լաւ մը ծարաւնիս յագեցնելէ ու ջրամաննիս լեցնելէ ետքը ուզեցինք աղբիւրը գոցել՝ ժայռի կտորներով, բայց ջուրի հոսանքը այնքան ուժգին էր որ անկարելի եղաւ այդ:

— Ինչո՞ւ համար կը գոցենք կոր, հարցուց հօրեղբայրս յանկարծ:

— Որովհետեւ... կմկմացի առանց պատճառ մը գտնելու:

— Երբ ջուրերնիս կրկին հատնի. սպասե՛՛մ եմք նորէն աղբիւր մը գտնելուս:



Ջուր՝ ցայ մը սուլելով անցաւ

—Անշուշտ ո՛չ:

—Ուրեմն ձգենք սր ջուրը վազէ, թէ մեր ճամբան ցոյց պիտի տայ և թէ ալ ծարաւէն վախնալիք բան մը չպիտի ունենանք: Շատ չանցած երեքնիս ալ խոր քունի մէջ ընկղմած էինք:

ԹԳ.

Յաջորդ օրը քաջած նեղութիւններուս յիշատակը միայն մնացեր էր: Ա՛լ բանէ մը վախնալիք չունէի. արհամարհանօք պիտի մերժէի ետ դառնալու ո եւ է առաջարկ: Ինչո՞ւ համար երկրիս կեդրոնը չպիտի հասնէինք՝ հօրեղբօրս պէս միտքը դրածը կատարող մէկը, Հանսի պէս ճարպիկ առաջնորդ մը և ինձի նման «համոզուած» եղբօրորդի մը:

Ճամբան դէպ ի հարաւ-արեւելք կ'ուղղուէր ու գրեթէ հորիզոնական էր: Յուլիս 10ին, ուրբաթ իրիկուն հաշուեցի որ Ռէյքեափիքի հարաւ-արեւելեան կողմը կը գտնուէինք 30 մղոն հեռաւորութեամբ և 2 ու կէս մղոն հողին խորը:

Ոտքերնուս տակ, յանկարծ ահագին հոր մը բացուեցաւ հօրեղբօրս մեծ ուրախութիւն պատճառելով որ խնդութենէն ծափ կը զարնէր: Զուսնները առաջին անգամուսն պէս կարգի դրինք ու սկսանք վար իջնել: Քառսրդ ժամը անգամ մը դադար կ'առնէինք և ժայռի դուրս ցցուած մասերու վրայ կառչելով քիչ մը ուտելիք կամ ջուր կը բաժնէինք իրարու:

Այս էջքը երկու օր տեւեց և այդ սիջոցին երկու մղոնէ աւելի վար իջած էինք: Ասկէ ետքը ճամբան նորէն հորիզոնական դիրք մը առաւ: Շարաթ օր ահագին քարայրի մը բերանը հասած էինք:

ԹԵ.

Յաջորդ օրը կիրակի պիտի պահէինք: Առտուն երբ արթընցայ, հաճելի հանգստութիւն մը զգացի մտածելով որ այդ օրը ճամբայ չպիտի քալէինք: Թէեւ արեւը չէր գար օրուսն սկիզբը աւետելու, սակայն գտնուած տեղերնիս շատ սիրուն տեսարան մը կ'ընծայէր: Արդէն լուսին, արեգակ, աստղեր, ամէն բան մոռցած էինք:



արքան իտիպան ցի պոյր

Նախաճաշէն ետքը հօրեղբայրս հաշիւները կարգի դնելու զբաղեցաւ :

— Ճամբայ ելած կէտերնուս 85 մղոն տեղ յառաջացած ենք, ըսաւ :

— Ըսել է Ատլանտեանի տակը կը գտնուինք հիմակ :

— Այո՛ :

— Եւ կարելի է սոսկալի փոթորիկ մը կը փրթի մեր գըլ-խուն վերեւ :

— Ինչո՛ւ չէ . . . բայց մի վախնար, Ա.քսէլ, մեզի անկէ զատող պատը բաւական հաստ է. եթէ չեմ սխալիր 16 մղոն է :

— Տասնըվեց մղոն, գոչեցի, բայց գիտունները այդքան թանձրութիւն մը կուտան երկրիս կեղեւին, և անոնց հաշիւներուն նայելով այս խորութենէն վար 1500 աստիճան ջերմութիւն մը ըլլալու էր :

— «Ըլլալու էր» տղաս :

— Եւ բոլոր այս կրանիթները հաստատուն մնալու տեղ հա-լած վիճակ մը ունենալու էին :

— Կը տեսնես որ այդպէս չէ : Զերմաչափը քանի՞ աստիճան կը ցուցնէ :

— Քսանեւեթը աստիճան վեց տասներորդ :

— Ըսել է դեռ հազար չորս հարիւր եօթանասուն և չորս աստիճան, չորս տասներորդ պէտք է, որպէս զի գիտունները շիտակ խօսած ըլլային : Ըսել է Տավի չէր սխալեր և ես ալ իրա-ւունք ունէի անոր ըսածին հաւատալու : Ի՞նչ կրնաս ըսել :

— Ոչինչ, պատասխանեցի. թէեւ շատ բաներ ունէի ըսելիք : Տավիի գրութիւնը բնաւ չէի ընդուներ : Անշուշտ գտնուած տե-ղերնիս լավայի անթափանց խաւով մը պատած ըլլալով դուրսի ջերմութիւնը չէր կրնար մինչեւ մեզի զգալի ընել տալ իր ազ-դեցութիւնը :

— Հօրեղբայր, ըսի, հաշիւնիդ շիտակ է, բայց ներքեցէք որ անկէ բան մը հետեւցնեմ :

— Խօսէ՛, տղաս, ուղածդ հարցուր :

— Իսլանտայի լայնութեան աստիճանին տակ, ուր կը գըտ-նուինք, երկրին շառաւիղը գրեթէ 1583 է :

— Հազար հինգ հարիւր ութսուն երեք մղոն և մէկ երրորդ :

— Կլորիկ հաշուով 1600 ըսինք : Արդ 1600ին վրայ մենք մինչեւ հիմա 16 մղոն կտրեցինք :

— Այո՛ :

— Եւ ասի 85 մղոն շեղ ճամբու մը վրայ :

— Կատարելապէս :

— Քսան օրուան մէջ :

— Քսան օրուան մէջ :

— Արդ, տասնըվեց մղոնը՝ երկրիս շառաւիղին մէկ հարիւ-րորդը կ'ընէ : Այս հաշուով 2000 օր կամ հինգ ու կէս տարի պիտի իջնենք տակաւին :

Ուսուցչապետը չպատասխանեց :

— Առանց հաշուելու որ եթէ 16 մղոն ուղղահայեացի համար 80 մղոն հորիզոնական ճամբայ պէտք է, երկրիս կեդրոնը հասնելէ շատ առաջ, երկրագունտին երեսի մէկ ուրիշ կէտէն դուրս պիտի ելլենք :

— Կրողին երթա՛յ հաշիւներդ, գոչեց հօրեղբայրս բարկանա-լով, կրողին երթա՛յ ենթադրութիւններդ. ինչի՞ վրայ հիմնուած են ատոնք : Ո՞վ կրնայ պնդել թէ այս ճամբան շիտակ երկրիս կեդրոնը չտանիր : Ինչ ալ ըլլայ, ինձմէ առաջ մէկը եկած է հոս. եթէ անիկա յաջողեցաւ՝ ես ալ պիտի յաջողիմ :

— Անշուշտ պիտի յաջողիք, բայց կրնամ . . .

— Կրնաս պապանձիլ, Ա.քսէլ, երբ ատանկ ապուշ բաներ ըսել ուզես :

Տեսայ որ հօրեղբոր մորթին տակէն անարկու ուսուցչապետը դուրս կ'իլլէր, ուստի ձայնս քաշեցի :

— Հիմա, ըսաւ, ծանրաչափը նայէ՛, ի՞նչ կը ցուցնէ կոր :

— Ահագին ճնշում մը :

— Տեսա՛ր, կամաց կամաց իջնելով շատ խիտ մթնոլորտի մը վարժուեցանք առանց նեղուելու :

Այնպէս է. պատասխանեցի, վախնալով որ նորէն կը բար-կանայ. բայց այս ճնշումը երթալով պիտի աւելնայ :

— Այո՛, քանի իջնենք, օգը այնքան պիտի խտանայ. նայն-պէս մարմինները իրենց ծանրութիւնը կամաց կամաց պիտի կոր-

սընցնեն, ինչու որ երկրիս կեդրոնին վրայ ձգողութեան գորու-
թիւնը ոչինչ է:

— Գիտեմ: Բայց վերջապէս օգը խտանալով ջուրէն ալ պիտի
ծանրանայ, այն ատեն ի՞նչպէս պիտի իջնենք:

— Բա՛հ. գրպաննիս քարեր կը լեցնենք:

ԽԶ.

Վերջին խօսակցութեան վրայ երկու շաբաթ անցեր էին առանց
նշանակելի բան մը պատահելու: Օգոստոս 7ին երկրիս երեսէն
մինչեւ 30 մղոն վարը կը գտնուէինք:

Այդ օրը ճամբան քիչ մը ծռած ուղղութիւն մը կ'առնէր:
Ամէնէն առաջ ես կը քալէի, ելեքտրական լապտերներէն մին
ձեռքս էր. իսկ միւսը հօրեղբայրս կը բռնէր: Կրանիթի խաւերը
քննելու կ'զբաղէի: Յանկարծ, ետիս նայելով տեսայ որ մինակ
եմ: «Քիչ մը շուտ քալած ըլլալու եմ, ըսի մտքէս, և կամ
Հանս ու հօրեղբայրս կանգ առած են: Ետ դառնանք»:

Եկած ճամբէս ետ դարձայ: Քառորդ մը քալեցի. չորս դիս
նայեցայ. մարդ չկար. կանչեցի. պատասխան չառի. ձայնս կը
կորսուէր խոր արծազանքի մը մէջ: Վրայէս պաղ մը անցաւ:

«Քիչ մը հանդարտինք, ըսի բարձրաձայն, վստահ եմ որ ըն-
կերներս պիտի գտնեմ. ճամբան մէկ հատ է. ես շատ յառաջացած
էի, հիմայ ետ դառնանք»: Կէս ժամ եւս եկած ճամբէս ետ դար-
ձայ: Երբեմն ականջ կուտայի թէ ձայն մը չիգա՞ր ականջիս: Բայց
տարօրինակ լուսթիւն մը կը տիրէր: «Նայի՛նք, կը կրկնէի, քանի
որ մէկ ճամբայ մը կայ և անոնք ալ այդ ճամբուն վրայ են, ու-
րեմն իրար պիտի գտնենք: Գուցէ ինծի չտեսնելով կարծեն թէ
ետ մնացեր եմ, և իրենք ալ ետ դառնան: Եթէ քիչ մը շուտ
քալեմ պիտի հասնիմ անոնց. վստահ եմ: Մանաւանդ որ ճամբաս
չեմ կրնար կորսնցնել, գետակը միշտ ոտքերուս տակը ըլլալով»:
Եւ ծռեցայ որ անոր ներկայութեան վստահ ըլլամ ձեռքս մէջը
թըջելով: Սոսկո՛ւմ... գետը չէր հոսեր. ոտքերուս տակ չոր ու
խորտուբորտ ժայռը կար մինակ:

ԽԷ.

Յուսահատութիւնս նկարագրել անկարելի է: Մարդկային
լեզուին մէջ չկայ բառ մը զգացածս բացատրելու համար: Ողջ ողջ
թաղուած էի, և անօթի ծարու մեռնելու հեռանկարը կը ցցուէր
մտքիս առջեւ:

Բայց ի՞նչպէս գետին ընթացքէն բաժնուեր էի: Անշուշտ երբ
ես բացուած ճամբու մը մէջ կը մտնէի, գետը՝ հողին ծուռու-
թիւններուն հետեւելով ուրիշ բացուածքէ մը կ'անցնէր իրեն հետ
տանելով միւս ճամբորդները: Ի՞նչպէս ետ դառնայ. քարացած
հողին վրայ ոտքերս բնաւ հեռք մը չէին ձգեր: Գլուխս կը ճա-
թեցնէի ճար մը գտնելու համար. կացութիւնս մէկ բառի մէջ
կ'ամփոփուէր. կորսուած էի:

Այ՛ո՛, կորսուած՝ անանկ խորունկութեան մը մէջ զոր չէի
կարող երեւակայութեանս մէջ սեղմեցնել: Կը ջանայի աշխարհիս
իրերը մտքիս առջեւ բերել: Համպուրկ, Բէժնիկզկրասի տունը,
խեղճ Կրաիւպէնս, արագ արագ կ'անցնէին մուր յիշողութեանս
առջեւէն: Վայրկենական զառանցանքի մը մէջ տեսայ ճամբորդու-
թեան ամբողջ պարագայները. ծովէն անցնելիս, Իսլանտա, Պրն.
Տրիտրիքսըն, Սնէֆէլս: Ինքնիրենս կ'ըսէի որ եթէ յոյսի նշոյն մը
իսկ մնար ինծի համար, ատիկա յիմարութեանս նշանը պիտի
ըլլար. ուստի աւելի լաւ էր յուսահատիլ:

Յիրաւի, ո՞ր մարդկային արարած կրնար գլխուս վրայ գոց-
ուող կամարները բանալ և ինծի երկրիս երեսը հանել:

— Ա՛խ, հօրեղբայր, գոչեցի յուսահատութեան մէկ վայր-
կեանիս:

Յանդիմանութեան միակ բառը եղաւ ատիկա՝ զոր արտասա-
նեցի, որովհետեւ կը հանկնայի խեղճ մարդուն զգացածը ինծի
փնտռած ժամանակ:


Երբ համոզուեցայ որ ամէն մարդկային օգնութեան հասողու-
թենէ դուրս եմ, դիմեցի երկնային օգնութեան: Յիշեցի մանկու-

Թեանս օրերը, մայրիկիս օրօրը՝ զոր համբուրելու տարիքիս մէջ մինակ ճանչցած էի: Աղօթեցի Աստուծոյ, և ապաշաւս՝ թէեւ քիչ մը ուշ՝ բայց սրտաբուխ եղաւ: Դէպ ի Նախախնամութիւն այս դարձս աղէկ ազգեցութիւն ըրաւ վրաս, միտքս քիչ մը հանգչեցաւ և կրցայ իմացական բուրբ կարողութիւնս ամփոփել գտնուած վիճակիս վրայ: Դեռ երեք օրուան ուտելիք ունէի, ջրգդումս ալ լեցուն էր. բայց չէի կրնար այս վիճակիս մէջ մնալ: Ի՞նչ ճամբայ բռնէի. վե՛ր ելլելու էի թէ վար իջնել:

Անշուշտ վեր ելլելու էի. միշտ զառիվերէն ելլելով անպատճառ Հանս-Պոպէն բաժնուած տեղը պիտի հասնէի: Ա՛լ անկէ վերջ ուզած ատենս կրնայի ետ դառնալ: Փրկութեան ճամբան ատ էր. ամէնէն առաջ գետը գտնելու էի: Ոտքի ելայ և երկաթապատ գաւազանիս կռթնելով ճամբաս ձեռք առի: Զառիվերը քիչ մը ցից էր, բայց միշտ յոյսով կը քալէի: Կէս ժամի չափ տեւած էր երբ յանկարծ դիմացս ելլող պատի մը զարնուեցայ. ճամբաս գոցուած էր. անելի մը մէջ փակուած էի: Ըսե՛մ թէ ի՛նչ սոսկում, ի՛նչ յուսահատութիւն տիրեց վրաս. երբ վերջին յոյսերս բաղխեցան կրանիթէ այս պատին: Հազարումէկ ճիւղաւորութիւններու բաժնուած այս լաբիրինթոսին մէջ կորսուած էի. ա՛լ մինակ մեռնիլ կը մնար, և այն ալ ի՛նչ մահ: Խօսիլ ուզեցի, բայց խուլ աղաղակ մը գուրս թուաւ չորցած շրթունքներէս:

Այս անձկութիւններուն մէջ՝ վերջին սոսկում մըն ալ աւելցաւ. լապտերս ձեռքէս իջնալով աւրած էր և շտկելու միջոց ալ չունէի: Լոյսը երթալով կը տկարանար և մարելու վրայ էր. մըթընցած պատերուն վրայ շուքերը սկսան տատանիլ. թարթիչներս գոցելու կը վախնայի՝ չկորսնցնելու համար փախչելու վրայ եղող այս լոյսին վերջին հիւլէները: Վերջապէս յետին շող մը պլպլաց լապտերիս մէջ և ալ խոր մութի մէջ թաղուեցայ. ի՛նչ սոսկալի էր արձակած աղաղակս: Երկրիս վրայ, ամէնէն մութ տեղն իսկ լոյսը իր երաւունքները կը պահէ. շատ տարտամ կ'ըլլայ, գրեթէ աննշմարելի կ'ըլլայ, բայց վերջապէս աչքը կարող է զայն զգալ: Իսկ հոս տեղ՝ ոչինչ. բացարձակ մթութիւնը՝ բառին կատարեալ առումովը կայր մը ըրած էր ինձի:

Գլուխս կորսնցուցեր էի. ձեռքերս դէպ ի առաջ երկնցուցած



Աղօթեցի Աստուծոյ

սկիւզի վազել, միշտ վնաս իջնելով, պրուալով, սոսնալով, պատերազն զանոնուելով, իննալով ու ելլելով, դէմքս ու ձեռքերս արիւնընուայ, ամէն վայրկեան սպասելով որ դիմացս պատ մը ելլէ ու գլուխս անոր զարնուելով ջախջախուի:

Այս անզգայ արշաւանքս ո՞րտեղները ձգեց ինձի. բնաւ չպիտի գիտնամ ասիկա. վերջապէս ժամեր անցնելէ ետքը. բուրովին ուժասպառ, ինկայ պատին երկայնքը ու ինքզինքս կորսընցուցի:

ԹԲ:

Երբ ինքզինքիս եկայ. երեսս արցունքով թրջուած էր: Ինչպէս ժամանակս վերաւորուելով բաւական արիւն կորսնցուցեր էի. ա՛խ, ինչո՞ւ մէկ անգամէն գլուխս չէր ջախջախուած:

Կամաց կամաց նուաղիւս զգացի, և անոր հետ միասին վերջին անշնչացումը: Դղրդուն ձայն մը ուշս գրաւեց յանկարծ. կարծես կայծակ մը կ'որոտար և կը կորսուէր անդունդին խորերուն մէջ: Ականջ դրի թէ պիտի կրկնուի՞ նորէն. բայց քառորդ մը անցաւ առանց բան մը իմանալու: Փրթած ժայռի կտոր մը ըլլալու էր որ անդունդին մէջ կը գլորէր:

Պահ մը դիպումով ականջս պատին կաթնեցաւ. դողացի. կարծես թէ խօսակցութիւն մը կը լսէի, հեռաւոր, տարտամ, անորոշ խօսակցութիւն մը:

— Զառանցանք է, մտածեցի:

Բայց ո՛չ. աւելի ուշագրութեամբ մտիկ ընելով ձայնի մրմունջ մը լսեցի. թէեւ չէի հասկնար խօսուածները, սակայն վտտահ էի որ խօսակցութիւն մը տեղի կ'ունենար: Քանի մը անգամ «Փորլորատ» բառը զարկաւ ականջիս. ո՞վ էր խօսողը. անշուշտ Հանս կամ հօրեղբայրս: Եթէ ես անոնց խօսքերը կ'իմանայի, ըսել է որ անոնք ալ կրնային իմ ըսածներս լսել:

— Օգնութիւն, պօռացի բոլոր ուժովս, օգնութիւն:

Եւ մտիկ ըրի: Ականջս պատին վրայ պատցնելով անանկ տեղ



մը գտայ ուր ամէնէն աւելի յստակ կը լսուէր ձայները: Աորէն լսեցի «Փորլօրատ» բառը, յետոյ հօրեղբօրս ձայնը առի որ անունս կուտար:

Հիմայ կը հասկնայի. ուսուցչապետը բերանը դուրսուղիին պատին տալով կը խօսէր և այդ պատը հեռախօսի թելին պէս ձայնը մինչեւ ինծի կը հասցներ: Բերանս ժայռին կցեցի և կըր-
ցածիս չափ ուժով պօռացի:

— Լիտենպրօք հօրեղբայր:

Քանի մը երկվայրկեան սպասեցի, և պատին մէջէն ձայն մը ականջիս հասաւ:

— Ա.քսէլ, Ա.քսէլ, դո՞ւն ես:

— Այո՛, այո՛, պատասխանեցի:

— Զաւա՛կս, ո՞ւր ես:

— Ամենախօր մթութեան մէջ կորսուած:

— Բայց լապտերդ:

— Մարեցաւ:

— Հապա գե՛տը:

— Անհետ եղած է:

— Ա.քսէլ, խեղճ Ա.քսէլս, սիրտ ա՛ն:

— Քիչ մը սպասեցէ՛ք... պատասխանելու կարողութիւն չու-
նիմ, բայց դուք խօսեցէ՛ք:

— Սիրտ ա՛ն, կրկնեց հօրեղբայրս. մի՛ խօսիր, մտիկ ըրէ:
Գետնուղիին մէջ վար ու վեր ելլելով քեզ փնտռեցինք, բայց
անկարելի եղաւ գտնելը. հրացանի հարուածներ պարպեցի. եթէ
հիմայ իրար կը լսենք՝ չենք կրնար իրարու ձեռք բռնել, բայց
իրար իմանալնիս ալ բան մըն է: Ա.քսէլ, յոյսդ մի կտրեր:

— Հօրեղբայր:

— Զաւա՛կս:

— Կ'ուզեմ գիտնալ թէ մեզի բաժնող հեռաւորութիւնը ո՞ր-
քան է:

— Շատ դիւրին է:

— Այո՛. բառ մը արտասանեցէ՛ք, ճիշդ երկվայրկեանը նշա-
նակելով. երբ որ լսեմ, անմիջապէս պիտի կրկնեմ այդ բառը, և
դուք պիտի ճշդէք ձեր իմացած վայրկեանը:

— Այո՛, խօսելու և պատասխանը առնելու մէջտեղ անցած
ժամանակին կէսը պիտի ցուցնէ թէ ձայնը որքան ատենէն կտրեց
անցաւ այդ միջոցը:

— Ճիշտ է, հօրեղբայր:

— Պատրաստ ես:

— Այո՛:

— Լա՛ւ, քու անունդ պիտի ըսեմ:

Ականջս պատին կաթնցուցի՝ և երբ «Ա.քսէլ» բառը լսեցի,
անմիջապէս պատասխանեցի ու սպասեցի:

— Քառասուն երկվայրկեան. ըսաւ հօրեղբօրս ձայնը, երկու
բառերուն մէջտեղ, ըսել է՝ ձայնը քսան երկվայրկեանէն կը կտրէ
այս միջոցը. արդ մէկ երկվայրկեանը 10/20 ոտք հաշուելով՝ մէկ-
ուկէս մղոն և մէկ ութերորդ կընէ:

— Մէկ ու կէս մղոն:

— Այս հեռաւորութիւնը բան մը չէ՛, Ա.քսէլ:

— Բայց ի՞նչն էր հմ, թէ վեր ելլելու:

— Ի՞նչն էր ես, Ա.քսէլ, և ահա թէ ինչո՛ւ: Հիմա ընդարձակ
տեղ մը կը գտնուինք ուրկէ կը մեկնին շատ մը գետնուղիներ:
Դուն ալ անոնցմէ մէկուն մէջ մտած լլլալու ես: Ոտք ել ուրեմն
և ճամբայ ինկիր: Քալէ՛, ինքզինքդ քաշքէ՛. և ճամբուն ծայրը
մեզի պիտի գտնես որ գրկաբաց կ'սպասենք: Ճամբայ ե՛լ ուրեմն,
Ա.քսէլ:

Այս խօսքերը սիրտ տուին ինծի:

— Մնաք բարո՛վ, հօրեղբայր, գօչեցի:

— Յտետութիւն, Ա.քսէլ:

Ասոնք եղան վերջին խօսքերնիս: Երախտագիտական աղօթք
մը ըրի Աստուծոյ, ոտքի ելայ և ինքզինքս նետեցի գէպ է յա-
ռաջ: Վայրկեան մը եղաւ ուր այնչափ արագ վար կը սահէի որ
ինքզինքս բռնել անկարելի էր: Յանկարճ ոտքս պարապը գնաց,
ցից ճամբէ մը վար գլորեցայ և գլուխս ցից քարերուն զարնուե-
լով մարեցայ ինկայ:

ԻՓ.

Երբ ինքզինքիս եկայ, կէս մութ տեղ մը՝ հաստ ծածկոցներու վրայ պառկած էի. հօրեղբայրս քովս կը հսկէր. դէմքիս վրայ կենդանութեան նշան մը փնտռելով: Առաջին հառաջիս՝ ձեռքէս բռնեց, առաջին նայուածքիս՝ ուրախութեան ազազակ մը արձակեց:

- Կ'ապրի կոր, կ'ապրի կոր գոչեց:
- Այո՛. պատասխանեցի տկար ձայնով:
- Զաւա՛կս, ըսաւ հօրեղբայրս զիս կուրծքին վրայ սեղմելով, ազատեցա՛ր:

Ասանկ փորձեր պէտք էին՝ դասախօսին սրտին մէջ նման յուզում մը յառաջ բերելու համար: Այս պահուն Հանս ներս մտաւ. դէմքը զուարթ երեւոյթ մը առաւ, «կօտ տէկ» ըսաւ ձեռքս սեղմելով:

- Բարե՛ւ, Հանս, բարեւ, միմնջեցի: Հիմա՛ հօրեղբայր, ըսէք թէ ո՛ւր կը գտնուինք:
- Վաղը, Ա.քսէ՛լ, վաղը, հիմա շատ տկար ես, քնացիր:
- Գէթ ըսէք թէ ժամը քանի՞ն է, ո՞ր օրուան մէջն ենք:
- Իրիկուան ժամը 11 է. այսօր կիրակի է, օգոստոս 9, եւ չեմ ներեր որ ամսուն 10էն առաջ հարցում մը ընես.

Իրաւ ալ շատ տկար էի, շուտ մը քնացայ՝ մտքէս չհանելով որ չորս օր ամբողջ կորսուած մնացեր էի:

Յաջորդ օրը երբ արթնցայ, աչքերս չորս կողմ պտտցուցի, անկողնիկս զետեղուած էր սքանչելի շթաքարերով զարդարուած քարայրի մը մէջ. գետինը բարակ աւազով ծածկուած էր. թէեւ ոչ լապտեր եւ ոչ ալ ջահ վառուած էր, սակայն կէս-լոյս մը՝ քարայրին նեղ դռնէն ներս կը թափանցէր: Նոյնպէս տարտամ աղմուկ մը կ'առնէի, նման ծովեզրին վրայ փշրուող ալիքներու, որու կը խառնուէր նաև հովի մը սուլումը: Երա՞զ կը տեսնէի արդեօք: Այս միջոցին հօրեղբայրս ներս մտաւ:

- Բարիլոյս, Ա.քսէ՛լ, ըսաւ զուարթութեամբ, յուսամ աղէկ ես քիչ մը:

— Հապա՛, հօրեղբայր, ըսի անկողնիս մէջ նստելով, ինքըզինքս շատ աղէկ կ'զգամ եւ իբր պայտոյց՝ աղուոր ընդունելութիւն մը պիտի ընեմ պատրաստած նախաճաշերնուդ:

— Հիմակ կը պատրաստեմ, ըսաւ հօրեղբայրս: Մինչդեռ անիկա ճաշը կը պատրաստէր, հազարումէկ հարցումներ կ'ընէի իրեն: Ասանկով իմացայ թէ ի՛նչպէս ահագին քարի կտորներու հեղեղի մը մէջ ես ալ քշուեր եւ մինչեւ գետնուղիին բերանը ինկեր էի:

— Ի՛նչ եւ է, ըսաւ դասախօսը, ա՛լ սուկէ ետքը իրարմէ չը բաժնուինք, գուցէ մէկ մըն ալ իրար չենք գտնար: Ըսել է ճամբորդութիւնը դեռ չէր լնացած. աչքերս խոշոր խոշոր բացի:

- Ի՛նչ կայ, Ա.քսէ՛լ:
- Ներեցէ՛ք որ հարցում մը ընեմ: Կ'ըսէք թէ ողջ առողջ եմ:
- Հապա՛:
- Բոլոր անդամներս անվնասօ են:
- Այո՛:
- Հապա գլո՞ւխս:

— Գլուխդ, քանի մը վէրքերէ գատ, կատարեալ վիճակի մէջ երկու ուսերուդ վրայ դրուած է:

- Վախնամ ուղեդս է որ խանգարուած է:
- խանգարուած:
- Այո՛: Երկրիս երեսը ելա՞նք հիմակ:
- Անշուշտ ո՛չ,

— Ուրեմն պէտք է որ խենթեցած ըլլամ, ինչու որ ցերեկուան լոյս կը տեսնեմ, փչող հովին սուլումը կը լսեմ, եզերքին վրայ խորտակուող ալիքներու ձայնը կ'առնեմ:

- Բա՛հ, մինակ ա՞տ է:
- Կը հասկընէ՞ք...
- Բացատրի՛րք բան չկայ. բայց պիտի տեսնես որ երկրաբանութիւնը դեռ իր վերջին խօսքը ըսելէ շա՛տ հեռու է:
- Դո՛ւրս ելլանք, գոչեցի:
- Չէ՛, Ա.քսէ՛լ, հովը ուժով է, կրնայ վնասել քեզ:

— Հաւատացէ՛ք որ բոլորովին աղէկցած եմ, դուրս ելլենք նայի՛նք:

— Ի՞նչ մըն ալ համբերէ, տղաս: Այսօր ալ յողնութիւն առ, վազը նաւ պիտի նստինք, կրնայ ըլլալ որ ճամբորդութիւնը երկար տեւէ:

Վերջին խօսքին վրայ ա՛լ չդիմացայ. ցատքեցի ելայ եւ հօրեղբօրս արգելքին հակառակ՝ ակնթարթի մը մէջ հագուելով դուրս նետուեցայ:

Ը.

Առջի բերան բան մը չտեսայ. աչքերս մութին վարժուելով շուտ մը գոցուեցան: Կամաց կամաց վարժուելով երբ զանոնք բացի՝ մեծ եղաւ զարմացումս:

— Ծով՛ը՛, գոչեցի:

— Այո՛, պատասխանեց հօրեղբայրս, Լիտէնպրօքի ծովը: Ո՛չ մէկ նաւորդ պիտի կրնայ վիճիլ այդ պատիւը ընծայելու իմ աւունիս:

Ջուրի ընդարձակ ծածկոյթ մը կը տարածուէր աչքի տեսողութենէն ալ անդին: Ճշմարիտ ովկիտոնոս մըն էր՝ տմոյն և քիչ մըն ալ վայրենի եղերքներով: Զարմանալին՝ բոլոր այս բաները լուսաւորող լոյսն էր. անշուշտ արեւին ճառագայթները չէին անոնք, ոչ ալ լուսինին: Ելեքտրական լոյս մըն էր, մշտնջենական հիւսիսայգի պէս բան մը որ տարտամ ճերմակ ճառագայթներով կը ցօլացնէր վճիտ ծովուն եզերքը:

Երկնակամարը կազմուած էր խոշոր ամպերով, փոփոխուն ու յարաշարժ շողիներով՝ որոնք խտանալով հեղեղանման անձրեւներ պիտի ձեւացնէին: Հիմա «օգը գեղեցիկ էր», ելեքտրական հոսանուտներ՝ բարձր ամպերուն վրայ շողջողուն լոյսի ճառագայթներ յառաջ կը բերէին:

Միտքս ինկաւ Անգլիացիի մը սա տեսութիւնը թէ երկիրս մէջը պարապ գունտ մըն է, որուն ներսը օդին անագին ճնշումին հետեւանօք լուսաւորուած կը մնար. երկու մօլորակներ, Բլլուդօն և Բրօզէրբին, իրենց շրջանը կը կատարէին այդ պարապութեան մէջ: Արդեօք իրս՞ւ էր ատիկա:



Ակնբարբի՛ մը՝ մեջ՝ հագուելով՝ դուրս նետուեցայ

ձշգրիտ կերպով խօսելով տեսակ մը քարայրի մէջ էինք որու լայնքն ու երկայնութիւնը չափել անհնար էր, որովհետեւ ծովուն ջուրերը՝ երկինքի ամպերուն հետ հորիզոն մը կը ձեւացնէին, ուրկէ անգին կը շարունակուէր դեռ այս ստորերկրեայ աշխարհը։ Չէի կրնար բացատրութիւն մը գտնել թէ այս ահագին քարայրը ինչպէս բացուած էր և ինչպէս հաստատուն կը մնար. ցեղունը կազմող կրանիթը ո՛ւր տեղէն յենակէտ մը գտած էր։ Կարելի չէր պատասխան մը գտնել։

Այս տեսարանին նորութիւնը. ճնշեալ օդին պարունակած թթուածինը՝ ազդեցին առողջութեանս վրայ ու երեսս գոյն եկաւ։ Քառասունըիօթը օր մութ ծակերու մէջ քաջըլուելէ ետքը չէք կրնար երեւակայել թէ ի՞նչ բերկրութեամբ կը շնչէի այս թեթեւ զեփիւռը։ Հօրեղբայրս ինծի չափ չէր հիւանար, արդէն քանի քանի անգամներ դիտած էր այդ տեսարանը ինչ առաջ։

— Քիչ մը պտտելու չափ ոյժ ունի՞ս, հարցուց։

— Հապա՛։

— Եկուր ուրեմն, Ա.քսէլ, թեւս մտիր և ծովեզերքն ի վեր երթանք։

Յօժարափոյթ ընդունեցի և ճամբայ ելանք։ Ձախ կողմերնիս կը բարձրանային դարուվայր ժայռեր, որոնց մէջէն բարակ գետեր անհամար ջրվէժներ ձեւացնելով կ'երթային ծովին մէջ կորսուելու։ Բարձր հրուանդանի մը անկիւնը դարձած էինք երբ անակնկալ տեսարան մը ուշագրութիւնս գրաւեց։ Անտառ մը, բարձր խիտ, կը պարզուէր աչքերնուս առջև։ Ծառերը միջակ մեծութեամբ էին, ճիւղերն ու տերեւներ իրար անցած՝ տեսակ մը խիտ անթափանց հովանոց կը ձեւացնէին։

— Մուկի անտառ մըն է ասիկա, ըսաւ հօրեղբայրս։

Իրաւ ալ չէր սխալիր. ահագին սունկեր երեսուն քառասուն ոտք երկայնութեամբ և գրեթէ նոյնչափ տրամագծով գլուխներով հազարներով հաւաքուած անտառ մը կը ձեւացնէին։ Բայց մինակ ասոնք չէին կազմեր այս ստորերկրեայ բնագաւառին բուսակա-նութիւնը. քիչ մը հեռուն կը բարձրանային օսկեփայլ տերեւեճե-րով ծառեր, որոնք պարզապէս մեր գեանամամուռներն էին՝ հա-րիւր ոտք բարձրութիւն մը ունենալով, ծառաբերձ պտերներ,



ցցուած փուշերով թեփածառեր, հօտիսայներ:

— Ի՞նչ սքանչելի է, գոչեց հօրեղբայրս, այս երկրորդ շրջանի բոյսերու մեծութիւնը. կը տեսնե՞ս Ա.քսէլ, բոլոր այս հսկայաբերձ ծառերը՝ մեր պարտէզներուն մէջ ցածուկ խոտեր են:

— Իրաւունք ունիք հօրեղբայրս, կարծես թէ բնութիւնը դիտմամբ պահած է այս բոյսերը տեսակ մը շերմանոցի մէջ:

— Մինակ շերմանոցը չէ՛, տղաս, կարելի է գառապեղն ալ կայ: Տե՛ս սա ոսկերտոյինները:

Ոտքերուս տակ նայեցայ. շրհեղեղէն առաջ ապրող կենդանիներուն այս անշնչելի մնացորդները ցիրուցան էին ահազին՝ դաշտին մէջ. ամէն մէկ ոսկորին՝ առանց վարանելու իր անունը կուտայի:

— Ասիկա պակաժանիի մը ստորին կզակն է, կ'ըսէի ասիկա այլակենդանիի (dinotherium) ակուան է. իսկ ասիկա մեծագագանի (mégatérium) ուստիկրն ըլլալու է:

Բոլոր այդ կենդանիները այս ծովին եզերքը ապրած են, հսկայաբերձ տունկերու հովանիին տակ, անկարելի է որջրնական յեղաշրջում մը հոս բերած ըլլայ անոնց ոսկերտոյինները: Տեսէ՛ք, նոյն իսկ ամբողջ կմախքներ կան. բայց...

— Բայց ի՞նչ... հարցուց հօրեղբայրս:

— Չեմ հասկնար թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ այս կրանիթէ քարայրին մէջ ասանկ չորքոտանիներ ապրած են:


— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ կենդանիները՝ երկրորդական դարու տեւողութեան միջոցին միայն երեւցած են երկրիս վրայ, նոյն ատենները՝ երբ մերային հողերը՝ հրաբխային ժայռերը ծածկելով նոր ցամաքներ կը ձեւացնէին:

— Կրնամ ըսել թէ, Ա.քսէ՛լ, այս հողը մերային է:

— Երկրիս երեսէն այսչափ խորունկ մերային հողը ի՞նչպէս գոյութիւն կ'ունենայ:

— Տե՛ս թէ ինչպէս կը մեկնեն այս երեւոյթը երկրաբանութեան մէջ: Ատեն մը եղած է որ երկրիս կեղեւը դեռ առածգական էր, ու կը հպատակէր՝ ծանրութեան օրէնքներուն համաձայն, վերէն ու վարէն եղած ճնշումներուն: Կարելի է որ տեղ տեղ գե-



Բոլոր այս կենդանիները այս ծովին եզերքը ապրած են

տինի բարակ խաւը փլչելով՝ մրրային հողերու մեծ մաս մը բաց-
ուած վիհին մէջ գլտորեց

— Այգպէս ըլլալու է. կարելի է հիմա իսկ այդ գազաններէն
դեռ կենդանի եղողներ գտնուին:

Եւ ստակումով չորս կողմն ակնարկ մը նետեցի, բայց բնաւ
կենդանի արտրած մը չը կրցի տեսնել:

Բաւական յոգնած էի արդէն. հրուանդանի մը ծայրը նստանք
քիչ մը յոգնութիւն առնելու համար: Այս ամայի ծովը կը տա-
րածուէր անսահման և օդին մշուշներուն հետ հորիզոն մը կը ձեի
ւացնէր. ո՞ր կը վերջանար արդեօք միւս ծայրը. կարելի պիտ-
ըլլա՞ր արդեօք միւս եզերքը հասնիլ: Հօրեղբայրս բնաւ չէր կաս-
կածէր ատոր վրայ. իսկ ես՝ թէ՛ ատանկ ըլլալը կը բաղձայի և թէ
կը վախնայի:

Ժամ մը յոգնութիւն առնելէ վերջը քարայրը վերագարձանք՝
ուր խորունկ քունի մը մէջ ինկայ:

Ա.Ա.

Յաջորդ առտուն բոլորովին աղէկցած էի: Աղուոր նախաճաշ
մը ընելէ ետքը ծովեզերքը իջանք:

— Մականթացութեան ժամանակն է հիմա, ըսաւ հօրեղբայրս.
աղէկ դիտենք այդ երեւոյթը:

— Ի՞նչպէս, գոչեցի, լուսինին ու արեւին ազդեցութիւնը
մինչեւ հոս զգալի կ'ըլլա՞յ:

— Շատ պարզ է. ամէն մարմիններ տիեզերական ձգողութեան
ենթակայ չե՞ն միթէ. ինչո՞ւ համար ուրեմն այս ջուրի գանգուածը
չպիտի հնազանդի այդ օրէնքին: Հակառակ մակերեւոյթին վրայ
ճնշող մթնոլորտի ծանրութեան, պիտի տեսնես որ ամբողջ ջուրերը
պիտի բարձրանան Ադլանտեանին պէս:

Արդէն ջուրերը բարձրանալ սկսած էին, պզտիկ ալիքներ
կազմելով, սրոնք եզերքի աւազներուն վրայ կը փչրէին:

— Կը տեսնե՞ս. Աքսէլ. ըսաւ հօրեղբայրս, այս ալիքներէն
դատելով մակընթացութիւնը մինչեւ տասը ոտք պիտի ելլէ:

— Աքանչելի՞ է:

— Ո՛չ, բնական բան մըն է:

— Հօրեղբայր, որչափ որ ալ բնական է ըսէք, նորէն տար-



ընկալեալն է: Հաւատալը չի գար: Ո՞վ մտքէն կ'անցնէր թէ երկրիս կեղեւին սակը ճշմարիտ ովկէանոս մը կրնայ գոյութիւն ունենալ, մակընթացութիւններով, հովերով, փոթորիկներով:

— Ինչո՞ւ է. ասոր հակառակ բնական օրէնք մը կա՞յ:

— Ո՛չ. եթէ կեդրոնական ջերմութեան տեսութիւնը ի բաց թողունք:

— Ուրեմն, մինչեւ հոս Տավրի տեսութիւնը կ'արգարանայ:

— Այո՛, և այն տանն երկրագունտիս մէջը ովկէանոսներու և բնագաւառներու գոյութիւնը կրնանք մեկնել:

— Անշուշտ. եթէ ընդունինք թէ ատոնք ամայի են:

— Ինչո՞ւ համար. միթէ չկրնար ըլլալ որ այս ջուրերուն մէջ ապրին մեզի անծանօթ տեսակի մը պատկանող ձուկեր:

— Կրնայ ըլլալ. բայց մինչեւ հիմայ բան մը չտեսանք:

— Կարթեր շինենք, կարելի է բան մը սրտանք:

— Պիտի փորձեմ ասիկա, Ա.քսէլ, որովհետեւ քոյր այս բնագաւառներուն գաղտնիքները թափանցել կ'ուզեմ:

— Հիմա ո՞ւր տեղ կը գտնուինք, հօրեղբայր:

— Հօրիգոնական գիծով՝ Իսլանտայէն 500 մղոն հեռու:

— Ամէնը այդչա՞փ է:

— Չեմ կարծեր որ 100 ձողաչափ սխալած ըլլամ:

— Իսկ կողմնացոյցը միշտ հարաւ—արեւե՞րք կը ցուցնէ:

— Այո՛, դէպ ի արեւմուտք տանըլինը ապտիճանն և 42 փայրկեանի խոտորումով մը՝ ճիշդ երկրիս երեսը եղածին պէս: Գալով հակումին, զարմանալի երեւոյթ մը տեղի կ'ունենայ զօր ուշի ուշով քննեցի:

— Ո՞րն է այդ:

— Սա է թէ, մագնիսացած ասեղը փոխանակ դէպ ի քրեւեո՝ վար ծռելու, ինչպէս ըլլալու էր հիւսիսային կիսագունտին մէջ՝ ընդհակառակը կը կանգնի:

— Ատկէ կը հետեւի թէ մագնիսական ձգողութեան կեդրոնը երկրիս երեսին ու մեր գտնուած տեղին մէջտեղը կը գտնուի:

— Ճիշդ այդպէս. և եթէ դէպ ի հիւսիս երթայինք, եօթանասուներորդ աստիճանին մօտիկները՝ ուր ձէյոն Ռօսմագնիսական բեւեռի գոյութիւնը հաստատեց, պիտի տեսնէինք որ ասեղը

ուղղահայեաց դիրք մը կ'ունէ: Հետեւաբար այս թագուն ձգողութեան կեդրոնը՝ երկրագունտիս շատ խորերը չգտնուիր:

— Իրա՛ւ է. սակայն գիտութիւնը ատանկ բան մը չէր գուշակած:

— Գիտութիւնը, տղա՛ս, սխալներէ կազմուած է, և պէտք է որ այդ սխալները գործենք, որովհետեւ ատոնցմով միայն կարելի է հասնիլ ճշմարտութեան:

— Որչա՞փ խորը իջած ենք:

— Երեսունըհինգ մղոն վար:

— Այդ հաշուով, ըսի քարտէսը նայելով՝ հիմայ Սկովտիոյ լեռներուն տակը կը գտնուինք, և կրամբեան գօտիները իրենց ձիւնաբերձ գագաթները կը ցցեն մեր գլխուն վերեւ:

— Բայց, պատասխանեց հօրեղբայրս խնդալով, ատոնք վերցնող կամարը շատ ամուր է, վարպետ ճարտարագէտի գործ է:

— Ո՛հ, չեմ վախնար որ երկինքը վրաս փլչի: Բայց խնդրեմ, ըսէ՛ք, ի՞նչպէս ետ պիտի դառնանք:

— Ետ դառնա՞նք. ինչո՞ւ համար. ընդհակառակը ճամբանիս պիտի շարունակենք, քանի որ մինչեւ հոս եկանք ողջ առողջ:

— Բայց չեմ գիտեր ի՞նչպէս այս հեղուկ դաշտին տակը պիտի մտնենք:

— Բա՛հ, այս ծովին յատակը հասնելու համար ինքզինքս ջուրը նետել չէ միտքս: Բայց, ինչպէս որ ամէն ովկէանոս ցամաքով շիջապատուած է, անանկ ալ այս ծովը գոցուած է կրանիթէ ցամաքներով:

— Ատոր չտարակոյս չկայ:

— Ուրե՛մն վստահ եմ որ դիմացի եզերքին վրայ ո՛ր և է ճամբայ մը կայ:

— Որչա՞փ կը կարծէք որ ըլլայ այս ովկէանոսին մեծութիւնը:

— Երեսուն կամ քառասուն մղոն:

— Ա՛հ, ըրի՛ միտքէս անցնելով որ շատ շիտակ թիւ մը չէ ասիկա:

— Ուրեմն կորսնցնելիք ժամանակ չունինք: Վաղ առտու ճամբայ պիտի ելլենք:

Ակամայ՝ մեզի տանելիք նաւը կը փնտռէի:

- Նաւը ս՞րկէ պիտի գտնենք, ըսի :
- Նաւ մը չէ, տղաս, լաստով պիտի ճամբորդենք :
- Լա՛ստ մը, գոչեցի. նաւ մը շինելու չափ անկարելի է լաստ մը շինել, և նոյն իսկ չեմ տեսներ որ... :
- Չես տեսներ, Աքսէլ, բայց եթէ մտիկ ընես՝ պիտի լսես :
- Ի՞նչ պիտի լսեմ :
- Մուրճի հարուածներու ձայնը, հասկնալու համար թէ արդէն Հանս գործի ձեռնարկած է :
- Լա՛ստ մը կը շինէ :
- Այո՛ :
- Ի՞նչ, ծառե՞ր կը կտրէ կոր... :
- Ծառերը արդէն կտրուած էին : Եկուք որ տեսնաս : Քառորդ մը քայիլէ ետքը, հրուանդանին միւս եզերքը տեսայ Հանսը՝ որ աւազլին վրայ ձգուած կիտաւարտ լաստի մը վրայ կ'աշխատէր : Քոյիլ ալ շատ մը հաստ տախտակներ, գերաններ կային, որոնք ամբողջ նաւատորմ մը շինելու նիւթ կրնային հայթայթել :
- Հօրեղբայր, գոչեցի, ի՞նչ է այս փայտը :
- Հիւսիսի բուր կոնարեր ծառերը, շճիներ, եղելին, ցարասիներ են՝ որոնք ծովի ջուրերու ազդեցութեան տակ մետաղացած են : Բրածոյ ծառեր ըսածնին ասոնք են :
- Բայց այն ատեն քարի կարծրութիւն պիտի ունենան, եւ ջուրին երեսը չպիտի կրնան լողալ :
- Իրաւ է. այս քարերէն շատերը անխաբար դարձած են, բայց կան ալ որ դեռ նոր սկսած են ձեւափոխութեան : Տես : Եւ փայտի կտոր մը նետեց ծովուն մէջ, որ սկսաւ ծածանիլ ալիքներուն վրայ :
- Համոզուեցա՞ր հիմայ, ըսաւ հօրեղբայրս :
- Հաւատալս չի գար կոր :
- Յաջորդ օրը լաստը պատրաստ էր : 5 ոտք լայնք և 12 ոտք երկայնութիւն ունէր. հաստ չուաններով ամուր մը հիւսուած էր. երբ ծովը իջեցուցինք սկսաւ հանդարտօրէն տատանիլ ալիքներուն վրայ :

ԱՅ.

Օգոստոս 13ին առտուն, ամէնքս ալ կանուխ մը ելած էինք : Ճամբորդութիւնը նոր կերպարանք մը պիտի ստանար :

Երկու ձօղեր իրար կապելով կայմ մը շինեցինք՝ որու ձայրը հաստատեցինք առագաստակալ մը : Վրանի ծածկոյթով մըն ալ առագաստը կարեցինք : Չուան չէր պակսեր, ամէն բան ամբողջ էր : Ժամը տասներկուքին լաստին վրայ տեղաւորուեցանք : Ուտելիքները, կարասիները, զէնքերը և անուշ ջուրի բաւական պաշար մը իրենց յատուկ տեղը դետեղուեցան :

Հանս զէկ մըն ալ շինած էր լաստին ուղղութիւնը կտրելի եղածին չափ շտկելու համար : Ինք՝ զէկին գլուխը անցաւ. ևս ալ չուանը կարեցի, առագաստը բացի և ճամբայ ելանք :

Պզտիկ նաւահանգիստէն դուրս ելած ատեննիս հօրեղբայրս ուզեց անուշով մը մկրտել զայն և իմ անունն առաջարկեց :

- Ես ալ ուրիշ անուն մը ունիմ տալիք, ըսի :
- Ո՞րն է :
- Կրաիւպէնը : Քարտէսի մը վրայ շատ ազուր կը գրուի՝ Կրաիւպէնի նաւահանգիստ :
- Թող այդպէս ըլլայ, պատասխանեց հօրեղբայրս : Կ'ընդունիմ Կրաիւպէնի նաւահանգիստ անունը :
- Ահա թէ ի՞նչպէս սիրական Վիրլանտուհիիս անունը կապուեցաւ արկածալից արշաւանքներնու պատմութեան հետ :
- Հովը՝ հիւսիս-արեւելքէն կը փչէր շատ ոյժգին. մթնոլորտին թանձր խաւերը շատ ոյժգին մղիչ ոյժ մը ունէին : Հօրեղբայրս խիստ գոհ էր :
- Եթէ այդպէս շարունակէ, ըսաւ, 24 ժամն առ նուազն երեսուն մղոն ճամբայ կտրած պիտի ըլլանք, և այսքան ժամանակուան մէջ վստահ եմ որ զիմացի եզերքը կը հասնինք :
- Կէս օրին միջոցները անագին լօսեր (ծովու խոտ) սկսան տես-

նուիլ ծովին երեսին վրայ ծփծփուն: Արդէն գիտէի այս տունկերուն աճման սյժը. ասոնք ծովերուն մէջ 12 հազար ոտք խորութեան տակ կը զարգանան և երբեմն անանկ անազին խութեր կը կազմեն որ խոշոր նաւերու ճամբան կը կտրեն: Բայց կարծեմ լիտէնպորթի ծովուն լոսերուն չափ հսկայ ծովասէզեր գտնուած չեն երկրիս երեսը:

Արդեօք ի՞նչ անագին էր այն ուժը որ ասանկ հսկայ տունկեր կը բուսցնէր: Հապա ի՞նչ ըլլալու էր այս տեղերուն տեսքը երկրիս կազմութեան առաջին դարերուն մէջ. այն ատենները՝ ուր ջերմութեան ու խոնաւութեան ազդեցութեան տակ՝ մինակ բոյսերը կ'աճէին երկրագնաիս վրայ:

Իրիկուն եղաւ, և մթնոլորտին լուսեղէն վիճակը բնաւ փոփոխութիւն չկրեց: Ընթրիքէն ետքը՝ կայմին տակը երկնցայ պառկեցայ՝ ծածկոյթի մը մէջ պլուեելով: Հանս՝ ղեկին գլուխը կեցած անշարժ, լաստին ուղղութեանը կը հսկէր: Կրաիւպէնի նաւահանգիստէն մեկնելուս ի վեր հօրեղբայրս պաշտօն տուած էր օրագիր մը բռնել, բոլոր գիտողութիւնները նշանակել, շահագրգիռ երեւոյթները գրի առնել:

Հոս ալ նայն օրագիրս պիտի ընդօրինակեմ, սոյն տարօրինակ ծովագնացութեան բոլոր պատահարները կէտ առ կէտ ընթերցողներուս ծանօթացնելու համար:

Ուրբաթ, 14 Օգոստոս

Հովը՝ հիւսիս—արեւմուտք. լաստը ուղիղ գծի ճամբով կը յառաջանայ: Ծովեզերքը՝ հովին հակառակ ուղղութեամբ 30 մղոն հեռու է: Հորիզոնին վրայ բան մը չտեսնուիր. լոյսին սաստկութիւնը չփոխուիր: Օդը գեղեցիկ է, այսինքն ամպերը շատ բարձր են, քիչ խիտ են ու կը ծածանին սպիտակ մթնոլորտի մը մէջ:

Ձերմաչափը +32 հարիւրամասնեայ:

Կէս օրին՝ Հանս կարթ մը պատրաստելով ծովը ձգեց: Երկու ժամ՝ բնաւ ձուկ մը չբռնուեցաւ. արդեօք այս ջուրերը անբնակ են: Ո՛չ: Յանկարծ կարծես ցնցուեցաւ. Հանս վեր քաշեց և ձուկ մը բռնեց որ կը փալփալէր:

— Ձուկ մը, գոչեց հօրեղբայրս:

— Թառափ (Մէրսին պալըղը) մըն է, ըսի, պզտիկ թառափ մը:

Հօրեղբայրս ուշի ուշով քննելով կարծիքս մերժեց: Տափակ գլուխով ձուկ մըն էր. կլոր, առաջքի մասը սակրուտ թեփերով ծածկուած, բերանը սկուայ չկար, առանց պոչի էր և կուրծքին փակած լուղակներ ունէր. կենդանին թառափին պատկանած ընտանիքէն էր, բայց անկէ շատ տարբերութիւններ ունէր:

Հօրեղբայրս քննութիւնը կատարելէ վերջ ըսաւ:

— Այս կենդանին կը պատկանի ընտանիքի մը որ դարերէ ի վեր անհետացած է և որուն բրածոյ հետքերը կը տեսնուին Տեվոնեան հողերու մէջ:

— Ի՞նչպէս, ըսի զարմացած. նախնական ձուկերու բնակիչներէն մին է ուրիմն ողջ բռնածնիս:

— Այո՛, պատասխանեց հօրեղբայրս քննութիւնը շարունակելով. կը տեսնես որ այս բրածոյ կենդանիները հիմակ ապրող տեսակներուն հետ բնաւ ո՛րեէ նմանութիւն մը չունին: Եւ ասանկ որս մը ընելը մեծ երջանկութիւն մըն է բնագէտի մը համար:

— Այո՛, բայց ո՞ր ընտանիքին կը պատկանի:

— Կանօիաներու կարգէն, Սեֆալոսբիտներու ընտանիքին, Բթէրիքթիսի տեսակին: Բայց ասիկա մասնաւոր յատկութիւն մը ունի որ ստորերկրեայ ծովերու ձուկերուն վրայ մինակ կը տեսնուի:

— Ո՞րն է այդ:

— Կոյր է:

— Կո՞յր է մի:

— Չէ թէ մինակ կոյր է, հապա աչք բնաւ չունի:

Աղէկ մը նայեցայ, իրաւ էր:

Գուցէ մասնաւոր պարագայ մը ըլլար: Կարթը նորէն նետեցինք և երկու ժամուան մէջ շատ մը նոյն տեսակին և ուրիշ տեսակի մը պատկանող ձուկեր բռնեցինք, որոնց ամէնքն ալ աչք չունէին: Այս անակնկալ որսը պաշարնիս աւելցուց:

Դիտակս առի և սկսայ ծովին երեսը լուս մը դիտել. գուցէ, կը մտածէի, ջրային զեռուններէ հատի մը կը հանդիպիմ. բայց բան մը չտեսայ: Օդն ալ ամպի էր. ինչ՞ու համար արդեօք Բի-

վիէի վերակազմած թռչուններէն քանի մը տեսակները չէին ապրեր. ծովուն ձուկերը պիտի բաւէին անոնց իբր անունդ :

Երեւակայութիւնս վառուած էր հնարանական ենթադրութիւններով. արթուն կ'երագէի : Զուրիւրուն վրայ կը կարծէի տեսնել chersseiteները, նախաշրջեղեղեան կրիաներ՝ որոնք շարժուն կղզիներու կը նմանին : Մթնած ծովեղբերուն մէջէն կ'անցնին՝ առաջին օրերու ահագին ստնաւորները . Léptotheriumը՝ որու սկորները առաջին անգամ Պրայիլիոյ մէջ գտնուեցաւ . Méricotheriumը՝ զոր Սիպերիոյ սառույցներուն մէջէն բերին, հսկայ թափիր մը կը պահուըտի ժայռերուն ետին՝ Anoptotherium մը որը խելու ձեռքէն . այս վերջինը զարմանալի կենդանի մըն է որ ոնգեղջիւրի, ձիու, գետածիւի և ուղտի կը նմանի . կարծես՝ Արարիչը՝ ստեղծագործութեան առաջին օրերուն աճապարելով քանի մը տեսակ կենդանիներ ի մի բերելով, հատ մը միայն շինած է : Հսկայ պտկաժանին՝ պատիճը կը տարածէ և ահագին ժայռեր կը խորտակէ, մինչդեռ մեծագազանը՝ խոշոր թաթերուն վրայ կ'ծկտած՝ գետինը կը փորփրէ և սոսկալի մանչիւններովը արծագանքը կը գորգեցնէ : Քիչ մը անդին առաջին կապիկը ցից ժայռերու գագաթները կը մագլցի : Աւելի անդին . մաշկամատնը՝ հսկայ ջղջիկի մը պէս օգին մէջ կը սահի : Վերջապէս ամէնէն հեռուն ահագին թռչուններ, գազուարէն աւելի զօրաւոր, ջայլամէն շատ աւելի մեծ, խոշոր թեւերնին կը բանան և կրանիթէ կամարներուն զարնուելով կը թռչտին :

Ամբողջ այս բրածոյ աշխարհը կը վերածնէր երեւակայութեանս մէջ : Աստուածաշունչի ստեղծագործութեան դարերուն մէջ կ'զգամ ինքզինքս՝ երբ երկրին երեսը պէտք եղածին չափ կազմուած չըլլալով՝ մարգս չէր կրնար տակաւին գոյութիւն ունենալ :

Երազս՝ կենդանի էակներուն երեւման տարիէն ալ աւելի առաջները կ'երթար . ստնաւորները կ'աներեւութանային, յետոյ թռչունները, յետոյ երկրորդական դարու սողունները, և վերջապէս ձուկերը, խեցեպատեանները, թուլամորթները : Ամբողջ կեանքը իմ մէջս կ'ամփոփուէր, և իմ սիրտս բոլոր այս ամայի աշխարհին վրայ մինակն էր բարախողը : Ո՛չ տարիի եղանակ կար, ո՛չ կլիմայ, երկրիս յատուկ ջերմութիւնը երթալով կ'աւելնար և

արեւուն տաքութիւնը կը չեղսքացնէր : Բուսարեւութիւնը հսկայ երեւոյթ մը կ'առնէր, ծառաբերձ պտերներուն մէջտեղէն շուքի մը պէս կը սահէի . խայտապտուն խճաքարերու վրայ կը քալէի, ահագին կոնարերերու կոճղին կը կոթնէի . հարիւր ոտք բարձր ոտտիսաներու շուքին տակ կը քնանայի :

Դարերը՝ օրերու պէս կ'անցնին . երկրիս ձեւափոխութիւններու շրջաններէն կ'անցնիմ . բոյսերը կ'անհետանան . կրանիթէ ժայռերը կը կարսնցնեն իրենց կարծրութիւնը . աւելի սաստիկ ջերմութեան մը ազդեցութեան տակ հաստատուն վիճակը տեղի կուտայ հեղուկ վիճակին առջեւ, ջուրերը կը ծածկեն ամբողջ երկիրս, կ'եռան, կը շագիւտան, շոգիները կը ծածկեն երկիրս՝ որ կամաց կամաց կազային գունտի մը կը փոխուի, մինչեւ ձերմակ բարեխառնութիւն տաքցած, արեւու պէս խոշոր ու փայլուն :

Այս միգամածին մէջտեղը՝ որ ետքէն կազմելիք գունտէն մէկուկէս միլիոն անգամ աւելի մեծ է՝ կը քըքըւիմ մոլորակային միջոցին մէջ :

Մարմինս կ'անէանայ և անհուսութեան մէջ լուսաշող ճամբայ մը գծող այս անհուն շոգիներուն կը խառնուի՝ իբր անկշռելի հիւլէ մը :

Ի՞նչ երագ . ո՞ւրտեղները կը տանի ինծի . ա՛լ ամէն բան մոռցեր էի, դասախօսը, առաջնորդը, լաստը : Զգայախարութիւն մը գրաւեց միտքս . . . :

— Ի՞նչ կ'ըլլաս կոր, ըսաւ հօրեղբայրս :

Աչքերս բացած իրեն նայեցայ, առանց տեսնելու :

— Ուշադրութիւն ըրէ՛, Աքսէ՛լ, ծովը պիտի իյնաս :

Մի եւ նոյն պահուն, Հանսի հուժկու ձեռքը բռնեց ինծի . ապա թէ ոչ երագիս ազդեցութեան տակ՝ ծովը պիտի գլորէի :

— Խինդեցա՞ս, ի՞նչ եղաւ, գոչեց հօրեղբայրս :

— Ի՞նչ կայ, ըսի վերջապէս, ինքզինքիս գալով :

— Հիւսմո՞նք ես :

— Ո՛չ, վայրկեան մը զգայախարութիւն ունեցայ . բայց անցաւ : Ամէն բան յաջող կ'երթա՞յ կոր :

— Այո՛, աղուսը հով կայ . ծովը հանդարտ է . արագ արագ

կը յառաջանանք: Եթէ այսպէս շարունակէ, շուտով ցամաք պիտի հասնինք:

Ելայ հորիզոնը դիտելու, բայց միշտ ջուրը երկինքին միացած գիծը կը տեսնուէր միայն:

ԼՊ.

Շաբաթ, 15 Օգոստոս

Ծովը իր միօրինակութիւնը կը պահէ միշտ. բնաւ ցամաք մը չտեսնուիր: Հօրեղբօրս բարկութիւնը նորէն բռնել սկսաւ. բոլոր գլխուս եկած վտանգները՝ հազիւ մարդասիրութեան կայծ մը եղած էին իրեն. հիմա որ ամէն բան հանգիստ էր, նորէն իր բնութիւնը վերստացաւ:

— Մտատանջ կ'երեւիք, հարցուցի:

— Ո՛չ, համբերութիւնս հատաւ:

— Սակայն շատ արագ կ'երթանք...

— Ի՞նչ հոգս. արագութիւնը չէ որ քիչ է, հապա ծովն է որ շատ ընդարձակ է:

Միտքս եկաւ որ մեկնած օրերնիս՝ հօրեղբայրս կ'ըսէր թէ մէկ օրէն կարելի էր անցնիլ այս ծովէն:

— Չենք վար իջներ կոր, յարեց դասախօսը, և ասի ժամանակի կորուստ է:

— Բայց, ըսի, Սաքնիւսէմի ցուցուցած ճամբուն հետեւեցանք մենք:

— Խնդիրը հոտ է. իր հետեւած ճամբէն եկանք, Սաքնիւսէմ այս ծովուն հանդիպեցա՞ւ, անոր վրայէն անցա՞ւ, առաջնորդ բռնած գետերնիս մեզ չխաբե՞ց:

— Ինչ ալ ըլլայ, հոս գալերնուս զղջալու չենք: Տեսէ՛ք, Ինչ սքանչելի տեսարան եւ...

— Խնդիրը տեսնելուն վրայ չէ. ես ինձ նպատակ մը որոշեցի, պէտք է որ հոն հասնիմ. ա՛լ մի խօսիր սքանչանալու վրայ:

Չպատասխանեցի. իրիկունս դէմ, Հանս իր շաբաթականը գրպանեց և ճաշեցինք:

Կիրակի, 16 Օգոստոս

Նոր բան մը չկայ. օդը փոխուած չէ: Ամէնէն մեծ վախ՝ ելեքարական լոյսին դադրելովը նորէն խոր մութի մէջ թաղուելնիս է. բայց հիմակուհիմայ ատանկ բան մը չտեսայ: Ծովը շատ ընդարձակ կ'երեւի, դեռ ցամաք մը չկրցանք նշմարել: Անգամ մը հօրեղբայրս ծովին խորութիւնը չափել ուզեց. ծանր երկաթէ բիր մը երկար չուանի մը ծայր կապելով ջուրին մէջ ձգեց, և որչափ այս նորօրինակ խորաչափին չուանը կը թողուր, ասնքան վար կ'երթար. առանց գետնի մը հանդիպելու: Երբ խոշոր բիրը վեր քաշեցինք, վրան ճզմուածներ երեւան ելան. կարծես թէ երկու կարծր մարմիններու մէջ սեղմուած էր: Հանս մատով ցուցնելով այս նշանները «Թէնաէր» ըսաւ, կզակը ոյժով մը բանալ գոցելով:

— Ակուանե՛ր, գոշեցի զարմացած, ու սկսայ աւելի ուշադրութեամբ դիտել:

Իրա՛ւ, ակուաներու հետքեր էին որոնք մետաղին մէջ դրօշմուած էին: Որչափ ուժով ըլլալու էին արդեօք այդ ակուաները կրող կզակները:

Երկուշաբթի, 17 Օգոստոս

Կը ջանամ միտքս բերել յատուկ բնազդները երկրորդական դարու այս անգործհեղեղեան կենդանիներուն, որոնք կակղամորթներէն, խեցեպատեաններէն, ձուկերէն հտքը եկան, և որոնց յաջորդեցին ցամաքի ստնաւորները: Այն ատենները երկրիս ամբողջ սողուններուն կը պատկանէր. բնութիւնը ինչ հսկայ կազմուածք, ինչ սոսկալի ոյժ մը պարգեւած էր ժիւրբանան ծովերու այս բնակիչներուն: Ո՛չ մէկ մարդկային աչք ողջ տեսած է այս կենդանիները. ասոնք՝ մարդուս երկրի վրայ երեւնալէն հաշայ կենդանիները. ասոնք՝ մարդուս երկրի վրայ երեւնալէն հաշայ զար դար առաջ կ'ապրէին. բայց իրենց բրածոյ ոսկերտութիւնները

զանուելով լիա կոչուած կաւային կրօքորերու մէջն՝ կարելի ե-
զած է անոնց մարմինը վերակազմել եւ հսկայ ձեւերնին ճանչնալ :
Համպուրկի միւզէտնին մէջ հաս մը կար ասոնցմէ որ երեսուն
ոտք երկայն էր :

Կարծեմ հօրեղբայրս ալ ակօայի հետքերը քննելէ հտքը, ին-
ծի պէս՝ վախցաւ որ այդ հրէջներէն մին դէմերնիս չելլէ, որով-
հետեւ խածատուած երկաթը տեսնելէն հտքը սկսաւ ուշադրու-
թեամբ ծովին երեսը դիտել :

Արդէն սկսաւ լայն ալիքներ կազմուիլ ծովուն երեսը, որոնք
ջուրին յատակը եղած շարժում մը կը ցուցնէին :

Երեւոյթի 18 Օգոստոս

Իրիկուան հազիւ երկու ժամ քնացեր էինք, երբ սոսկալի
ցնցումէ մը արթնցայ. լստը շուրջն վեր վերցուելով, մինչեւ 20
ձողաչափ անդին նետուեցաւ :

— Ի՞նչ կայ, պօռաց հօրեղբայրս, ցամաք հասանք :
Հանս՝ 200 ձողաչափ հեռուն սեւ բան մը ցցուց՝ որ շուրջ կը
մտնէր ու դուրս կ'ելլէր շարունակաբար, աղէկ մը գիտելէ հտքը
ըսի :

— Ծովախոզ մըն է :


— Այո՛, պատասխանեց հօրեղբայրս, հիմա ալ խոշոր մողէս
մը ելաւ :

— Անդին ալ հսկայ կոկորդիլոս մը, կը տեսնէ՞ք անագին
կզակն ու ակօաները : Ա՛հ, անհետացաւ :

— Պալենա՛ մը, գոչեց հօրեղբայրս լուղակները կը տեսնեմ
կոր. նայէ՛, քթաբողքէն որչափ օդ ու շուր գուրս կուտայ :

Այս վտանգաւոր կենդանիներէն փախչելու համար Հանս դէկը
դարձնելու վրայ էր երբ լստին սիւս կողմը նշմարեցինք ուրիշ
կենդանիներ՝ որոնք միւսներուն չափ սոսկալի էին. քառասուն
ոտք խոշոր կրիայ մը և երեսուն ոտք երկայն օձ մը՝ որու գլուխը
շուրջն վեր կը ցցուէր :

Փախչիլ անկարելի էր. մէկ կողմէ կոկորդիլոսը, իսկ միւսէն
օձը կը յառաջանան. մնացեալ կենդանիները անհետացած են, եր-



Երկու գազան իրարու փափքուած կը քայտկիտին

կուքն ալ քանի մը անգամ կը դառնան լաստին շուրջը և յանկարծ վայրաշարժի մը արագութեամբ սուբալով իրարու վրայ կը յարձակին: Հիմա կարծես թէ միւս բոլոր կենդանիները եկեր կըռիւին կը մասնակցին. ծովախոզը, պալենան, մողեսը, գորտը: Մատովս Հանսի ցցուցի:

— ԹՎԱ՛, ըսաւ:

— Ի՞նչ, երկու կենդանի՞ են միայն կուռողները:

— Այո՛, պատասխանեց հօրեղբայս, որ դիտակով հետեւած էր այս մարտին. այս գազաններէն մին՝ ծովախոզի դունջ, մողեսի գլուխ, կոկորդիլոսի ախոյ ունի. ասիկա ձկնամողէսն է:

— Հապա մի՛ւսը:

— Միւսը՝ կրիայի պատեանի տակ ծածկուած օձն է. առաջինին սոսկալի թշնամին՝ մերձամողէսն է:

Իրաւ էր, երկու կենդանիներ միայն կը կուռէին ալիքներուն վրայ: Զուրի ահագին սիւնակներ վեր կը ցտաքեցնէին և քսան անգամէն աւելի մազ մնաց լաստը ընկողէր: Ամենասատիկ սուլումներ կը լուռէին, և երկու գազան իրար փաթթուած կը տապլտկէին: Մէկ ժամ, երկու ժամ անցան սուսնց կռիւը քիչ մը ձեղմանալու. քանի մը անգամներ երկու մարտիկներ լաստին մօտեցան ու հեռացան. պատրաստ կեցեր էինք կրակ ընելու վրանին, բայց ի՞նչ ազդեցութիւն կրնար ունենալ հրացանի գնտակ մը անոնց պողպատի չափ տմուր պատեանին վրայ:

Յանկարծ ձկնամողէսն ու մերձամողէսը շուրերուն յատակը սուզուեցան, ալիքներուն մէջ ահագին յորձանք մը յառաջ բերելով. կռիւը կը շարունակուէր ծովին տակ:

Քիչ վերջը մերձամողէսը երեւցաւ շուրին երեսը. մահացու կերպով վերաւորուած էր. ա՛լ կրիայի մարմինը չէր երեւէր, մինակ ահագին վիզը կէս մը վեր բարձրացած էր ու կտրած որդի մը պէս կ'սլորտկէր: Հոգեվարքի տագնապը քիչ տեւեց, և ահագին կենդանին շուրին մէջ սուզեցաւ անշարժ իրի մը պէս:

Ի՞նչ եղած էր ձկնամողէսը, արդեօք նորէն պիտի երեւէր:



Լ Ն .

Ուրբաթ, 21 Օգոստոս

Առջի իրիկուն հաշիւներս կարգի դնելով տեսայ որ կրաիւ-
պէնի նաւահանգիտէն մեկնելնէս ի վեր երկու հարիւր հոթանա-
տուն մղոն ճամբայ առած ենք, որով իսլանտայէն գրեթէ վեց
հարիւր քսան մղոն հեռացած ենք. Անգլիոյ տակը կը գտնուինք:
կարծեմ օգը պիտի փոխուի. հեռուն սեւ սեւ ամպեր կազ-
մուելով իրար կը ձուլուին և անազին վարագոյրի մը պէս եր-
կինքը կը ծածկեն. մթնոլորտը ելեքտրականութեամբ լեցուած է.
փոթորիկ մը մօտալուտ է:

— Գէշ օդ մը պիտի սկսի, ըսի:

Հօրեղբայրս բնաւ չպատասխանեց: Հովը բոլորովին դադրած
էր այդ պահուն:

— Առագաստը վար առնենք, յարեցի, խոհեմութիւն է:

— Ձգէ՛, գոչեց հօրեղբայրս, սատանին սիրոյն համար առա-
գաստին մի՛ դպչիր, թո՛ղ հովը տանի մեզի, փոթորիկը քչէ մեզ,
կը բաւէ որ ցամաքի մը ժայռերը տեսնեմ:

Յանկարծ հով մը, հարաւէն փչող քամի մը յափշտակեց դիւ-
րարեկ նաւակնիս և յիմարացուցիչ արագութեամբ մը զայն յա-
ռաջ նետեց փրփրոտ ջուրերուն վրայ: Հօրեղբայրս ու ես մէյմէկ
չուանի ծայր սեղմելով կառչեցանք: Հանա՛ միշտ դեկլին գլուխը
կը կենար, երկար մագերը հովին ցիրուցան հղեր էին և ամէն
մէկին ծայրերէն լուսեղէն փունջ մը կը ցցուէր: Անձրեւը տեղա-
տարափ սկսաւ հոսիլ, ամպերը պատուեցան և կոհակները իրարու
կը յաջորդէին անհամար խաղեր ընելով: Ելեքտրական հոսանուտը
չարժման մէջ դրուած էր, մետաղեայ գործիքներնիս սկսան լու-
սաւորուիլ, ծովուն ալիքները կը փոսփորափայլէին: Աչքերս
չմտրեցան, ականջներս իուլցած էին կայծակին ազմուկէն:

(Հոս ծանօթագրութիւններս անկանոն են, հազիւ հազ քանի
մը գիտողութիւններ կըցայ արձանագրել:)



Յանկարծ փառաւոր լոյս մը ողողեց մեզի

Կիրակի 23 Օգոստոս

Ո՞ւր ենք, անհաշուելի արագութեամբ հովը մեզ կը քշէ: Քիչերը սոսկալի անցաւ. փոթորիկը չհանդարտիր. կայծակ ու որոտում անդադար իրար կը յաջորդեն:

Երկուշաբթի 24 Օգոստոս

Ա՛լ վերջը չի՞ պիտի գայ: Յոգնութենէ պարտասած ենք: Փոթորիկը կը կրկնապատկէ իր սաստիկութիւնը: Երեք օրէ ի վեր խօսք մը չենք կրնար փոխանակել իրարու հետ. բերաննիս կը շարժենք առանց իմանալի ձայն մը կարենալ հանելու: Զօրեղբայրս բերանը ականջլիս կը մօտեցնէ և բան մը կը մրմնջէ. կարծեմ «կօրսուած ենք» կ'ըսէ: Ես տակաւին յոյսս չեմ կտրած: Նշան ըրի որ առագաստը վար սռնենք. հաւանեցաւ: Գլուխս դարձնելու ժամանակ չունեցած, լաստին եզերքը հրեղէն գունատ մը երեւցաւ. կայմն ու առագաստը թռան՝ անհետացան ակնթարթի մէջ: Վախերնուս քարացեր մնացեր էինք. գունտը՝ կէս ճերմակ, կէս երփներանգ, տասը մատնաչափ մեծութիւն ունէր, սկսաւ կամաց կամաց պտըտիլ լաստին բոլորտիքը, ներս եկաւ, անտուկներուն վրայէն սահեցաւ ու Հանսի ու հօրեղբօրս քովէն անցաւ. շիտակ իմ վրաս կուգար կոր, ուզեցի ոտքս քաշել՝ որ անցնելու տեղ ձգեմ. բայց անկարելի եղաւ: Բորակածային հոտ մը ծաւալեցաւ օդին մէջ, կը խեղդուէինք կոր: Ինչո՞ւ ոտքս չէի կրնար երերցնել. կարծեմ այս հրեղէն գունտէն մագնիսացած էր բոլոր մետաղէ առարկաները և կօշիկիս գամերը ոտքս ամուր կը թռնէին լաստին վրայ: Յանկարծ փառաւոր լոյս մը ողողեց մեզի. գունտը պայթած էր. հօրեղբայրս լաստին վրայ գլորեցաւ. Հանս միշտ իր տեղն էր՝ «կրակներու մէջ»:

Երեքշաբթի 25 Օգոստոս

Երկար անզգայութենէ մը յետոյ կ'արթննամ: Փոթորիկը կը շարունակէ: Աներեւակայելի արագութեան մը մէջ բռնուած չեմ



կրնար միտք ընել թէ ո՞ր տեղերը հասանք: Անգլիոյ, Մանչի, Յրամնայի՝ ամբողջ Եւրոպայի տակէն անցած ըլլալու էինք. ո՞վ գիտէ . . . :

Նոր աղմուկ մը կը լսեմ. ծոփն է որ ցամաքի վրայ կը խոր-տակուելի . . . :

Ա. Ա.

Հոս կը վերջանայ «Ճամբորդութեան Օրագիրը»: Լստառ ժայռերուն զարնուելով ամէնքս ալ ծովը ինկանք: Անշուշտ ալիքները ինծի հեռուները տարած էին եթէ Հանսի հուժկու բազուկը զիս չբռնէր ու վեր չհանէր: Քաջասիրտ իսլանտացին զիս ազատելէն ետքը վազեց գնաց լաստին վրայի կարասիները ցամաք հանելու և կրցածին չափ լաստը ազատելու . . . :

Յաջորդ օրը օդը սքանչելի էր, փոթորիկը բոլորովին կտրեր էր: Հօրեղբօրս ուրախութիւնը աննկարագրելի էր. արթննալուս պէս քովս եկաւ:

- Ի՞նչպէս ես, Աքսէլ, աղէկ քնացա՞ր:
- Սքանչելի կերպով. մինակ ինքզինքս տակաւին յոգնած կ'զգամ: Բայց դուք, հօրեղբայր, շատ ուրախ կ'երեւիք:
- Շատ ուրախ, տղաս, շատ: Վերջապէս հասանք:
- Ո՞ւր, ճամբորդութեան վախճա՞նը:
- Ո՛չ, հապա անվերջանալի ծովուն եզերքը: Ա՛լ կրնանք նորէն ցամաքի ճամբան ձեռք առնել և երկրիս խորերը թափանցել:

- Հօրեղբայր, ներեցէք որ հարցում մը ընեմ:
- Խօսէ՛, տղաս:
- Ի՞նչպէս ետ պիտի դառնանք:
- Ե՛տ դառնանք, հա՛, երթալիք տեղերնիս դեռ չենք հասներ, ետ դառնա՞լը կը մտածես:
- Այդպէս չէ՛, միայն կ'ուզէի հարցնել թէ ո՞ր ճամբով ետ պիտի դառնանք:

— Ատկէ պարզ բան չկայ: Երկրիս կեդրոնը հասնելուս, կամ նոր ճամբայ մը պիտի գտնենք դուրս ելլելու և կամ եկած ճամբանուս ետ պիտի դառնանք:

— Ուտելիքնիս չպիտի բաւէ:

— Ո՞վ ըսաւ, Հանս ճարպիկ տղայ մըն է, պաշարներու գըրեթէ մեծ մասը ազատեր է: Չորս ամիս բաւելու չափ ուտելիք ունինք, թէ երթալու և թէ դարձին համար կը բաւէ, աւելցածո՞վն ալ եօհաննէօմի պաշտօնակիցներուս հացկերոյթ մը պիտի տամ:

Գործիքներուն մեծ մասը, ամէնէն պէտքիները ազատուած էին. զէնքերը մինակ կորսուած էին: Ճաշի ժամանակ դտնուած տեղերնուս դիրքը ճշդելու խօսք եղաւ:

— Քիչ մը դժուար է այդ, ըսաւ հօրեղբայրս:

— Բայց կրնանք մօտ ի մօտոյ հաշուել:

— Փոթորիկին նախընթաց օրը իսլանտայէ գրեթէ 600 մղոն հեռացած էինք:

— Լա՛ւ, այդ կէտէն մեկնինք. փոթորիկը չորս օր տեւեց եւ 24 ժամուան մէջ մեր ունեցած արագութիւնը 80 մղոնէ պակաս չէր:

— Ըսել է հիմա Միջերկրականի տակը կը գտնուինք:

— Բայց կրնայ ըլլալ որ իսլանտայէ միւսնոյն հեռաւորութիւնը պահելով հանդերձ անանկ ուղղութիւն բռնած ըլլանք որ Ատլանտեանի կամ Պալքաններու տակը հասած ըլլանք:

— Չեմ կարծեր, պատասխանեց հօրեղբայրս, բայց ինչ եւ է անգամ մը կողմնացոյցը նայինք:

Շուտով երկուքս ալ գործիքներուն քովը գացինք, ու հօրեղբայրս սկսաւ կողմնացոյցը դիտել: Մէկէն դէմքը փոխուեցաւ:

— Ի՞նչ կայ՝ հարցուցի:

Նշան ըրաւ որ գործիքը դիտեմ, կողմնացոյցին ասեղը մերին իւսիս կարծած կողմը հարաւ կը ցուցնէր. քննեցի տեսայ որ տրծիքը բնաւ աւրուած չէր: Ըսել է փոթորիկին ժամանակ ուղղութիւննիս փոխելով մեկնած կողմերնիս եկեր ինկեր էինք:

ԱԹ.

Հօրեղբօրս զգացածը նկարագրել անկարելի է. բոլոր քաջած նեղութիւննիս, անցուցած վտանգնիս պարապը գացեր էին:

— Ա.խ, գոչեց հօրեղբայրս, ճակատագիրը ասանկ խաղեր կը խանայ ինձի, ջուրը, կրակը, օդը կը միարանին իմ յաջողելուս արգելք ըլլալու համար. աղէ՛կ. թող ամէն մարդ սորուի իմ կամքիս զօրութիւնը, տեղի չպիտի տամ, չպիտի ընկրկիմ, և տեսնենք թէ ո՞վ կը յաղթանակէ. մա՞րդը թէ բնութիւնը:

— Ինձի մտիկ ըրէք, ըսի ամուր ձայնով մը, այս աշխարհիս վրայ ամէն մարդկային փառասիրութեան համար սահման մը կայ, անկարելիին դէմ մարտնջիլ օգուտ չըներ. ծովու վրայ 500 մշտն տեղ անցնելու համար ասանկ խեղճ փայտի կտոր մը չբաւեր: Այս անանցանելի ճամբան երկրորդ անգամ փորձելը խելքի դէմ է:

— Լա՛ստ նստինք, գոչեց հօրեղբայրս՝ առանց ըսածներս մտիկ ընելու:

Ի՞նչ կրնայի ընել, կամայ ակամայ հնազանդեցայ և քիչ վերջը ամէն բան պատրաստ էր յճամբայ ելլելու համար:

— Վա՛ղը պիտի մեկնինք, ըսաւ հօրեղբայրս, կ'ուզեմ վերջին անգամ մը աչքէ անցնել այս ծովեզերը ուր բազմը նետեց մեզի. սիրտս հանդարտ պիտի հեռանամ այս ցամաքէն:

Լատտը պահպանելու հոգը Հոնսի յանձնեցինք և հօրեղբայրս ու ես սկսանք ծովեզերքն ի վեր խուզարկել նոր բան մը գտնելու յոյսով: Մէկ երկու մղոն վեր բաժնուեցանք եզերքէն ու դէպ ի կրանիթէ դաշտերը ուղղուեցանք. ոտքերնուս տակ ոսկորներու ահագին կոյտեր կը զիզուէին. նախաջրհեղեղեան հազարաւոր տեսակ կենդանիներու մնացորդներն էին ատոնք: Հօրեղբայրս մէկ ոսկորէն միւսը կը վազէր, կը նայէր, կը քննէր: Յանկարծ կանգ առաւ և սարսուռն ձայնով մը գոչեց.

— Ա.քսէ՛լ, Ա.քսէ՛լ, մարդու գլուխ մը:

— Մարդու գլուխ մը, հարցուցի զարմացմամբ:

— Այո՛, եկուր: Ա՛խ, Պարոն Միլն էտուարտս, ա՛խ, Պարոն Գաթրըֆաթ, ինչո՞ւ հոս չէք, ինչո՞ւ չէք կրնար տեսնել իմին տեսածս, իմին, Օթթօ Լիտէնպրօքի տեսածը:

ԱԹ.

Անկարելի է նկարագրել հօրեղբօրս ուրախութիւնը, երբ քանի մը քայլ անդին դէմ առ դէմ եկաւ մարդկային մարմինի մը հետ. ատիկա մինակ կմախք մը չէր. ամբողջ մարմին մը՝ ակոսներովը, մազերովը, երկար եղունգներովը հոն առջեւնիս կը կենար, առանց ամենափոքր աւրուածք մը կրելու, դիմացնիս կը ցցուէր ան՝ այն վիճակին մէջ զոր ունէր ապրած ժամանակը:

Ուրիշ դարու մը այս մնացորդին առջեւ լեզուս կապուեցաւ. հօրեղբայրս, այնքան ճարտարախօս, այնքան ճոռոմաբան, համր կը մնար ինձի պէս: Վերցուցինք այս մարմինը և քարի մը կըտթընցուցինք փոսացած աչքերով մեզի կը նայէր, պաղած կուրծքը ձեռքերնուս տակ կը շօշափէինք:

Հօրեղբայրս ինքզինքը մոռցաւ կարծես: Գտնուած տեղը, պարագաները, ամէն բան կորսնցուց յիշողութենէ և ինքզինքը Եօհաննէօսի դասարանին մէջ, աշակերտներուն առջեւ կարծելով սկսաւ դասախօսութիւն մը ընել երեւակայական ունկնդիրներուն ուղղուած:

«Պարո՛ններ, գոչեց, պատիւ ունիմ ներկայացնել ձեզ չորրորդական դարու վերաբերեալ մարդկային կմախք մը: Շատ մեծ գիտուններ ուրացան անոր գոյութիւնը, ուրիշներ՝ պնդեցին անոր վրայ: Եթէ հնարանութեան այդ թովմաս առաքեալները հոս ըլլային, ձեռքովն պիտի շօշափէին զայն և հաւատային անոր գոյութեանը: Գիտեմ թէ գիտութիւնը շատ զգուշութեամբ վարուելու է ասանկ գիւտերու մասին, նոյնպէս չիմ անդիտանար Պարնըմ և ուրիշ խաբեբաներու մարդկային բրածոյներու վրայ ըրած շահատակութիւնները: Աչքէ անցուցի բոլոր պատմութիւնները, ճառերը, հակաճառերը, որոնք նախնական մարդու ոսկերտիներուն վրայ կը խօսին, այո՛, պարոններ, գիտեմ նաեւ թէ Իլիվիէ և Պիլեմէնպախ այդ ոսկորներն Մամութի և կամ ուրիշ

չորրորդական դարու մէջ տարող կենդանիներու վերագրեցին: Բայց հիմա, ալ կասկածի տեղի չկայ. դիակը հոս է, ամէնքնիդ ալ կրնաք զայն տեսնել, ամէնքդ ալ կարող էք շօշափել զանիկա: Մինակ կմախք մը չէ ներկայացուցածս, ամբողջ մարմին մըն է, բոլորովին անքանդ վիճակի մէջ պահուած, հնարանական գիտութեան օգտին համար:

«Եթէ կարենայի այս մարմինը լուալ ծծմբական թթուի մէջ՝ զայն ծածկող բոլոր հողէ ու կաւաքարէ պատեանը պիտի անհետանար, բայց դժբաղդարար, այդ լուծիչ թթուն չունիմ տրամադրութեանս տակ: Եւ սակայն աս դիակը իր գտնուած վիճակին մէջ իսկ պիտի ըսէ մեզ իր պատմութիւնը:

«Կը տեսնէք որ, շարունակեց հօրեղբայրս, վեց ստքէն աւելի բարձր չէ, և աւանդութեամբ կարծուած հսկաներէն շատ հեռու ենք: Յայտնի է որ այս մարդը կովկասեան ցեղէն է. մերձերձակ ցեղէն՝ գանկը կանոնաւոր հաւկթածե է, առանց այտերու ցցման կամ կղակի երկարումի, դիմային անկիւնը գրեթէ 90 աստիճան է, և նոյն իսկ աւելի հեռուներ երթալով պիտի համարձակիմ ըսել թէ Յարէթեան ցեղէն է ան՝ որ Հնդկաստանէն մինչեւ Եւրոպայի արեւմտեան կողմերու բնակչութիւնը ձեւացուցած է: Մի՛ խնդաք, պարո՛ններ:»

Խնդացող մարդ չկար, բայց հօրեղբայրս վարժուած էր ժըպտուն դէմքեր գտնելու իր դէմը հմտալից դասախօսութիւններու միջոցին:

«Այո՛, շարունակեց հօրեղբայրս նոր ոգեւորութեամբ մը, բրածոյ մարդ մըն է ասիկա, ժամանակակից այլակենդանիներու՝ որոնց սկերտաիքները կը լեցնեն սոյն ամփիթատրոնը: Չենք կրնար բացատրել թէ այս բրածոյները պարունակող հողերը ի՞նչպէս մինչեւ երկրիս այնքան խորերը սահեր իջեր են: Անշուշտ չորրորդական դարու մէջ ահագին յեղաշրջումներ տեղի ունեցած են երկրագնդին վրայ. մեր մոլորակը շարունակաբար պաղելով՝ կեղելը ճեղքուեցաւ, բացուեցաւ և բարձրագոյն հողերուն մէկ մասը բացուած խորխորատներուն մէջ սահեցան: Անձնական կարծիք մը չեմ յայտներ ես, բայց մարդը հոս է, շրջապատուած իր ձեռքովը պատրաստած գործիքներովը, կացիներովը, սրուած գայլախազերովը, որոնք գայլախազային դարը կը ներկայացնեն:



Վեցու ցիւնք այս մարմինը եւ քարի մը կոթնցուցիւնք

եւ եթէ այս մարդը իբր զբօսաշրջիկ կամ ինծի պէս իբր գիտութեան խուզարկու չէ եկած այս տեղուանքը, չենք կրնար կասկածիլ իր բնութեան վրայ:»

Դասախօսը լռեց, եւ ծափահարել սկսայ: Հօրեղբայրս իրաւունք ունէր, և ինձմէ շատ աւելի գիտուններ կարող չպիտի ըլլային հակախօսելու անոր: Ամէն մէկ քայլերնուս մէյմէկ հատ մարմինի կը հանդիպէինք: Մարդերու և կենդանիներու այս սերնդոց խառնուրդը ծանր խնդիր մը կը յարուցանէր մեր մտքին մէջ՝ որու լուծում մը գտնելու չէինք համարձակեր: Այդ մարդկային էակները մեռնելնու՞ն վերջը վար սահելով մինչեւ մեր գտնուած տեղը իջած էին թէ ո՛չ՝ Լիտէնպրօք ծովուն եզերքը ծնած, ապրած ու մեռած էին՝ իբր բնակիչներ երկրագունտիս: Մինչեւ հիմա կենդանի ձուկեր և ծովային հրէշներ տեսնք, մի-թէ տակաւին մարդկային էակ մը կը շրջէ՞ր սեր մօտերը:

ԱՊ.

Կէս ժամի չափ շարունակեցինք պտոյտնիս. հողը բոլորովին փոխուած էր. ոսկորներու դաշտը անհետացած և դիմացնիս կը բարձրանար անտառ մը՝ հասարակածային անտառներու բոլոր վեհութեամբը: Երբորդական դարու բուսաբերութիւնն էր աս իր բոլոր շքեղութեամբը. ահագին արմաւենիներ, սրունց տեսակը հիմա կորսուած է. շոճիներ, սրք կը ներկայացնէին կոնաբերներու տեսակները, իրար կապուած էին բուսային շուաններէ հիւսուած տեսակ մը ցանցով. մամուռէ թանձր խաւ մը կը ծածկէր գետինը. քանի մը գետակներ կը խոխոջէին շուքին մէջ. ասոնց եզերքին վրայ կը բարձրանային յաղթաբերձ պտերներ, Բայց բոլոր այս ծառերը, տունկերը, մամուռները մեր գիտցած անուշ կանաչ գոյնը չունէին, ամէնքը միասին թոռմած մութ գոյնի մը մէջ թաղուած կը մնային: Անթիւ անհամար ծաղիկները որոնք երբորդական դարու բուսաբերութեան մէկ յատկանիչն են, գունատ կը կախուէին ճիւղերն ի վտր, կարծես թէ գոյնը նետած թուղթէ շինուած ըլլային:



Հօրեղբայրս ու ես մտանք այս անառիկ մէջ: Փամանակի տե-
ւողութեան միջոցին փտած ու ինկած ծառերը կը թողուն որ
մինչեւ բաւական խորերը թափանցեն մեր ակնարկները: Կը տես-
նէի պարկճաւոր, շիկահերկային տունկերը որոնք աշխարհիս ա-
մեն տեսակ սրճացող կենդանիներու անունդն են: Աւելի հեռուն
կ'երեւէր, իրարու մէջ անցած ու իրար խառնուած՝ բոլոր այն
ծառերը որոնք երկրիս վրայ իրարմէ շատ տարբեր միջավայրերու
մէջ կ'աճին. կաղնին՝ արմաւենիին քով, Աւստրալեան անգալիթ-
թուր՝ Նորվեկիայ շոճիին կը կռթնէր, հիւսիսային ցարասին՝ Չե-
լանտական քօրէսին կը խառնէր իր ճիւղերը: Աշխարհիս ամենէն
ճարպիկ բուսաբանը պիտի անճրկէր այս անտառին բոյսերը դա-
սակարգելու:

Յանկարծ կանգ առի. հօրեղբօրս ձեռքը բռնեցի:

Տարտամ լոյս մը անտառին հեռաւոր մասերուն մէջ կը տա-
րածուէր և մենք կարող կ'ըլլայինք հոն անցած դարձածը տես-
նել: Կարծեցի տեսնել... Ո՛չ, իրօք աչքովս կը տեսնէի տհաճին
չուքեր որոնք ծառերուն տակ կը շարժուէին: Պտկաժանիներու
ահագին խուճը մըն էր սա որ սողին անդին կը թափառէր: Սոս-
կալի փիղեր՝ որոնց պատիճները օձերու պէս՝ ծառերուն մէջ կը
խշրտային: Վիթխարի ժանիքներուն՝ ծառի կոճղերուն զարնուե-
լու ձայնը կը լսէի. ճիւղերը կը ճարճատէին և աերեւներու ա-
հագին կոյտեր՝ այն գազաններուն կոկորդին մէջ տնջալով կ'ըլլային:

— Յառաջ երթանք, գոչեց հօրեղբայրս, գիտ ալ քաշելով,
յառաջ երթանք:

— Չէ՛, հօրեղբայր չէ՛, ետ դառնանք: Վրանիս գէնք չունինք
ի՞նչ կրնանք ընել այս ճիւղերու ջոկատին մէջ. և ո՛չ մէկ
մարդկային էակ կարող է գապել գանոնք:

— Եւ ո՛չ մէկ մարդ, ըսաւ հօրեղբայրս կտաճց ձայնով մը:
Կը սխալիս Ա.քսէ՛լ, նայէ՛, հոն նայէ՛. կենդանի էակ մը, մարդ
մը կը տեսնեմ հոն:

Սոսկալի բան, մենէ քառորդ մղոն մը հեռուն, մարդկային
էակ մը, Բրօթէ մը, Պիսիդոնի մէկ նոր գաւակր, ծառի ահագին
կոճղ մը ձեռքը առած, այս գաղաններուն հօտին վրայ կը հսկէր:

Այո՛, առաջուան տեսածնուս պէս գիտակ մը չէր ասիկա հսկայ

մըն էր՝ կարող այն պտկաժանիները վարելու: Հասակը 12 ոտքէն
աւելի էր, գլուխը՝ կովու գլխու չափ խաշոր՝ բարձր ճիւղերուն
մէջ կը կորսուէր:

Ապշած, քարացած, կեցած տեղերնիս դամուսած մնացինք:
Բայց փախչիլ պէտք էր, կրնար ըլլալ որ տեսնուէինք:

— Եկէ՛ք, եկէ՛ք, ըսի հօրեղբօրս թեւէն քաշելով:

Եւ առաջին անգամ ըլլալով դասախօսը թողուց որ զինքը ա-
ռաջնորդեմ:

Քառորդ ժամ մը ետքը ամէն վտանգէ զերծ էինք:

Հիմա՛ որ կրնամ հանդարտ գլուխով խորհիլ այդ դէպքին վը-
րայ, հիմայ որ, կ'ըսեմ, ամիսներ լանցնելով՝ կրնամ պաղարիւ-
նութեամբ դատել այդ երեւոյթը, հաւատալս չիգար: Չէ՛, տե-
սածս մարդ մը չէր. կապիկ մըն էր ան, մարդակերպ էակ մը,
նախնական դարերու մէջ ապրող քառաձեռնեանի մը մէկ տեսակը,
բայց մարդ մը չէր. երբէ՛ք չպիտի ընդունիմ թէ երկրիս ներ-
սերը մարդկային էակ մը կարենայ գոյութիւն ունենալ. կենդանի
վիճակի մէջ, և իրեն հետ՝ ամբողջ սերունդ մըն ալ:

Ինձի անանկ կուգար որ պտտած տեղերնիս անգամ մը արդէն
տեսած էի. ծովեղբքին ժայռերը, անոնց ձեւը, ինձի ծանօթ
կ'երեւնային: Սոյն կարծիքս հօրեղբօս հաղորդեցի:

— Ճիշդ մեկնած կէտերնուս վրայ չհնք ինկած, ըսի, Կըս-
իւպէնի նաւահանգիստէն քիչ մը հեռուն կը գտնուինք. եթէ քիչ
մըն ալ վար երթանք, գուցէ Հանսի՛ լսուտը շինած խորշին մէջ
գտնենք ինքզինքնիս:

— Ո՛չ, Ա.քսէլ, ես բնաւ մեր ձգած հետքերէն բան մը չտեսայ:

— Բայց ես կը տեսնեմ կոր, գոչեցի, գետինը ինկած առար-
կայի մը վրայ իյնալով և զայն վերցնելով:

— Ի՞նչ է ասիկա:

— Տեսէ՛ք...

Եւ՝ հօրեղբօրս ցցուցի ժանգոտած դանակ մը:

— Հա՛, ըսաւ, դո՞ւն մէկտեղ բերեր էիր այդ դանակը:

— Բայց ո՛չ, ես ասանկ բան չէի առած հետս,

— Ո՛չ ալ ես, պատասխանեց հօրեղբայրս:

— Չարմանալի՛ բան:

— Բայց ո՛չ, Աքսէլ: Հոլանտացիները ճիշդ ասանկ դանակներ կը գործածեն, կարելի է Հանսի կը պատկանի այդ:

— Ո՛չ, ըսի, Հանս ասանկ զէնք բնաւ չունէր վրան:

— Արդեօք նախաջրեհեղեան մարդու մը զէնքն է, գոչեցի մէկէն, բայց ո՛չ, այդ ալ կարելի չէ. այս դանակը պողպատէ շինուած է և ո՛չ թէ քարէ կամ պղինձէ:

— Կեցի՛ր Աքսէլ, ըսաւ հօրեղբայրս հանդարտ ձայնով մը. այդ դանակը տասնըվեցերորդ դարու զէնք մըն է, զոր ազատորդիներ մէջքերնին կը կրէին. սպանիական ծագում ունի ատիկա: Ո՛չ ինձի, ո՛չ քեզի, ո՛չ Հանսի և ո՛չ ուրիշ ո և է մարդկային էակի կը պատկանի:

— Բայց մինակը չեկաւ անշուշտ հոս, ինքնիրենը չծռեցաւ այսպէս. մենէ առաջ մէկը հոս եկած է:

— Այո՛, մէկ մարդ մը միայն:

— Ո՞վ է ատիկա:

— Եւ այդ մարդը իր անունը քանդակած է այս դանակով ժայռի մը վրայ: Փնտռե՛նք, Աքսէլ, փնտռե՛նք:

Վերջապէս հասանք անանկ տեղ մը ուր ծովափը նեղնալով ջուրերը կուգային գրեթէ կրանիթէ պատերուն ստքը թրջելու: Այս հսկայ պատին մէջ մուտք նրբանցք մը կը բացուէր և մուտքին ճակատը քարին մէջ կը տեսնուէր

Ա. Ս.

— Ա. Ս., Արն Սաքնիւսէմ, գոչեց հօրեղբայրս, միշտ Արն Սաքնիւսէմ:

Ո.

Սոյն ուղեւորութեան սկիզբէն ի վեր շատ զարմանալի բաներ տեսայ, բայց կրնամ ըսել թէ ժայռին մէջ քանդակուած այս երկու գիրերը զիս ամենէն աւելի ապշեցուցած էին: Չէ թէ մինակ

գիրերը կը տեսնէի, հապա գանոնք փորագրող գործիքը ձեռքերուս մէջ էր: Կասկած չկար որ մենէ առաջ ուրիշ մը փորձած էր միեւնոյն ճամբորդութիւնը և մեր գտնուած տեղը հասած:

Առանց ժամանակ կորսնցնելու ետ դարձանք և ելեքտրական լապտերնիս և ուրիշ գործիքներ առնելով եկանք լաւ մը զննելու այդ ներքնուղին: Ասիկա՛ կարծր ժայռին մէջ փորուած 5 ոտք տրամագծով կլար խողովակի պէս բան մըն էր, գետինէն շատ բարձր չըլլալուն դիւրուէր կրցանք մէջը մտնել: Հազիւ տասը քայլ առած էինք ճամբանիս կտրեցաւ, դիմացնիս պատ մը կը բարձրանար: Այլ կողմին նայեցայ, ձախին նայեցայ, տակէն փորձեցի, և ո՛չ մէկ կողմէն անցք մը կար:

— Չէ՛, գոչեցի գրգռուած ձայնով մը, չէ՛, Սաքնիւսէմի ասկէ անցած ժամանակը այս ժայռը հոս չէր, ճամբան բաց էր, հտքէն մագնիսական կամ հրաբխային պատճառներով հսկայ փակոցը ինկեր գոցեր է ուղին: Պատահական արգելք մըն է աս և ոչ ուրիշ բան, և եթէ չկարհնանք զայն վերջնել՝ Երկրիս կեդրոնը հասնելու անարժան պիտի ըլլանք:

Այս խօսքերը ըսած ժամանակս՝ հօրեղբորս հոգին իմ մէջս էր անցեր կարծես. անցեալը մոռցեր էի և սպազային հոգ չէի ընէր. երկրագունտիս վրայ ա՛լ ինձի համար բան մը գոյութիւն չունէր. ո՛չ քաղաքները, ո՛չ դաշտերը, ո՛չ, ո՛չ ֆէօնիկզթկրաս, ո՛չ իսկ Կրաիւպէնը:

— Լա՛ւ, ըսաւ հօրեղբայրս, բրիչով կոտրտելու է:

— Շա՛տ դժուար կ'ըլլայ, պատասխանեցի. վառօդ ունինք հետերնիս, անով փշրենք այս քարի կտորը:

Հանս արդէն եկեր մեզի միացեր էր, շուտով մը ետ դարձաւ և պէտք եղած գործիներն ու վառօդը բերաւ:

Որսորդը սկսաւ ժայռին մէջ ծակ մը պեղել, իսկ հօրեղբայրս ու ես երկար պատրոյգ մը շինելու զբաղած էինք:

Կէս գիշեր եղեր էր արդէն, վառօդը բացուած ծակին մէջ լեցուցինք, և պատրոյգը գրինք:

— Երթանք հանգչի՛նք, ըսաւ հօրեղբայրս:

ԽԱ.

Յաջորդ օրը, Օգոստոս 27, հինգշաբթի, նշանաւոր օր մը եղաւ մեր այս ստորերկրեայ ճամբորդութեան համար:

Ժամը 12ին ամէնքս ելեր էինք:

Խնդրեցի որ պատրոյգին կրակ տալու պատիւը ինծի թողուն: Այս գործողութիւնը կատարելէս անմիջապէս ետքը պիտի երթայի լաստին վրայ ընկերներուս միանալու և եզերքէն հեռանալով դէպ ի ծովուն բացերը պիտի երթայինք: Պատրոյգը 10 վայրկեանի չափ պիտի այրէր և այսքան ժամանակը բաւական էր ինքզինքնիս ապահով տեղ մը դնելու:

Թեթեւ նախաճաշէ մը ետքը հօրեղբայրս ու Հանս լաստը ելան, ուր արդէն տեղաւորուած էին բոլոր կարասիներնիս:

— Գնա՛. տղաս, ապապրեց հօրեղբայրս, բայց շուտով ետ դարձիր:

— Հանգի՛ստ եղիք, հօրեղբայր:

Գետնուղիին մէջը հասայ, լապտերս բացի և պատրոյգը բռնկեցուցի: Յետոյ շուտ մը լաստը մտայ ու եզերքէն բաւական հեռացանք: Հօրեղբայրս, ժամացոյցը ձեռքը վայրկեանները կը համրէր. «Տակաւին հինգ վայրկեան, չորս... երեք... երկու... մէկ... փլէ՛ք լեռներ»:

Ի՞նչ տեղի ունեցաւ: Պայթումին աղմուկը չիմացայ, բայց ժայռերուն տեսքը փոխուեցաւ յանկարծ աչքերնուս առջեւ: Կրանիթը բացուեցաւ վարագոյրի մը պէս և կրցայ նշմարել անչափելի անդունդ մը որ կը բացուէր ցամաքին մէջ իսկ: Ծովը անագին ալիք մը ձեւացուց՝ որու կոնակը կը բարձրանայինք ուղղաձիգ: Երեքս ալ տապալկեցանք, վայրկեան մը կարծեցի թէ գահավէժի մը մէջ կը գլորինք, բայց այնպէս չէր: Հակառակ մութին, շքեղ կոցին, զգացած սարսափիս, հասկցայ անցած դարձածը: Ճամբանիս կտրող ժայռին ետեւը անագին անդունդ մը ըլլալու էր, պայթումին ցնցումէն գետինը ձեղքուելով ծովուն ջուրը դէպ ի հոն կը խուժէր, մեզի ալ միասին տանելով:



Յետոյ շուտ մը լաստը մտայ եւ եզերքէն հեռացանք

Ամէն բան լմնցած կարծեցի:

Ժամ մը, երկու ժամ, ի՛նչ գիտնամ, անցան: Երեքս, արմուկ արմուկի սեղմելով անշշուկ կը մնայինք, կրցածնուս չափ ուժով լաստին կառչելով. որովհետեւ շատ արագ կը յառաջանայինք և եթէ վայրկեան մը տկարանայինք ալիքներուն մէջ կորսուած էինք:

Հանս ինքզինքը ժողվելով, կարող եղաւ վերջապէս ելեքտրական լապտերներուն մին վառել: Անող դողդոջ լոյսով կրցանք քիչ մը չորս կողմերնիս դիտել. բաւական լայն գետնուղի մը մէջ էինք, լաստը դառնալով կը յառաջանար՝ գրեթէ ժամը 30 մղոն արագութեամբ մը:

Ժամերը կ'անցնէին և մեր կացութիւնը չէր փոխուէր:

Պայթուածի վայրկեանին լաստին վրայէն ամէն բան ծովը թափած էր. մինակ կողմնացոյց մը, ժամացոյց մը և չոր միսի կտոր մը կը մնային, մնացեալ բոլոր ուտելիքներն ու գործիները կորսուած էին:

Վիճակնիս սոսկալի էր, լապտերին տարտամ լոյսը մարելու վրայ էր: Տղու մը պէս վախցայ և մութը մնալս չտեսնելու համար աչքերս փոցեցի: Սկարծես արագութիւնը կը կրկնապատկուէր, կ'եռապատկուէր, ա՛լ ջուրին վրայ չէինք սահեր՝ վար կ'իյնայինք անդունդին մէջ:

Յանկարծ ջուրի թաթառ մը, հեղուկ սիւն մը ողողեց մեզի. եթէ Հանս ու հօրեղբայրս զիս չբռնէին՝ ծովուն մէջ՝ կորսուած էի: Ա՛լ չգիմացայ, զգայազերկ եղեր էի:

ՍՔ.

Կարծեմ գիշերուան ժամը չորս կար, երբ ինքզինքս գոայ. առաջին զարմացած բանս եղաւ չորս կողմը տիրող լուսութիւնը: Հօրեղբորս ձայնը կարող եղայ լսելու:

— Աքսէ՛լ, վեր կ'ելենք կոր:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, փոչեցի:

— Այո՛, վեր կ'ելենք կոր:

Ձեռքս դուրս երկնցուցի, պատին զարնուելով արիւնեցաւ :
Սոսկալի արագութեամբ մը վեր կը բարձրանայինք կոր :

— Եղածը հասկցայ, յարեց հօրեղբայրս, ջուրը անդունդին մէջ լեցուելով՝ հիմայ իր բնական բարձրութեանը կ'իլլէ :

— Հիմա քանի մը գրկաչափ նեղ հորի մը մէջ կը շարժինք, և եթէ չեմ սխալիր ժամը Յուկէս մղոնէ աւելի տեղ կը բարձրանանք կոր : ասանկով բաւական վեր պիտի ելլինք :

— Այո՛, բայց կրնայ ըլլալ որ այս հորին բերանը գոցուած ըլլայ, և օդը երթալով ճնշուի, այն ատեն . . . :

— Ա.քսէլ, ըսաւ հօրեղբայրս հանդարտ ձայնով մը, կացու թիւննիս բոլորովին յուսահատական է, բայց եթէ ամէն վայրկեան կրնայ ըլլալ որ կորսուինք, նոյնպէս ալ կրնայ ըլլալ որ ամէն մէկ վայրկեան ազատման ճամբայ մը բացուի մեր առջեւ, ուստի առիթէն օգուտ քաղինք :

— Ի՞նչ ընենք :

— Ուժերնիս տեղը բերելու համար լաւ ճաշ մը ընենք :

— Ի՞նչ կայ որ ուտենք :

Հօրեղբայրս չհասկցողի մը պէս երեսս կը նայէր :

— Ամէնը կտոր մը չոր միս ունինք ուտելու, ըսի :

— Լաւ, Ա.քսէլ. եթէ այդ կտորը պահենք, մինչեւ ետքը անօթի չի՞ պիտի մնանք միթէ :

— Այո՛, բայց եթէ հիմակ ուտենք, չէ՞ մի որ քանի մը ժամ վերջը միեւնոյն կացութեան մէջ պիտի իյնանք :

— Լա՛ւ, ըսաւ հօրեղբայրս անհամբերութեամբ, նախամեծար կը սեւեմ հիմայ իսկ ուտել զայն, գէթ տակաւին քիչ ատեն բոլոր ուժս վրաս պիտի ըլլայ :

— Աղէ՛կ, աղէկ, ըսի, ճաշենք :

Անշուկ ճաշ մը եղաւ այս վերջին կերակուրնիս. երեքս ալ առանց ախորժակի կերանք և շուտով մը լմնացցինք մեր բաժինը : Անկէ ետքը ամէն մէկը իր խորհրդածութեան մէջ թաղուեցաւ. Ի՞նչ կը խորհէր արգեօք Հանս, շիտակը կարելի չէ բան մը ըսել : Ես ոչ ներկային, ոչ ալ ապագային վրայ կը խորհէի, անցեալը կը գրաւէր ամբողջ միտքս : Մարթա, կրախպէն՝ զոր այլ եւս չպիտի տեսնէի, Քէճնիկը թրասի տունը՝ երազի մը պէս կ'ան-

ցնէին երեւակայութեանս առջեւէն : Իսկ հօրեղբայրս՝ ձեռքը ջահ մը առած մեզ շրջապատող ժայռերը կը քննէր :

— Հրաբխային կրանիթ, կ'ըսէր, տակաւին միշտ նախնական շրջանին մէջ ենք, բայց շարունակ վեր կ'ելլենք կոր, ո՞վ գիտէ . . . :

Ո՞վ գիտէ . . . տակաւին կը յուսար :

— Հիմա, կը շարունակէր քիչ մը ետքը, ահա կնէյսը . . . միքաշիսթ . . . յետոյ պիտի գայ փոխադրական հողերը և յետոյ . . . :

— Ի՞նչ ըսել կ'ուզէր արգեօք : Տաքութիւնը երթալով աւելնալու վրայ էր. անանկ որ եղաւ վայրկեան մը ուր սոխալուցանք վերարկունիս ու բաճկաննիս հանել. ալ անտանելի կը դառնար :

— Արգեօք հրաշէկ կեզրոնի՞ մը կը մօտենանք հարցուցի :

— Անկարելի է, պատասխանեց հօրեղբայրս, կարելի բան չէ :

— Բայց պատերը սոսկալի կերպով տաք են :

Երբ այս կ'ըսէի, ձեռքս մեքենաբար ջուրին մէջ թաթխեցի և շուտով ետ քաշեցի :

— Ջուրը կ'եռայ կոր, գոչեցի :

Հօրեղբայրս բարկութեան շարժումով մը միայն պատասխանեց : Այն ատեն ուղեղս շփոթեցաւ : Գողափտար մը, տարտամ ու անորոշ, միտքս գրաւեց, քանի կ'ուզէի անոր վրայ չխորհիլ, այնքան աւելի իմացականութիւնս կը լեցնէր այն : Ելեքտրական երեւոյթ մը պատրաստուելու վրայ էր : յետոյ այս սոսկալի տաքութիւնը, եռացեալ ջուրը . . . : Ուզեցի անգամ մը կողմնացոյցը աչքէ անցնել :

Գործիքը խեցեցեցէր էր : Մագնիսացած ասեղը անկանոն կերպով մէկ բեւեռէն միւսը կը ցատքէր :

Գիտէի որ, ամէնէն ընդունուած տեսութիւններու համաձայն, երկրիս հանքային կեղեւը բնաւ հանդարտ վիճակի մը մէջ չի մնար : Ներքին նիւթերու տարրազգրութենէն յառաջ եկած փոփոխութիւնները, ահագին հեղուկ հոսանքներու արտադրած շարժումները, մագնիսական ներգործութիւնները միշտ կը դղրդեն այդ կեղեւը : Անշուշտ այս տեսութիւնները միտք բերելով մարդուն վախնալը չիգար, բայց այս բաներուն վրայ մտածելով հանդերձ երբ ուրիշ քանի մը երեւոյթներ ալ դիտեցի, ունեցած սոսկուժս չափազանցութեան աստիճանին հասաւ : Լսուած աղմուկ-

ները իրարու կը յաջորդէին միշտ և շարունակական որոտումի մը գաղափարը կուտային: Յետոյ աւրուած կողմնացոյցը որ ելեք-տրական երեւոյթի մը արգասիքն էր՝ աւելի եւս ամրացուց զիս իմ գաղափարիս մէջ: Հանքային կեղեւը խորտակուելի կ'սպառնար, կրանիթէ գանգուածը քակուելու երեւոյթ ունէր, ճեղքը պիտի գոցուէր, պարապուծիւնը լեցուէր, և մենք՝ խեղճ հիւլէներս՝ այս դիւային իրարանցումին մէջ պիտի փշրուէինք:

— Հօրեղբայր, գոչեցի սարսափահար, հօրեղբայր, կորսը-ւեցանք:

— Նորէն ի՞նչ կը վախնաս կոր, ըսաւ խիստ հանդարտ ձայնով, ի՞նչ կայ:

— Տեսէ՛ք, պատասխանեցի, սա դղրդող պատերը, տիրած սոսկալի ջերմութիւնը, եռացող ջուրը, այս շողիները, աւրուած կողմնացոյցը՝ ամէն ինչ երկրաշարժի մը նշաններն են:

— Հօրեղբայրս կամաց մը գլուխը շարժեց:

— Զաւա՛կս, կարծեմ՝ կը սխալիս, ասիկա երկրաշարժ մը չէ:

— Հապա ի՞նչ է:

— Ես՝ ատկէց աւելին գուշակեցի, հրաբուխի ժայթքում մըն է:

— Հրաբո՞ւխ մը, ըսել է հրաբուխի մը խառնարանը տանող ճամբուն մէջ կը գտնուինք:

— Այո՛, ըսաւ հօրեղբայրս ժպտելով, և ասից աւելի յաջող բանի մը չէինք կրնար սպասել: Այո՛, աւելցուց հանդարտ երեւոյթով մը, երկրիս երեսը ելլելու միակ ճամբան այս մնաց մեզի:

Չպիտի խօսիմ հազարումէկ գաղափարներուս վրայ որոնք մտքիս մէջ կը խժային, այո՛, հօրեղբայրս իրաւունք ունէի. ուրիշ ազատումի հնարք չկար մեզի:

Ակնեւեւ էր թէ հրաբուխի մը ճամբուն մէջ էինք. եռացող ջուրին տակ կը նշմարէի լաւայի գանգուածը որ խառնարանէն դուրս ելած ժամանակ ամէն կողմ պիտի տարածուէր: Այս անգամ Մնէֆէլի պէս մարած հրաբուխի մը հետ չէր գործերնիս, հապա ամբողջ գործունէութեան մէջ եղող լեռան մը հետ: Կը մտածէի թէ ո՞ր խառնարանէն դուրս պիտի նետուէինք:

Կողմնացոյցը աւրուելէ առաջ՝ Սաքնիւսէմի հրուանդանէն մեկ նեղուս ի վեր, հարիւրաւոր փարսախներ զէպի հիւսիս նետուե-



Հրաբուխի ժայթքում մըն է

ցանք: Արդեօք նորէն Իսլանտայի տաճկը վերագարձանք: Հեք-
լայի և կամ նոյն կողմին ուրիշ եօթը հրաժայթք բերաններուն
մէկէն դ՞ուրս պիտի ելլէինք:

Դէպի արեւմուտք, հինգ հարիւր մղոն հեռաւորութեան մէջ,
նոյն զուգահեռականին տակ, Ավերիկայի հիւս. արեւմտեան դեռ
գրեթէ անձանօթ հրաբուխներ կային: Արեւելեան կողմը՝ լայնու-
թեան ու թսուկերորդ աստիճանին տակ մէկ հրաբուխ մը միայն
գրաէի, այն է Էսք, Սրիցպէրկէ քիչ հեռու գտնուող կղզիի մը մէջ:

Հաստը քշող արագութիւնը երթալով կը շատնար, տաքու-
թիւնը կը կրկնապատկուէր. մեզի իբր ճամբայ ծառայող ներք-
նուղին երթալով կը լայննար և չորս կողմէն ուրիշ անցքեր ալ կը
բացուէին, ուրկէ բոցեր դուրս ժայթքելով պատերը կը լիզէին:

— Տեսէ՛ք, հօրեղբայր, տեսէ՛ք:

— Ի՞նչ կայ, ծձմբային բոցեր են. հրաբուխներու մէջ բնա-
կան բան մըն է:

— Հապա եթէ մեզի շրջապատեն, շնչահեղձ ընեն:

— Մի՛ վախնար, Աքսէլ, չի՞ տեսներ, ճամբան միշտ կը
լայննայ. եթէ հարկ ըլլայ, կրնանք լատը թողուլ և ճեղքի մը
մէջ ապաստանիլ:

— Հապա ջուրը որ միշտ կը բարձրանայ:

— Ա՛լ ջուր չկայ, Աքսէլ, տես, ամբողջ լաւայի զանգուած
մըն է որ մեզի կը կրէ և որ մինչեւ հրաբուխին բերանը պիտի
տանի:

Իրաւ ալ ջուրի սիւնը բոլորովին աներեւութացի էր և անոր
տեղ բաւական թանձր նիւթ մը կ'եռար: Տաքութիւնը չափէն
աւելի սաստկացի էր. ջերմաչափ մը գրեթէ 70 աստիճանի պիտի
հասնէր. եթէ վեր ելլելու արագութեան յառաջ բերած զովու-
թիւնը չըլլար շատոնց շնչահեղձ կ'ըլլայինք: Առտուան ժամը Ցին
ատենները լատը մէկէն ի մէկ կանգ առաւ:


— Ա՞ն ինչ է, գոչեցի յանկարծական տատանումէն ցնցուելով:

— Դադար մը:

— Հրաբուխը կը հանդարտի՞ կոր:

— Յուսամ թէ ոչ:

Ոտքի ելայ չորս կողմը նայելու համար թէ արդեօք լատը



տեղ մը կը կառչի՞: Բնաւ անանկ չէր: Ամբողջ լավայի զանգուածը մեզի հետ կանգ առեր կեցեր էր:

— Արդեօք բորբոքումը կը դադրի՞:

— Հա՛, ըսաւ հօրեղբայրս սկուաները սեղմելով, կը վախնամս կոր, տղաս. բայց հոգ մի՛ ըներ. ահա հինգ վայրկեան է որ կանգ առեր ենք. քիչէն կրկին ճամբայ պիտի ելլենք:

Խօսելով հանդերձ, հօրեղբայրս ժամացոյցը աչքէն չէր հեռացներ: Քիչ մը ետքը լսատն արագ ու անկանոն շարժումէ մը բռնուելով սկսաւ յառաջանալ գրեթէ տասը վայրկեանի չափ ու նորէն կանգ առաւ:

— Աղէ՛կ, ըսաւ հօրեղբայրս, տասը վայրկեանէն նորէն ճամբայ պիտի ելլենք. ընդհատ հրարուիս մըն է այս:

Իրաւ ալ տասը վայրկեան ետքը նորէն սկսաւ և նոյնչափ ժամանակ տեւեց: Որչափ որ միտքս շարչրկեցի, չկրցայ բացատրութիւն մը գտնել այս երեւոյթին, մինտկ սա չափին վստահ էի որ բուն իսկ հրարուիսին ճամբուն մէջ չէինք, հապա քովտի անցքի մը մէջ: Ուղեղս ա՛լ յոգնած էր բոլոր այս հակահարուածներէն. դատողութիւնս գրեթէ կորսնցուցած էի. ի վերջոյ անզգայ վիճակի մը մէջ ինկայ. գրեթէ տարտամ գաղափար մը պահելով շուրջս անցած դարձածներէն: Վերջին անգամ Հանսի դէմքը տեսայ, տմոյն փոցերով շրջապատուած և ինքզինքս բոլորովին կորսնցուցի:

ՊԳ.

Երբ աչքերս բացի, արեւին լոյսը, զոր երկար ատենէ ի վեր կարօտցեր էի, զիս կը շլացնէր. Հանսի ձեռքը զգացի որ մէջքէս էր բռնէր, իսկ միւս ձեռքով՝ քաջարի որսորդը՝ հօրեղբայրս կը վերցնէր: Թէեւ վիրաւորուած չէի, սակայն բոլորովին պարտասարեկ էի: Խառնարանէն դուրս նետուելով լեռան կողին վրայէն վար գլորած ժամանակս՝ Հանս բռներ էր զիս և ստոյգ մահէ մը զատեր:



Մարգերե աւելի արբեր կենդանիներու երեւոյթ ունեիճճ

— Ո՛ւր ենք հարցուց հօրեղբայրս, կարծես նեղանալով՝ երկրիս երեսը համներուն:

— Իսլանտայի ցամաքին վրայ, ըսի:

— Նէյ, պատասխանեց որսորդը, գլուխը օրօրեւով:

— Ի՞նչպէս չէ, գոչեցի տեղէս վեր ցատքելով:

Փոխանակ յաւերժական ձիւնով ծածկուած գազաթ մը տեսնելու, ինչպէս որ ըլլալ պէտք էր Իսլանտայի նման կղզիի մը համար, ճամբորդ ընկերներս ու ես արեգակի կիզիչ ճառագայթներուն տակ այրող լեռան մը վրայ կը գտնուէինք:

Մեր գլխուն վերեւ, առ առաւելն 500 ոտք բարձրութեան մը մէջ հրաբուխի մը խառնարանը կը բացուէր, ուրկէ քառորդ ժամը անգամ մը բոցէ սիւն մը կը ցայտէր՝ սաստիկ պայթիւնով մը և իրեն հետ կը բերէր չեչաքարի, մոխիրի և լաւայի կոտոր: Ասկէ վար՝ խիստ ցից գառիթափի մը վրայ հրաբխածէտ նիւթերը կը տարածուէին մինչեւ 7-800 ոտք խորութեան մը մէջ: Լեռան խարխիսը կը կորուէր կանաչազարդ ծառերու պսակի մը մէջ: Քանի մը մղոն տարածութիւն ունեցող կղզիի մը վրայ կը գըտնուէինք, բայց աշխարհիս ո՞ր մասին վրայ ինկած էինք:

— Ասիա հասած ենք, գոչեցի երեւակայութեանս գրգռումին տակ, Հնդկաստանի եզերքին վրայ, Մալայեան արշիպելագոսին մէջ:

— Հապա կողմնացոյցը, ըսաւ հօրեղբայրս, միշտ հիւսիսը ցոյց կուտար մեր բռնած ուղղութեան մէջ. կարելի չէ որ այս գործիքը սխալի:

Կրնայ ըլլալ որ հիւսիսային բեւեռ հասած ըլլանք:

— Ո՛հ, ո՛չ:

Բաւական ժամանակ այսպէս՝ երեւակայութիւններնու ծնունդ տուած գաղափարները իրարու կը յայտնէինք երբ հեռուէն նըշմարեցինք տղայ մը: Ստահակը մեզ տեսածին պէս փախչիլ սկսաւ. և իրաւունք ալ ունէր, որովհետեւ կիսամերկ, խանձած վիճակնուս մէջ մարդերէ աւելի տարբեր կենդանիներու երեւոյթ մը ունէինք. սակայն Հանս ետեւէն վազեց ու բռնեց: Հօրեղբայրս ալ հասաւ և հարցապնդումը սկսաւ:

— Սյո լեռան անունը ի՞նչ է բարեկամս, հարցուց ուսուցչապետը գերմաներէն:



Տղան չպատասխանեց. հօրեղբայրս նոյն խօսքը կրկնեց անգլիերէն. սակայն պատանին միշտ նոյն լուծիւնը կը պահէր: Իտալերէնը փորձենք, ըսաւ հօրեղբայրս և տղուն դառնալով.

— Dove noi siamo? հարցուց:

Տղան զարմացական երեւոյթ մը առաւ, յայտնի էր որ կը հասկնար, բայց չպատասխանեց:

— Թշուառակա՞ն, գոչեց հօրեղբայրս բարկութենէն փրթելով, պիտի խօսի՞ս. և ստահակին ականջէն բռնելով ցնցեց.

— Come si noma questa isola?

— Stromboli, պատասխանեց պզտիկը և պրծելով փախաւ:

— Սթրոմպօլի՞, գոչեցինք հօրեղբայրս ու ես միաբերան:

Ի՞նչ աղուոր, ի՞նչ հրաշալի ճամբորդութիւն մը ըրած էինք. հրաբուխէ մը մտած և հազար երկու հարիւր մղոն ճամբայ կտրելով ուրիշ հրաբուխէ մը դուրս ելած էինք:

Քիչ մը պտուղով ու ջուրով նախաճաշ մը ըրինք և դէպի կղզիին նաւահանգիստը ճամբայ ինկանք: Հօրեղբայրս միշտ կը մրմռար. «Բայց կողմնացոյցը, հապա կողմնացոյցը որ միշտ հիւսիսը ցոյց կուտար. ի՞նչպէս բացատրել ասիկա:

— Աձէնէն դիւրինը, հօրեղբայր, չբացատրելն է:

— Ի՞նչ ըսել է, ամօթ բան է որ Եօհաննէօմի ուսուցչապետ մը ջերմական երեւոյթ մը բացատրելու անկարող ըլլայ:

ԽԵ.

Սթրոմպօլիի ձկնորսները մեզի իբր նաւաբեկիաւորներ ընդունեցին և քանի մը օր ետքը, Սեպտեմբեր 4ին Վօլթիւրն շոգե-նաւով ճամբայ կ'ելլէինք դէպի Մարսիլիա, ուրկէ Համպուրկ հասանք 9 Սեպտեմբերին: Չեմ կրնար նկարագրել Մարթայի ապշուծիւնը և Կրաիւպէնի ուրախութիւնը:

— Հիմա որ դիւցազն մը եղար, ըսաւ գեղանի Վիրլանտուհիս, ա՛լ մեզմէ չպիտի բաժնուիս:



Լիսեկաբօֆ ուսուցչապետը

Եւ ուրախութեան արցունք կը թափէր:

Ա' երեւակայեցէք թէ մեր ժամանումը ի՞նչ աղմուկ հանեց Համպուրկի մէջ: Ծնորհիւ Մարթայի շատախօսութեան, մեր դէպ ի երկրիս կեդրոնը ճամբորդութեան լուրը ամէն տեղ տարածուեր էր, և ո՛չ մէկը ուզած էր հաւատալ. բայց Հանսի ներկայութիւնը և ուրիշ պարագաներ ամէն կասկած կը ցրէին: Այն ատեն հօրեղբայրս մեծ մարդ մը եղաւ. և ես ալ մեծ մարդու մը եղբորօրդին: Համպուրկ քաղաքը հանդէսներ սարքեց ի պատիւ մեզ և հօրեղբայրս ալ շատ մը բանախօսութիւններ ըրաւ մեր ճամբորդութեան պարագաներուն վրայ: Սաքսիսէմի ծածկագիրը՝ քաղաքին թանգարանին նուիրեց:

Եւրոպայի ամէն կողմերէն շատ գիտուններ հօրեղբորս տեսութիւնները պախարակել ուզեցին, սակայն դասախօսը գրիչ ու լեզու գործածեց իր կարծիքը պաշտպանելու համար:

Ես ալ իրեն տեսութիւնները չեմ կրնար ընդունիլ. իրաւ, կեդրոնական կրակի գոյութիւնը կասկածի տակ ձգող պղտիկ բաներ կան, բայց վստահ եմ որ այդ դժուարութիւնները կամաց կամաց պիտի հարթուին:

Բոլոր այս խնդիրներուն վառ միջոցին, հօրեղբայրս ամենամեծ վիշտ մը ունեցաւ. հակառակ իր պնդումներուն՝ Հանս կը մեկնէր իր երկիրը՝ Իսլանտան նորէն տեսնելու համար: Առտու մեկնէր իր երկիրը՝ Իսլանտան նորէն տեսնելու համար: Առտու մը «Յարվալ» ըսաւ, ձեռքերնիս սեղմեց ու ճամբայ ելաւ: Եթէ նորէն Հանս մեզ տեսնելու չիգայ, ես պիտի երթամ Ռէյքեափիք, անոր այցելութիւն մը տալու:

Իբր վերջաբան, պարտիմ ըսել թէ այս Ուղեւորութիւնը դեպ ի երկրիս կեդրոնը մեծ աղմուկ հանեց աշխարհի մէջ. ամէն լեզուով թարգմանեցին զայն, լրագիրները արտատպեցին, մեկնեցին, վերջապահեցին զայն, և Զօրեղբայրս իր կենդանութեանը իսկ կը ճեցին, պաշտպանեցին: Հօրեղբայրս իր կենդանութեանը իսկ կը վայելէր իրեն փառքը. մինչեւ անգամ Մր. Պարնըմ ելաւ առավարկելու որ ուսուցչապետին անձը զբամով ցուցադրէ Ամերիկայի մէջ:

Բայց բոլոր այս պատիւներուն մէջ Հօրեղբայրս հանգիստ չէր. գաղափար մը միշտ կը չարչրկէր իր ուղեղը. այդ է կողմնացոյցի խնդիրը: Վեց ամիսի չափ անցեր էր երբ օր մը հանածոյներու



հաւաքածոյ մը կարգի կը դնէի. այդ կողմնացոյցը անքիս զարկաւ. զարմանքէս չկրցայ աղաղակ մը գոպել. հօրեղբայրս վազեց եկաւ:

— Ի՞նչ կայ հարցուց:


— Տեսէ՛ք, այս կողմնացոյցը որ միշտ հիւսիսը ցոյց կուտար ճամբան, բեւեռները փոխած է եղեր: Հիմա մագնիսացած ասեղը հիւսիս նայելու տեղ դէպ ի հարաւ դարձած է:


— Այո՛, բայց ինչո՞ւ համար բեւեռները փոխուեցան:

— Երբ Լիտէնպրօք՝ ծովուն վրայ փոթորիկի բռնուեցանք, մեր մօտը պայթող գնտածեւ կայծակը յառաջ բերած ըլլալու է այդ երեւոյթը:

Հօրեղբայրս սկսաւ խնդալ: Ա՛լ անկէ ետքը դաստիսօտը՝ գիտուններուն ամէնէն՝ երջանիկն էր, իսկ ես՝ մարդերու ամէնէն երջանիկը, որովհետեւ՝ սիրելի կրօնակէս իր պաշտպանեալի դիրքը թողուցի՛րք ամուսին և քեռորդի կարգ առաւ տան մէջ:

Վ Ե Ր Զ







Ա Ջ Դ



Զարգարեան Գրատունը սկսած է հանրամատչելի գրքերով ներատարակել հայ եւ օտար հեղինակներու գործերը եւ ուրախ է յայտարարելու թէ՛ մինչեւ ցարդ 40 նասորներ հրատարակ հանած է գլխաւորաբար Խրիստեանի, Պետրոս Դուրեանի, Մկրտիչ Պեթիկբաւելեանի, Վիքթոր Հիւկոյի, Էմիլ Զօլայի, Եր. Օսեանի, Տօլստոյի եւն. գործերէն :

Ներկայ ժիւլ Վերնի գործը իր այս աժան գնով եթէ յաջողութիւն գտնէ, պիտի հրատարակուին հաւել. յաջորդ հեղինակէն յաջորդ հասորներ նոյն գնով :

Մեծախանակ գնողներու գոհացուցիչ զեղչ :

Դիմել՝

Զ Ա Ր Դ Ա Ր Ե Ա Ն Գ Ր Ա Տ Պ Ի Ն

Կ. ՊՈԼԻՍ, Զագմագներլար, թիւ 24—26

741

5012

0009713

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004713

